



Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ • ՓԵՏՐՎԱՐ • ՄԱՐՏ 2017



Հայր մեր այժմ կը նուիրենք նոր տարին քեզի.
Ինչ որ դուն բաշխես գիտենք, այն է միշտ բարին...
Եւ ինչ ալ այս նոր տարին մեզի ընծայէ,
Զու անունըդ պաշտելի, Հայր Փառաւորէ:

Հարգելի՛ բարեկամ

Սույն գրքույկում Աստվածաշնչի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվա-ծաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007 թ.), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավե-տարանական եկեղեցիների միության և Հայաս-տանի Աստվածաշնչային ընկերության հրատարա-կած Նոր Կտակարանից (2003 թ.):

Շապիկի առաջին էջին՝ Գոշավանք. Գոշավանքը միջնա-դարյան վանական համալիր է. XII–XIII դարերում եղել է հոգևոր ու մշակութային խոշոր կենտրոն: Գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղում՝ Գետիկ գետի աջ ափին:

Գոշավանք (Նոր Գետիկ վանք) անունը ստացել է 1213 թվականին՝ Մխիթար Գոշի պատվին, ով 1188-ին իշխան Իվանե Ջաքարյանի աջակցությամբ հիմնադրել է վանքը: Այն ունեցել է վարժարան, համալսարան ու ճեմարան, վանքում նաև ընդօ-րինակվել, գրվել և պահվել են բազմաթիվ ձեռագրեր:

Ըստ որոշ աղբյուրների Մխիթարն ու իր հետևորդները սկսել են վանքի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու շինարարությունը, հետո՝ 1191-ին, Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը: Գոշավանքի տարածքում կան գերեզմաններ, խաչքարեր մատուռներ: Վանական համալիրը հայ ճարտարապետական մտքի և շինարա-րական արվեստի նշանավոր օրինակներից մեկն է: Մեզ են հասել շինարարական վարպետներից երեքի անուն-ները՝ ճարտարապետ Մխիթար Հյուսնի, նրա աշակերտ Հովհաննեսի և անզուգական քարագործ վարպետ Պողոսի, որի ձեռագործ աշխատանքներից է Գոշավանքի նշանավոր խաչքարը: 1937-1978 թթ. Վանահամալիրի տարածքում կատարվել են մի շարք արեկարգություններ: (encyclopedia.am եւ armenianheritage.org)

Լուսնկարը՝ Արրահամ Բալաբանյանի
երևան

Երախտապարտ ապրել

Փափագելով առաջ ընթանալ իր հոգևոր կյանքում ու ավելի երախտապարտ լինել՝ Սուրբ սկսեց մի ծրագիր և այն անվանեց Երախտագիտություն կարաս: Նա ամեն երեկո մի կտոր թղթի վրա գրեց այն, ինչի համար կուզենար շնորհակալություն հայտնել Աստծուն, և նետեց կարասը: Մի շաբթյան օրեր շնորհակալ լինելու և փառք տալու շատ բան ունեք, այլ օրեր դժվարացավ նույնիսկ մեկ բան գտնել: Տարվա վերջին նա դատարկեց կարասը և կարդաց բոլոր գրածները: Եվ ինքն իրեն գտավ Աստծուն շնորհակալ լինելու վիճակում այն բոլոր բաների համար, որ արել էր Նա: Աստված պարզ բաներ էր տվել, ինչպես մի գեղեցիկ մայրամուտ կամ զով գիշեր այգում քայլելու, և ուրիշ առիթներով էլ Նա օգնել էր, երբ դժվարություններ էր ունեցել, կամ էլ պատասխանել մի աղոթքի:

Սուրբ գտածը ինձ հիշեցրեց այն, ինչ Դավիթը ասում է իր փորձառությունների մասին 22-րդ Սաղմոսում: Աստված իրեն բնակեցրել էր «գալար վայրերում» և «հանդարտ ջրերի մոտ» (Հմ. 3): Նա տվել էր առաջնորդություն, պաշտպանություն և հանգիստ (Հմ. 4-5): Դավիթը եզրակացնում է. «Ողորմությունը քո, Տե՛ր, պիտի հետևի ինձ կյանքիս բոլոր օրերին...» (Հմ. 7): Եկեք Երախտագիտության կարաս պատրաստենք այս տարի: Այդպես անելով կտեսնենք, որ շատ բաներ ունենք, որոնց համար պիտի շնորհակալություն հայտնենք Աստծուն:

Աղոթք - Սիրելի՛ Տե՛ր, անհաշիվ եմ քո տված օրհնությունները: Շնորհակալ եմ քո սիրո համար:

Երբ մտածես այն բոլոր բարի բաների մասին, Աստծուն փառք տուր շնորհակալ սրտով

Կարդա՛
Սաղմոս 22

Ողորմությունը քո,
Տե՛ր, պիտի հետևի
ինձ կյանքիս բոլոր
օրերին:

Սաղմոս 22.7

Կատարյալ պարզևր

Միացյալ Նահանգներում Ս. Ծնունդին հաջորդող շաբաթը տարվա ամենից զբաղված ժամանակն է, երբ մարդիկ վաճառված ապրանքները հտ են վերադարձնում: Մարդիկ վերադարձնում են իրենց տրված անցանկալի նվերները՝ փոխարենը վերցնելով այն, ինչ իրենք կուզենան ունենալ: Սակայն ոմանք տալիս են առիթին հարմար այնպիսի նվերներ, որոնք իսկապես ուրախացնում են մարդկանց, և պարտադիր չէ, որ դրանք նյութական լինեն, դա կարող է լինել ուրիշներին լսելու պատրաստակամություն կամ կարիքավորին օգնություն, ինչն ուրախացնում և զնահատանքի է արժանանում: Սա ճիշտ է ընտանիքի և բարեկամների համար: Իսկ ինչ վերաբերում է Աստծո՞ւն: Արդյոք կա՞ իմաստալից ու արժեքավոր որևէ բան, որ կարող ենք նվիրել Աստծուն:

Կարդա՛
Հոմ. 11.33 - 12.2

...ձեր մարմինները
ներկայացնեք
կենդանի զոհ՝ սուրբ
և Աստծուն հաճելի,
որ ձերբանական
ծառայությունն է:
Հոմ. 12.1

Հոմ. 11.33-36-ը փառաբանություն է երգ է, որ ուղղվում է Աստծուն իր իմաստության, գիտության և փառքի համար: Սրան հաջորդում է մի կոչ՝ մեր անձերը Աստծուն նվիրելու. «Արդ, Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրներ՛ր, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի զոհ՝ սուրբ և Աստծուն հաճելի, որ ձեր բանական ծառայությունն է» (12.1): Ըստ առաքյալի այս խոսքերի, փոխանակ համակերպվելու աշխարհին, մենք պետք է «նորոգվեն՛ք մեր մտքի նորոգությամբ...» (Հմ. 2): Երախտագիտությամբ, խոնարհությամբ և սիրով մեր անձերը, մեր սիրտը, միտքն ու կամքը ամբողջությամբ Նրան նվիրենք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ես Քոնն եմ: Քո բոլոր արածների փոխարեն ուզում եմ իմ անձը՝ սիրտս, միտքս ու կամքս խոնարհաբար ու շնորհակալ հոգով Քեզ նվիրել:

Լավագույն պարզևր, որ կարող ենք տալ Աստծուն, մեր անձն է:

Ո՛չ այնպես, ինչպես թվում է

Մի առավոտ Դոնը՝ հովվաշունը, որ ապրում է Շոտլանդիայի Հարավային Լանարքշիրի ագարակներից մեկում, իր տիրոջ՝ Թամի հետ մեքենաներից մեկը բարձրացավ գնալու և ստուգելու ագարակի արջառներին: Երբ տեղ հասան, Թամը մեքենայից ցած իջավ՝ առանց արգելակը սեղմելու: Դոնը վարորդի աթոռին նստած՝ մեքենան ըլուրից ներքև իջավ և երթևեկություններից երկու գծերը կտրելուց հետո ապահով կանգ առավ: Անցնող վարորդներին թվաց, թե Դոնը առավոտյան մեքենավարություն էր ելել: Իսկապես, երևույթներ կան, որ այնպես չեն, ինչպես թվում են:

Կարդա՛
Դ Թագ. 6.8-17

Մի՛ վախեցիր, քանզի մեծ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են:
Դ Թագ. 6.16

Այնպես էր թվում, թե Եղիսեեն ու իր սպասավորը ձերբակալվելու և Արամ թագավորի մոտ տարվելու վտանգի մեջ էին: Թագավորի զորապետները պաշարել էին քաղաքը, ուր Եղիսեեն մարգարեն ու իր սպասավորն էին ապրում: Մինչ սպասավորը հավատում էր, որ իրենք դատապարտված էին, Եղիսեեն ասաց. «Մի՛ վախեցիր, քանզի մեզ հետ եղողները նրանց հետ եղողներից շատ են» (Դ. Թագ. 6.16): Ու երբ Եղիսեեն ազոթեց, սպասավորը տեսավ, որ երկնային մի բազմություն էր իրենց կողքին կանգնած՝ իրենց պաշտպանելու: Անհույս թվացող պարագաները այնպիսին չեն, ինչպիսին մենք նրանց պատկերացնում ենք: Երբ մտածում ենք, թե Չախախտելի և անհույս վիճակում ենք, հիշենք, որ Աստված մեր կողքին է: Նա կարող է հրեշտակներին հրամայել, որ մեզ պահեն մեր բոլոր ճանապարհներին (Սաղմ. 90.11):

Աղոթք - Հզոր Աստված, Քո զորությունից մի նշույլ ցույց տուր ինձ այսօր: Օգնիր, որ տեսնեմ, թե Դու կամենում ես ու կարող ես օգնել ինձ ցանկացած պարագայում, որին ես դիմագրավում եմ:

Պարագաները միշտ ավելի լավն են, քան թվում են մեզ, եթե հիշենք, որ Աստված մեր կողքին է:

Բազմապատկված սեր

Երբ Քերընի եկեղեցու անդամներից մի կին ախտորոշվեց **ԵԱԼՍ** (մկանային կողմնային կարծրուկ) հիվանդությամբ, Հայտնի Lou Gehrig անունով, վիճակը ծանր էր: Այս դաժան ու ահավոր հիվանդությունը վնասում է մարդու ջղերը և մկանները՝ հասցնելով անդամալուծության: Այս տիկնոջ հոգածության համար պայմանները սահմանափակ էին: Ընտանիքի ունեցած ապահովագրությունը չէր բավականացնում տան ծախսերը ծածկելուն, և ամուսինն էլ պատրաստ չէր նրան ծերանոց ուղարկելու խորհուրդն ընդունել:

Քերընը հիվանդապահի իր մասնագիտության բերումով սկսեց կնոջ տուն գնալ և խնամել նրան: Շուտով նա հասկացավ, որ հնարավորություն չէր ունենալու իր ընտանիքի հոգսերը հոգալ, եթե շարունակեր իր բարեկամ կնոջով զբաղվել: Այդ պատճառով նա սկսեց սովորեցնել եկեղեցու այլ անդամների ևս՝ օգնելու հիվանդին ու նրա ընտանիքին: Հետագա յոթ տարիների ընթացքում, մինչ կինը շարունակում էր մնալ հիվանդ վիճակում, Քերընը երեսունմեկ կամավոր վարժեցրեց ու պատրաստեց, որոնք սիրով, աղոթքով ու հոգատարությամբ շրջապատեցին կարիքի մեջ գտնվող այս ընտանիքին: Հովհաննեսն ասաց. «Ով որ սիրում է Աստծուն, թող սիրի նաև իր եղբորն ու քրոջը»: Քերընը նման սիրո փայլուն օրինակ է տալիս մեզ: Պարզ է, որ նա ուներ կարողությունը, սերն ու տեսլականը՝ հավաքելու եկեղեցու մեծ ընտանիքը տառապող բարեկամի շուրջ: Իր սերը մեկ մարդու հանդեպ դարձավ բազմապատկված՝ արտահայտված շատերի կողմից:

**Կարդա՛ր
Ա Յովի. 4.20 - 5.5**
...ով Աստծուն սիրում է, իր եղբորն էլ սիրի:
Ա Յովի. 4.21

Աղոթք - Ո՛վ Տեր, օգնիր, որ ծառայեմ ուրիշերին իմ ունեցած տաղանդով ու կարողություններով: Ուղղորդիր ինձ, որ Քո կամքի համաձայն գործածեմ դրանք Քո թագավորության համար:

Սիրիր դրացուդ քո անձի նման: Դիտուս

Գերության մեջ Ս. Ծնունդ

Գերմանացի երևելի հովիվ վեր. Մարտին Նիմոլն բացահայտորեն Հիտլերին հակադրվելու համար մոտ ութ տարի անցկացրեց նացիստական համակենտրոնացման ճամբարներում: 1944-ի Ս. Ծնունդի նախօրյակին Նիմոլըըը հետևյալ հուսադրող խոսքերն ասաց Դախաուրի իր բանտակիցներին «Սիրելի՛ բարեկամներ, այս Ս. Ծնունդի առթիվ եկեք Աստծո օգնությունը խնդրենք Բեթղեհեմի մանուկի միջոցով, Նրա, որ մեզ մոտ եկավ մեր ծանր բեռները կրելու, և Աստված Նրա միջոցով կամուրջ հաստատեց իր եւ մեր միջև: Նրա այս արարքով վերից լույս ծագեց մեզ վրա»:

Կարդա՛ եսայի 9.1-7

Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս...: Ես. 9.2

Ս. Ծնունդի առթիվ ողջունում ենք բարի լուրը, թե Աստված դեպի մեզ է եկել ու կամրջել է տարածությունը մեր ու իր միջև: Նա լուսավորում է մեր խավար բանտը իր լույսով և վերցնում վշտի, հանցանքի ու մենությունն ծանր բեռները, որոնք ճնշում են մեզ վրա: Բանտի Ս. Ծնունդի այդ դժգույն գիշերը Նիմոլըըըը հայտնում է այս բարի լուրը. «Հրեշտակների չորս կողմը ծագող Տիրոջ փառքից մի շող պիտի ընկնի մեր խավարի վրա»: Նրա բառերը մեզ հիշեցնում են Եսայի մարգարեի սքանչելի խոսքը, որ մարգարեանալով ասաց. «Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում և մահվան ստվերների մեջ, լույս պիտի ծագի» (Ես. 9.2): Տեր Հիսուսը ուրախությամբ ու լույս է սփռում մեր խավար աշխարհի վրա:

Աղոթք - Տեր Հիսուս, մենք լույս և զորություն ենք գտնում գիտենալով, որ Քո լույսը շողում է խավարի մեջ, և խավարը չի կարող հաղթել նրան:

Ս. Ծնունդի ուրախությունը Հիսուսն Ինքն է:

Աշխարհին ուրախություն

Մինգապուրում կայացած Քրիստոնեական Հրատարակչական Համագումարի վերջին օրը 50 տարբեր երկրներից 280 մասնակիցներ հավաքվեցին պանդոկի բակում՝ խմբանկարի համար: Նկարիչը մի քանի նկար արեց շենքի երկրորդ հարկի պատշգամբի տարբեր անկյուններից և ասաց. «Վերջ, ավարտեցինք»: Խմբի միջից մեկը ձայնը բարձրացնելով ասաց. «Լավ, ուրեմն՝ աշխարհին ուրախություն»: Շուտով մեկ ուրիշը երգելով պատասխանեց. «Տերը եկավ»: Ու խումբը սկսեց երգել շատ ծանոթ «Ծա՛փ գարկ, աշխա՛րհ, ցնձա՛ այսօր» Ս. Ծննդյան երգը: Միասնականության և ուրախության անմոռանալի և հուզիչ պահ եղավ սա: Ղուկաս Ավետարանիչը իր գրի առած Ս. Ծննդյան պատկերի մեջ ներկայացնում է մի հրեշտակի, որ մանուկ Հիսուսի ծնունդը ազդարարում է՝ ասելով. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ ժողովրդինն է լինելու: Այսօր ձեզ Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է՝ Օծյալ Տերը» (Ղուկ. 2.10-11): Ուրախությունը միայն մի քանի հոգու համար չէր, այլ բոլորինն անխտիր: «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց...» (Հովհ. 3.16): Մինչ Տեր Հիսուսի՝ կյանք փոխող պատգամը բաժանում ենք ուրիշների հետ, միանում ենք համայն աշխարհի երգչախմբին՝ հռչակելով Նրա արդարության փառքն ու սիրո հրաշագործությունը: «Ծա՛փ գարկ, աշխա՛րհ, ցնձա՛ այսօր, ցնձա՛ եւ հավիտյան, քանզի ծնվեց հզոր Արքան»:

Կարդա՛ Ղուկաս 2.8-14

Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ ժողովրդինն է լինելու:

Ղուկ. 2.10

Աղոթք - Սիրելի՛ Հայր, տո՛ւր մեզ հավատքի աչքեր՝ տեսնելու բոլոր ազգերի ժողովուրդները որպես Քո շնորհի ու սիրո առարկա:

Հիսուսի Ծննդյան բարի լուրը ուրախության աղբյուր է ամբողջ մարդկության համար:

Մեր կարիքների աղբյուրը

2010-ի օգոստոսին աշխարհի ուշադրությունը Չիլիի Կոպյապո-Չյի հանքի վրա էր կենտրոնացած: Երեսուներեք հանքափորներ բանտարկվել էին 2300 ոտք խորություն ունեցող մոլթ գետնի տակ: Նրանք գտնվում էին հուսահատ վիճակում և վստահ չէին, որ իրենց օգնություն կարող էր հասնել: 17 օր սպասելուց հետո նրանք լսեցին գայլիկոնների ձայնը: Փրկարարները, երեք փոքր խողովակ բացելով, կարողացան նրանց ջուր, ուտելիք և դեղորայք հասցնել: Բանտարկված հանքափորները վստահեցին այդ խողովակներին, որոնց միջոցով փրկարարները կարողացան նրանց անհրաժեշտ իրերը հասցնել: 69-րդ օրը նրանք դուրս բերեցին վերջին հանքափորին:

**Կարդա՛ր
Մատթեոս 6.9-15**

Տեղը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն: Սաղմ. 144.18

Ոչ ոք չի կարող գոյատևել այս աշխարհում առանց իրենից դուրս գտնվող օգնության: Տիեզերքն արարող Աստված մեր բոլոր կարիքները հոգում է: Այդ հանքափորների խողովակների պես աղոթքը մեզ կապում է Աստծո հետ մեզ անհրաժեշտ օգնության համար: Տեր Հիսուսը մեզ հորդորում է աղոթել. «Մեր ամեն օրվա հա՛ցը տուր մեզ այսօր» (Մատթ. 6.11): Օրվա հացը մարդու հիմնական կարիքն էր, որով կարող էր ապրել ու գոյատևել: Հիսուսը մեզ սովորեցնում է աղոթել ոչ միայն մեր ֆիզիկական, այլև ամեն տեսակի կարիքների համար, ինչպես հանգիստը, բուժումը, քաջությունը, ուժը և իմաստությունը: Աղոթքով մենք հաղորդակցվում ենք Նրա հետ ցանկացած ժամանակ, և Նա գիտի, թե մենք ինչի անհրաժեշտություն ունենք՝ նախքան մեր խնդրելը (Հմ. 8): Ի՞նչ պատճառով ես դու տագնապում: «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն...» (Սաղմ. 144.18):

Աղոթք - Շնորհակալ եմք, Տեր, որ մենք կարող ենք Քեզ մոտենալ ամեն բանի համար: Սովորեցրու մեզ աղոթել և վստահել Քեզ:

Աղոթքը հավատքի ձայնն է՝ վստահ, որ Աստված գիտի և հոգ է տանում մեզ:

Ցած դիր բեռներդ

Մի մարդ գյուղի ճանապարհին իր բեռնատարը վարելիս տեսնում է մի կին, որ մի ծանր բեռ շալակած՝ քայլում էր: Կանգ առնելով՝ օգնություն է առաջարկում: Կինը, երախտագիտություն հայտնելով, բարձրանում է մեքենան:

Քիչ անց մարդը մի տարօրինակ բան է նկատում: Նստարանի վրա նստած՝ կինը շարունակում էր այդ ծանր բեռը ուսերին կրել: Զարմացած՝ մարդը խնդրում է. «Տիկի՛ն, ցած դիր բեռդ ու հանգստացիր. մեքենաս կարող է քեզ ու բեռդ տանել: Հանգի՛ստ առ»:

Մենք ի՞նչ ենք անում մեր վախի, մտահոգությունների, նեղության ու կարոտի բեռների հետ, որ կրում ենք մեր ուսերին կյանքի մարտահրավերները դիմադրավելիս: Փոխանակ Տիրոջով հանգստանալով՝ շատ հաճախ այդ կնոջ նման ենք վարվում ու շարունակում ենք կրել այդ բեռները, որոնք կարող ենք Հիսուսին հանձնել: Հիսուս ասաց. «Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28):

Մենք մեր բեռները կարող ենք ցած դնել, եթե դրանք Տիրոջը հանձնենք աղոթքով: Պետրոս առաքյալն ասում է. «Ձեր ամբողջ հոգսը Նրա վրա՛ գցեցեք, որովհետև Նա ձեզ համար հոգ է անում» (Ա. Պետ. 5.7): Քանի որ Նա մեզ համար հոգ է տանում, մենք կարող ենք հանգիստ առնել, մինչ սովորում ենք վստահել Նրան: Փոխանակ կրելու մեզ վրա ճնշող ծանր բեռները՝ կարող ենք Տիրոջը հանձնել դրանք և թույլ տալ, որ Ինքը կրի:

Աղոթք - Հոգնած եմ, Տե՛ր: Բեռներս Քեզ եմ հանձնում այսօր: Խնդրում եմ, վերցրու դրանք և կրիր իմ փոխարեն:

Աղոթքը այն տեղն է, ուր բեռները կրող ուսերը փոխվում են:

Կարդա՛ր
Մատթեոս 11.25-30

Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր հոգնածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ:

Մատթ. 11.28

Հին, բայց նոր

2014-ին Կենտուկիի Քորվեթ մեքենաների թանգարանում Չեքոսլովակիայից բացվելով ութ անփոխարինելի Շեվրոլետ Քորվեթ կուլ տվեց: Մեքենաները մեծապես վնասվեցին և դարձան անվերանորոգելի:

Մի մեքենա շատերի հատուկ ուշադրութունը գրավեց: 1992 թ. միլիոններովը պատրաստված այդ մեքենան հավաքածուի ամենաարժեքավորն էր: Ինչ որ պատահեց այդ մեքենայի՝ փոսից հանելու ժամանակ, աներևակայելի է: Մասնագետները ամբողջովին նորոգեցին այն. հակառակ այն բանի, որ այդ հատուկ մեքենան խիստ վնասված էր, ու կարծիք կար, որ հնարավոր չէ վերանորոգել, մասնագետներին հաջողվեց այն վերանորոգել: Այն այսօր այնպիսին է, ինչպիսին էր նախապես: Հինը և վնասվածը նորոգվելով նոր դարձավ: Սա շատ լավ օրինակ է, թե Աստված ինչ կարող է անել բոլոր հավատացյալների հետ Տեր Հիսուսի միջոցով: Հայտն. 21.1-ի մեջ Հովհաննես ասում է. «Տեսա նոր երկինք ու նոր երկիր...»: Աստվածաշնչի մեկնաբանները տեսնում են այս «նոր» երկիրը որպես վերանորոգված երկիր, որովհետև այս «նոր» բառի իրենց փնտրտուքը ցույց է տալիս, որ «նոր» նշանակում է «թարմ» կամ «վերանորոգված», հինը ամբողջովին վերանալուց հետո: Աստված պիտի նորոգի այն, ինչ աղավաղված է այս աշխարհում ու պիտի տա բոլորովին նոր տեղ, ուր հավատացյալները պիտի ապրեն Իր հետ: Ինչ սքանչելի ճշմարտություն. նոր, թարմացած, հարազատ ու գեղեցիկ մի երկիր:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք այս գեղեցիկ աշխարհի համար, ուր ապրում եմք, սակայն միաժամանակ ակնկալում եմք մի նոր երկիր, որ մեզ համար ես պատրաստել: Փառք եմք տալիս քեզ Քո սիրո համար, որ ունես մեր նկատմամբ:

Մեր Ստեղծիչ Աստված ամեն ինչ նոր է դարձնում:

Կարդա՛ր Հայտնություն 21.1-5

Եվ գահի վրա
Նստողն ասաց.
«Ահա ամեն բան
Նոր եմ անում»:
Հայտն. 21.5

Պատահական ազնիվ արարքներ

Ոմանք ասում են, թե ամերիկացի գրող էին Հերբերտը 1982-ին մի ճաշարանի սեղանի սփռոցի վրա արձանագրեց հետեւյալ խոսքը. «Պատահական ազնիվ եւ գեղեցկության անիմաստ արարքներ կատարիր»: Այս խոսքը ժողովրդականություն է վայելում եւ մտել է մեր բառամթերքի մեջ:

Սակայն հարց է մնում, թե ինչո՞ւ: Ինչո՞ւ պիտի մարդկանց հետ ազնիվ վարվենք: Այս հարցի պատասխանը հստակ է նրանց համար, ովքեր հետևում են Տեր Հիսուսին, ովքեր ցույց են տալիս Աստծո քաղցր շնորհն ու բարությունը:

Հին Կտակարանում ունենք մի գեղեցիկ օրինակ գաղթական մովաբացի Հռուբի պատմության հետ կապված: Օտարազգի Հռուբը ապրում էր մի երկրում, որի ո՛չ լեզուն գիտեր և ո՛չ էլ մշակույթին էր ծանոթ: Նաև չքավոր էր ու մարդկանց օգնության կարոտ:

Իսրայելցի մի մարդ շնորհով մոտեցավ և խոսեց Հռուբի սրտին (Հռուբ 2.13): Նա թույլ տվեց, որ Հռուբը աշխատի իր արտում, սակայն այդ բարեգործությունից ավելի նա Աստծո շնորհն ու բարությունը ցույց տվեց իր սիրով ու հոգածությունամբ, Աստված, որի հզոր թևերի տակ կարելի է ապահով լինել: Հռուբը, Բոոսի կինը լինելով, իր տեղն ունեցավ Աստծո ընտանիքում ու աշխարհի Փրկչի նախամայրերից մեկը եղավ (տե՛ս՝ Մատթ. 1.1-16):

Մենք չգիտենք, թե Տեր Հիսուսի անունով արած մեկ ազնիվ արարքը ինչ կարող է անել:

Աղոթք - Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ անեմ մեկ ուրիշի համար այսօր: Առաջնորդիր ինձ - օգնիր նրան, որ տեսնի Քո շնորհքը:

Բոլորովին ուշ չէ ազնիվ արարք գործելու համար:

Կարդա՛ր Յուդեա 2.8-13

Յուդեա ընկավ երեսի վրա... երկրպագություն արեց ու ասաց. «Ինչի՞ց է, որ քո բարեհաճությանն արժանացա... թեև ես մի օտար կիմ եմ»:
Յուդեա 2.10

Միասին գործել

Տիկինս մտով շատ համեղ ապուր է պատրաստում: Նա կաթնա-
յի մեջ է դնում միս, վրան ավելացնում կարտոֆիլ, կարոս,
սունկ, ստեպղին, սոխ և համեմունք և դնում կրակին: Վեց կամ
յոթ ժամ դանդաղորեն եփվելուց հետո ապուրի անուշ բուրմունքը
լցնում է տունը, և ես անհամբեր սպասում եմ՝ ճաշակելու այդ
համեղ կերակուրը: Միշտ լավ է սպասել
մինչև կաթնայի մեջ դրված բաղադրա-
տարրերը միասին գործեն՝ ստանալու մի
բան, որ առանձին հնարավոր չէ:

Երբ Պողոսը օգտագործեց «գործակից
են լինում» խոսքը տառապանքի կապակե-
ցությամբ, նա գործածեց այսօրվա «հա-
մագործակցություն» բառը: Նա գրեց.
«Բայց գիտե՛նք, որ Աստծուն սիրողներին
բոլոր բաները գործակից են լինում՝ նրանց
բարիքի համար, ովքեր կանչված են նրա
սահմանումով» (Հռոմ. 8.28): Նա ուզեց ցույց տալ Հռոմի եկեղեցու
հավատացյալներին, թե Աստված, որ պատճառը չէր իրենց տառա-
պանքների, պիտի գործածեր իրենց բոլոր պարագաները իր երկնա-
յին ծրագրի համաձայն՝ իրենց բարիքի համար: Բարիքը, որի մասին
ակնարկում էր Պողոսը, առողջության, հարստության, հաջողու-
թյան և պարծանքի ժամանակավոր օրհնությունները չէին, այլ կեր-
պարանակից լինելու իր Որդու պատկերին (հմ. 29):

Մեզ մնում է համբերությունամբ և վստահությունամբ սպասել,
որովհետև մեր երկնավոր Հայրը մեր բոլոր ցավերը, նեղու-
թյունները և չարիքները պիտի վերցնի ու պիտի գործածի իր
փառքի ու մեր բարիքի համար:

Աղոթք - Տե՛ր, օգնիր մեզ տեսնելու, որ Դու միշտ մեզ հետ
ես՝ օգնելու ու մեր բոլոր դժվարություններն ու նեղություններ-
ը բարուն գործակից դարձնելու:

**Աստծուն սպասելով՝ մեր առաջընթացը շատ հաճախ մեր
ակնկալած պատասխանից ու արդյունքից շատ ավելին է:**

Կարդա՛ր Հռոմ. 8.28-30

Բայց գիտե՛նք, որ
Աստծուն սիրողներին
բոլոր բաները գործա-
կից են լինում նրանց
բարիքի համար, ով-
քեր կանչված են նրա
սահմանումով:

Հռոմ. 8.28

Թաքնված ոչինչ

2015-ին միջազգային հետազոտական մի ընկերություն հաստատեց, որ 245 միլիոնից ավելի տեսախցիկներ են գործում ամբողջ աշխարհում, և ամեն տարի նրանց թիվն ավելանում է 15 տոկոսով: Ավելին, միլիոնավոր մարդիկ իրենց բջջային հեռախոսներով նկարում են տարեդարձների հավաքույթներից սկսած մինչև բանկերի գողություն դեպքերը: Անվտանգության այս միջոցները գնահատենք կամ դատապարտենք դրանք իբրև մեր անձնական իրավունքների ոտնահարում, պիտի ընդունենք, որ ապրում ենք մի հասարակության մեջ, ուր ամեն բան ենթակա է քննարկման: Նոր Կտարակարանի Եբրայեցիների գիրքը ասում է, որ Աստծո հետ մեր ունեցած հարաբերության մեջ մենք լուսանկարչական գործիքներից ավելի մեծ հաշվետվության անհրաժեշտություն ունենք: Նրա խոսքը երկասյրի սրից ավելի կտրուկ է, քանի որ թափանցում է մեր հոգու խորքը ու «սրտի մտքերն ու խորհուրդները քննող է: Նրա երեսից աներևույթ մի արարած չկա, այլ ամեն բան մերկ է ու բաց նրա աչքերի առաջ. նրան պիտի հաշիվ տանք» (Եբր. 4.12-13):

Որովհետև Հիսուսը՝ մեր Տերն ու Փրկիչը, մեր մարդկային տկարությունների ու փորձությունների փորձառությունը ունեցավ, սակայն մեղք չգործեց, մենք էլ կարող ենք «չնորհի ավտոբուսին համարձակումը մոտենալ, ողորմություն ընդունել ու շնորհ գտնել պատշաճ ժամանակին մեզ օգնելու» (16): Մենք վախենալու անհրաժեշտություն չունենք Նրանից, այլ պետք է վստահություն ունենանք, որ շնորհ պիտի գտնենք, երբ մոտենանք:

Աղոթք - Ամենակարող Աստված, Քեզնից ոչ մի բան թաքնված չէ. ոչ մի բան չի գերազանցում Քո սիրուն: Ոչ մի բան ավելի ուժեղ չէ, քան Քո շնորհն ու ողորմությունը:

Մեր կյանքից ոչ մի մաս թաքնված չէ Աստծո շնորհից ու զորությունից:

Կարդա՛
Եբր. 4.12-16

Նրա երեսից
աներևույթ արարած
չկա:

Եբր. 4.13

Հիշիր ե՞րբ

Մեր տղան յոթ տարի պայքարեց թմրանյութերից ունեցած կախվածությունից: Այդ տարիներին կինս և ես զժվար ժամանակների միջով անցանք: Մինչ աղոթքով սպասում էինք նրա բուժմանը, սովորեցինք ուրախանալ փոքր հաղթանակներով: Եթե վատ բան չէր պատահում մեկ օրվա մեջ, մենք իրար ասում էինք. «Այսօր լավ օր էր»: Այս կարճ նախադասությունը հուշող դեր ունեցավ մեզ համար՝ երախտապարտ լինելու Աստծուն, թեկուզ փոքր բաների առթիվ:

Սաղմոս 125.3-ի մեջ թաքնված ավելի լավ հուշարար տող կա Աստծո քաղցր ողորմության մասին, որ ցույց է տալիս, թե ինչ է նշանակում դա մեզ համար: «Մեծ բաներ գործեց Տերը մեզ համար...»: Գեղեցիկ խոսք է սա՛ զրոյմելու մեր սրտին՝ հիշելով մեր Տիրոջ ցուցաբերած սերը խաչի վրա: Կյանքի առօրյա զժվարություններն ու տագնապները չեն կարող փոխել այն ճշմարտությունը, որ մեզ Տերն է ցույց տվել որպես անչափելի բարություն, և «հավերժ է նրա ողորմությունը» (Սաղմ. 135.1):

Եթե մենք ապրել ենք զժվար ու տագնապալի պայմաններում ու տեսել Աստծո հավատարմությունը, այս փորձառությունը մեզ պիտի օգնի, երբ դարձյալ դիմազրավելու լինենք կյանքի հզոր ալիքները: Կարող ենք չիմանալ, թե Աստված մեզ ինչպես պետք է դրանցից անցկացնի, բայց իր ցուցաբերած բարությունը անցյալում պետք է օգնի մեզ վստահելու իր կամքին:

Կարդա՛ր
Սաղմոս 125

Մեծ բաներ գործեց
Տերը մեզ համար:
Սաղմ. 125.3

Աղոթք - Որքա՛ն քաղցր ու հաստատ է Քո ողորմությունը, մեր Ստեղծիչ, Պաշտպան, Փրկիչ եւ Բարեկամ:

Երբ չենք տեսնում Աստծո ձեռքը, կարող ենք վստահել նրա սրտին:

Աճել փոթորկի մեջ

Երևակայենք աշխարհ առանց փոթորկի: Լճերը պիտի խաղաղ լինեն, և ընկած տերևներ պիտի չտեսնենք փողոցներում: Սակայն խաղաղ օդի մեջ ո՞վ պիտի ակնկալի տեսնել ընկած ծառեր: Արիզոնայի անապատում ապակյա ջերմոցի խաղաղ օդում տնկված ծառերը բնականից ավելի արագ աճեցին, սակայն իրենց ծանրության տակ հեշտությամբ արմատախիլ եղան: Ծրագիրն իրականացնող մասնագետները եզրակացրեցին, որ ծառերը փոթորկի ճնշումի անհրաժեշտություն ունեն՝ հողի մեջ կանգուն մնալու համար: Տեր Հիսուսը թույլ տվեց, որ Իր աշակերտները սաստիկ փոթորիկների փորձառությունը ունենան՝ իրենց հավատքը գորացնելու համար (Մարկոս 4.36-41):

Կարդա՛ր Մարկոս 4.36-41

Սա ո՞վ է արդյոք, որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են նրան:

Մարկ. 4.41

Իրենց շատ ծանոթ ջրերի վրա գիշերը նավարկելու ժամանակ հանկարծակի ահավոր փոթորիկ բարձրացավ այս փորձառու ձկնորսների համար: Փոթորիկն ու խուժող այլքները նրանց նավը խորտակելու սատիճան վտանգի մատնեցին, մինչ Հիսուսը նավի ետևի կողմում քնած էր: Խուճապի մատնված աշակերտները արթնացրին Նրան՝ ասելով, թե մահվան վտանգի մեջ են: Իսկ Ի՞նչ էր մտածում Նա: Իսկապես, նրանք սկսեցին հասկանալ, երբ Նա սաստեց փոթորիկն ու հարցրեց իր բարեկամներին, թե ինչու են երկչոտ ու անհավատ: Եթե փոթորիկը չլիներ, այս աշակերտները երբեք չպիտի հարց տային. «Սա ո՞վ է արդյոք, որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են սրան» (Մարկոս 4.41):

Այսօր կյանքը շատ լավը պիտի լիվա, եթե պաշտպանված լինի պատյանով: Սակայն ինչքա՞ն ուժեղ ու հաստատ պիտի լինի մեր հավատքը, եթե կարողանանք իմանալ մեր կյանքի փոթորիկները հանդարտեցնող Իր գորությունը, երբ մեր առօրյա հոգսերը փչեն մեզ վրա:

Աղոթք - Ո՛վ Հայր, խնդրում եմք օգնիր մեզ՝ հիշելու, թե այն, ինչ որ մեզ սուկում է պատճառում, միաժամանակ հավաստիք է Քեզ ճանաչելու և Քեզ վստահելու գորությունը ունենալու:

Աստված երբեք չի քնում:

Կորցնել գտնելու համար

Երբ ամուսնացա անգլիացի նշանածիս հետ և փոխադրվեցի Անգլիա, մտածեցի, թե միայն հինգ տարվա արկածախնդրու թյուն պիտի ունենամ: Երբեք չպատկերացրի, որ այնտեղ պիտի լինեի քսան տարի հետո էլ: Նույնիսկ մի պահ մտածեցի, թե կորցրել եմ անցյալի կյանքս, երբ ետևում թողեցի ընտանիքս, ընկերներս և աշխատանքս: Սակայն կորցնելով հին կյանքս՝ այստեղ ավելը լավը գտա:

Տեր Հիսուս Իր աշակերտներին խոստացավ նոր կյանք, երբ նրանց պատվիրեց հետևել Իրեն: Երբ տասներկուսին ուղարկեց Բարի լուրը տարածելու, խնդրեց Իրեն սիրել ամեն բանից ավելի՝ ասելով. «Ով որ հորը կամ մորն ինձանից ավելի է սիրում, նա ինձ արժանի չէ» (Մատթ. 10.37): Նրա խոսքերն ասվեցին մշակութային մի միջավայրում, ուր ընտանիքը կարևոր դեր էր կատարում հասարակութային մեջ և բարձր արժեք ուներ: Բայց Նա խոստացավ, որ եթե նրանք պատրաստ լինեին իրենց անձը զոհելու (Հմ. 39), Տերը ավելին պիտի տար նրանց: Մենք կարիք չունենք ուրիշ երկիր գնալու՝ գտնելու համար մեր կյանքը Քրիստոսի մեջ: Ինչպես աշակերտները գնացին Բարի լուրը քարոզելու ու Աստծո թագավորությունը տարածելու, նվիրումով ու ծառայությունով մեր կյանքը ավելի շատ պիտի լցվի Տիրոջ առատ սիրով, որ ունի մեր հանդեպ: Բնականաբար, Նա մեզ սիրում է մեր ծառայությունից անկախ, սակայն մենք իմաստ և գոհացում ենք գտնում, երբ մեր անձը նվիրում ենք ուրիշների բարիքի համար:

Կարդա՛
Մատթեոս 10.37-42

...ով որ իր անձն ինձ համար կորցնի, նա այն կգտնի:
Մատթ. 10.39

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր, որ կարողանամ շահերս մի կողմ դնել Քեզ համար ու արժանի լինել Քո մեծ շնորհին ու ողորմությանը:

Յուրաքանչյուր կորուստ դատարկություն է ստեղծում մեր կյանքում, որ լցվում է Աստծո ներկայությամբ:

Օրհնությունների հովիտ

Տրանսիացի արվեստագետ Հենրի Մատիսի վերջին տարիների գործերը լավագույն կերպով են ներկայացնում նրան: Այդ օրերին նա որդեգրեց մի ոճ՝ ստեղծելով գունավոր մեծ չափի թղթով նկարված պատկերներ՝ ներկի փոխարեն: Նա իր սենյակի պատերը զարդարեց այդ պայծառ ու գունավոր պատկերներով: Այս նորաձև աշխատանքը կարևոր էր նրա համար, որովհետև քաղցկեղ ախտորոշվելով՝ հաճախ արգելափակված էր լինում անկողնու մեջ: Հիվանդանալը, աշխատելուց զրկվելը և նեղուժյան մեջ լինելը հովտի միջով անցնելու պես է, ուր ամեն բան ստվերի մեջ է մնում: Հուզայի ժողովուրդը նման զգացում ունեցավ, երբ լսեց, որ թշնամիները մոտենում են իրենց երկիրը գրավելու (Բ Մնաց. 20.2-3): Հովսափատ թագավորն աղոթեց ասելով՝ «Եթե մեզ վրա գան չարիք սուր... քեզ կկանչենք նեղուժյան մեջ լինելու դեպքում, և դու կլսես ու կփրկես մեզ» (Հմ. 9): Աստված պատասխանեց. «... վաղը հարձակվեցե՛ք նրանց վրա, քանզի Տերը ձեզ հետ է» (Հմ. 17): Երբ Հուզայի բանակը հասավ պատերազմի դաշտը, արդեն թշնամի բանակները իրար ջարդել էին: Աստծո ժողովուրդը երեք օր շարունակ ավար հավաքեց՝ հագուստ և ցանկալի իրեր: Վերադառնալուց առաջ ժողովուրդը հավաքվեց Աստծուն փառավորելու, և այդ տեղը կոչեցին «Օրհնությունների հովիտ»:

Աստված մեզ հետ է քայլում մեր կյանքի ամենից դժվար և տագնապալի պահերին: Նա հնարավոր է դարձնում օրհնություն գտնել հովիտներում:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր ինձ, որ չվախենամ, երբ դժվարություններ դիմագրավելու լինեմ: Օգնիր, որ հավատամ, թե Քո բարերարությունը ու ողորմությունը ինձ հետ պիտի լինեն կյանքիս բոլոր օրերում:

Աստված այն վարպետն է, որ մեր բեռները օրհնության է վերածում:

Կարդա՛
Երկ.Մնաց. 20.1,13-22

Երբ մեզ վրա գա չարիք... քեզ կկանչենք նեղության մեջ... և դու կլսես ու կփրկես մեզ:

Բ Մնաց. 20.9

Կյանք գտնել

Ռավիի հոր խոսքերը իր ներսը թափանցեցին, երբ ասաց. «Դու կատարյալ ձախողություն և անպատվություն ես»: Համեմատած իր եղբայրների և քույրերի հետ՝ Ռավին դիտվում էր ընտանիքի նախատինքը: Նա փորձեց առաջ անցնել սպորտի մեջ և կարողացավ, սակայն՝ անօգուտ: Նա մտածեց, թե ի՞նչ կարող էր անել: Կատարյալ ձախողություն էմ: Արդյոք կարո՞ղ եմ այս կյանքի տակից դուրս գալ առանց ցավի: Այս մտածումները նրան տանջեցին, սակայն որևէ մեկի մոտ չարտահայտվեց: Նա սովորել էր իր անձնական ցավերը ուրիշների մոտ ցույց չտալ:

**Կարդա՛ր
Յովհաննես 14.5-14**

...որովհետև ես կենդանի եմ, և դուք էլ կենդանի կլինեք:

Յովհ. 14.19

Ռավին առանձին տառապեց ու փորձեց ինքնասպան լինել: Երբ ապաքինման ճանապարհին էր, մի այցելու Աստվածաշունչ բերեց և ցույց տվեց Հովհաննու 14-րդ գլուխը: Ռավիի մայրը կարգաց Հիսուսի հետևյալ խոսքերը. «Որովհետև ես կենդանի եմ, և դուք էլ կենդանի կլինեք» (Հմ. 19): Ռավին մտածեց, թե սա կարող էր լինել իր միակ հույսը նոր կյանքով ապրելու համար: Նա աղոթեց. «Տե՛ր Հիսուս, եթե դու նա ես, որ կյանք է չնորհում, ուզում եմ ունենալ այդ կյանքը»:

Կյանքը կարող է հուսահատական վիճակների մատնել մեզ: Սակայն Ռավիի նման կարող ենք հույս ունենալ Տեր Հիսուսից, որը «ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքն է» (Հմ. 6): Աստված ցանկանում է մեզ տալ ճոխ և գոհացնող կյանք:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, ընդունում եմ, որ մեղավոր եմ և կարիքը ունեմ Քո ներումի: Շնորհակալ եմ, Տե՛ր Հիսուս, ինձ համար մեռնելուդ և ինձ հավիտենական կյանք տալուդ համար: Փոխիր իմ կյանքը, որպեսզի փառք ու պատիվ բերեմ միայն Թեզ:

Միայն Տեր Հիսուսը կարող է մեզ նոր կյանք տալ:

Երկարող ստվերներ

Տարիներ առաջ կինս և ես ապրում էինք Անգլիայի Յորքշիրի Հրջանի հյուրանոցներից մեկում, ուր անծանոթ երեք զույգի հանդիպեցինք: Ընթրիքից հետո, երբ սուրճ էինք խմում, խոսակցությունը ծավալվեց մեր զբաղմունքների շուրջ՝ «Ի՞նչ ես անում» հարցով: Այդ ժամանակ ես Մուզի Սուրբ Գրոց Հաստատությունն անվազան էի Չիկագոյի մեջ: Ենթադրեցի, թե այնտեղ եղող զույգերից ոչ մեկը ծանոթ չէր Մուզի Հաստատությանը և նրա հիմնադրին՝ Դ. Լ. Մուզիին: Երբ դպրոցի անունը հիշեցի, պատասխանը անմիջական ու զարմանալի էր. «Մուզի և Սանքի... այդ Մուզի՞ն»: Մեկ ուրիշը ավելացրեց. «Մենք Սանքիի երգարանն ունենք, և մեր ընտանիքը հաճախ է հավաքվում դաշնամուրի շուրջ այդ երգարանից երգելու համար»: Հիացա: Ավետարանիչ Դուլայդ Մուզին և իր երաժիշտը՝ Իրա Սանքին, Անգլիայում 120 տարի առաջ պաշտամունքներ էին կազմակերպել, և նրանց ազդեցությունը դեռևս զգալի էր:

Հյուրասենյակը թողեցի՝ մտածելով, թե ինչպես մեր կյանքերը Աստծու ազդեցության երկարող ստվերներ են թողնում, ինչպես որ աղոթող մոր ազդեցությունը իր զավակների վրա, գործընկերոջ քաջակերական խոսքերը, ուսուցչի կամ դաստիարակի օգնությունն ու խրախույսը, բարեկամի կարեկցությունն ու սերը: Մեծ առանձնաշնորհում է դեր ունենալ այն սքանչելի խոստումի մեջ, թե «Քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ» (Սաղմ. 99.5):

Աղոթք - Տեր, օգնիր մեզ, որ հիշենք, թե մինչ մեր կյանքերը կարճ են, ինչ որ անում ենք Քեզ համար, կարող է ազդեցություն ունենալ մեր մահից հետո: Առաջնորդիր ինձ այսօր ուրիշների կյանքի մեջ հետք թողնելու:

Կարդա՛ր Սաղմոս 99

Քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ:

Սաղմ. 99.5

Ինչ որ Քրիստոսի համար է լինում, միշտ պիտի մնա:

Կիսելու համար գանձը

1974-ի մարտին չինացի հողագործները հոր փորելու ժամանակ անակնկալ պեղում կատարեցին: Նրանք կենտրոնական Չինաստանի այդ հոր գետնի տակ գտան Ն. Ք. երրորդ դարից մնացած ամբողջական Տերակոտե արձաններ, որոնց մեջ կար 8.000 գինվոր, 150 պատերազմական ձի և 130 կառք՝ 520 ձիերով: Ներկայումս այս Տերակոտե Բանակը մեծ ժողովրդականություն վայելող զբոսաշրջային վայր է Չինաստանում, ուր մեկ միլիոնից ավելի զբոսաշրջիկներ են այցելում ամեն տարի: Այս սքանչելի գանձը, որ դարեր շարունակ թաքնված էր մնացել, հիմա բաց է աշխարհի առջև:

Պողոս առաքյալը գրեց՝ ասելով, թե Քրիստոսի հետևորդները իրենց մեջ թաքնված գանձ ունեն, որ պետք է կիսել աշխարհի հետ. «Հիմա մենք ունենք այս շողացող լույսը մեր սրտերում, սակայն մենք նման ենք այս մեծ գանձը պարունակող ու փչրվող հողե անոթներին»: Մեր մեջ եղող գանձը Քրիստոսի պատգամն ու սերն է:

Այս գանձը չպետք է պահվի, այլ բաժանվելու է, որպեսզի Աստծո շնորհով ու սիրով տարբեր ազգերի պատկանող մարդիկ կարողանան Նրա ընտանիքի մեջ մտնել: Սուրբ Հոգու ներգործությամբ այս գանձը այսօր բաժանենք որևէ մէկի հետ:

Աղոթք - Հայր, օգնիր ինձ, որ կարողանամ ապրել Ավետարանի ճշմարտությունը ու կիսեմ այն ուրիշների հետ՝ Քեզ հետ իմ ճանապարհորդության ընթացքում:

Կարդա՛ր Բ Կորնթ. 4.1-7

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից:
Բ Կորնթ. 4.7

Թող ուրիշները լսեն ու տեսնեն քո վկայությունը:

Կյանքի շունչ

Ցուրտ ու սառնաշունչ մի օր, մինչ աղջիկս և ես քայլում էինք դեպի դպրոց՝ զվարճացանք՝ տեսնելով մեր շունչի՝ շոգիի վերածվելը: Ինձ համար այդ պահը պարզև էր, նախ՝ աղջկաս հետ լինելու, ապա իմ՝ կենդանի լինելու պատճառով:

Մեր շունչը, որ ընդհանրապես անտեսանելի է, կարելի էր տեսնել սառը օդի մեջ: Սա ինձ մտածել տվեց մեր շունչի ու կյանքի Աղբյուրը եղող մեր Տիրոջ ու Ստեղծիչի մասին:

Նա, որ ձևավորեց Ադամին գետնի հողից՝ տալով նրան կյանքի շունչը, մեզ և մենք ապրող էակի էլ կարող է տալ (Ծննդ. 2.7): Ամեն բան Նրանից է, ինչպես մեր շունչը, որ ներշնչում ենք՝ առանց նույնիսկ մտածելու նրա մասին:

Մենք կարող ենք տարվել ժամանակակից գիտություններով՝ մոռանալով մեզ կյանք տվող Աստծուն: Սակայն երբ կանգ առնենք՝ հիշելու, որ Աստված մեր Ստեղծիչն է, այն ժամանակ մենք կարող ենք ունենալ շնորհակալության զգացում: Կարող ենք օգնություն խնդրել Նրանից և խոնարհաբար շնորհակալ լինել կյանքի պարզևի համար: Թող մեր շնորհակալությունը դուրս հորդի ու հասնի ուրիշների, որպեսզի նրանք էլ շնորհակալ լինեն Տիրոջը՝ իր բարություն ու հավատարմության համար:

Աղոթք - Սիրելի՛ Երկնավոր Յայր, ի՞նչ սքանչելի ու հզոր Աստված ես: Կյանք ստեղծեցիր Քո շունչով: Երախտապարտ հոգով փառք ենք տալիս Քեզ: Շնորհակալ ենք Քո ստեղծագործության համար:

Շնորհակալություն հայտնիր Ստեղծիչ Աստծուն, որ մեզ կյանքի շունչն է տալիս:

Կարդա՛ ծՆՆՈՂՈՅ 2.4-8

Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց...: ԾՆՆՈՂՈՅ 2.7

Ամեն ինչ մի կողմ դիր

Համալսարանում ուսանելու տարիներին որոշեցի Հրասկետբոլի խմբին միանալ՝ հաստատ որոշելով, որ ամբողջ էությամբ պիտի նվիրեմ անձս մարզչին, անելով այն, ինչ խնդրի ինձնից:

Օգուտ պիտի չլիներ խմբի համար, եթե ասեի. «Մ՛յ մարզիչ, ահա այստեղ եմ: Ուզում եմ դնդակը նետել ցանցի մեջ, մի ասա դաշտի շուրջ վազիր, պաշտպանի դերում եղիր և քրտնիր»:

Յուրաքանչյուր լավ մարզիկ պետք է վստահի մարզչին ու հետևի նրա տված ամեն ցուցումի՝ խմբին օգտակար լինելու համար: Քրիստոսի միջոցով մենք լինում ենք Աստծո «կենդանի զոհ» (Հռոմ. 12.1): Մենք մեր Փրկչին ու Տիրոջն ասում ենք. «Քեզ եմ վստահում: Ինչ որ ուզում ես անեմ, պատրաստ եմ կատարելու»: Հետո Նա հեղաշրջում է մեզ՝ մեր միտքը նորոգելով, որպեսզի կենտրոնանանք այն բաների վրա, որոնք Իրեն հաճո են:

Օգտակար է իմանալ, թե Աստված երբեք չի մղում մեզ անելու այն բանը, որի համար մեզ չի զինել: Ինչպես Պողոսն է մեզ հիշեցնում. «...զանազան պարզեցրեց ուսնեք, ըստ այն շնորհի, որ մեզ տրված է...» (Հմ. 6):

Գիտենալով, որ մենք կարող ենք մեր կյանքը վստահել Աստծուն, ամեն բան մի կողմ դնենք ու Նրան հանձնվենք՝ զորացած լինելով այն համոզումով, որ Նա է մեզ ստեղծել և օգնում է մեզ անել ամեն բան Իր միջոցով:

Աղոթք - Երկնավոր Հայր, ոչ ոք արժանի չէ մեր նվիրումին ու զոհողությանը՝ բացի Քեզնից: Օգնիր ինձ տեսնելու այն ուրախությունը, որ գալիս է մեր անձերը Քեզ հանձնելով:

Վտանգ չկա մեր անձերը Աստծուն հանձնելու մեջ:

Կարդա՛ր Հռոմ. 12.1-8

Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրներ, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի զոհ՝ սուրբ և Աստծուն հաճելի:

Հռոմ. 12.1

Աստծու դեմքը

Որպես գրող՝ աշխատանքիս մեծ մասը առնչություն ունի ցավի հարցի հետ: Կրկին ու կրկին վերադառնում եմ նույն հարցերին ու մատու դնում այն վերքի վրա, որ երբեք չի բուժվում: Իմ գրականությունը կարդացողներին լսում եմ, և նրանց ցավալի պատմությունները իրավացի են դարձնում կասկածներս: Հիշում եմ երիտասարդական մի գործչի, որ ինձ զանգեց, իր կնոջ և փոքրիկ աղջկա՝ Սպիրտ հիվանդության պատճառով մահվան դատապարտված լինելը լսելուց հետո, որն առաջացել էր արյան փոխներարկման ժամանակ վարակված լինելու արդյունքում: Նա հարցնում էր. «Ինչպե՞ս կարող եմ պատմել երիտասարդ խմբիս սիրող Աստծո մասին»:

Ես սովորել եմ նույնիսկ չփորձել պատասխան տալ նման «ինչու»ների: Ինչո՞ւ են երիտասարդական գործչի տիկնոջը վարակված արյուն ներարկել: Ինչո՞ւ է մորիկը մի քաղաքի հարվածում ու անվնաս անցնում մեկ ուրիշի մոտից: Ինչո՞ւ են բժշկվելու խնդրանքով ուղղված աղոթքները անպատասխան մնում: Սակայն կա մի հարց, որ այլևս չի կրժում հոգիս, ինչ որ լինում էր առաջ. «Մի՞թե Աստված հոգ է տանում»: Ես հաստատ գիտեմ, որ միայն մեկ պատասխան ունի այդ հարցը, որ Հիսուսն է: Տեր Հիսուսի միջոցով Աստված մեզ դեմք տվեց: Եթե իսկապես ուզում ես իմանալ, թե Աստված ինչ է զգում այս երկրագնդի վրա եղած տառապանքի համար, նայիր այդ դեմքին: «Աստված հոգ է տանում»: Նրա Որդու մահանալը մեզ համար, որ ի վերջո պիտի քանդի ցավը, վիշտը, տառապանքը և հավիտենական մահը, պատասխանում է այդ դժվար հարցին:

Աղոթք - Սիրելի Հայր, թող Քո դեմքը միշտ փայլի մեզ վրա, որպեսզի ցուլացնենք մեր Տեր Հիսուսի փայլուն պատկերը բոլորի առջև:

Աստծո սերը մեր հանդեպ արժեքավոր է խաչի վրա Քրիստոսի բացված բազուկների նման:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 4.4-15

Աստված... ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց Աստծու փառքի գիտության լույսը տալու Հիսուս Քրիստոսի դեմքով:

Բ Կորնթ. 4.6

Ոչ մի պակաս բան

Երևակայիր ճամփորդություն զնալ առանց պայուսակի, առանց անհրաժեշտ իրերի, առանց փոխնորդ հագուստի և առանց գումարի: Նման վիճակը անստույգություն է և վախ է պատճառում:

Սակայն ճիշտ այդպես ասաց Տեր Հիսուսը Իր աշակերտներին, երբ նրանց ուղարկեց իրենց առաջին առաքելությունը՝ Ավետարանը քարոզելու և հիվանդներ բժշկելու: «Նրանց պատվիրեց, որ ճանապարհի համար ոչինչ չվերցնեն, բացի գավազանից. ո՛չ մախաղ, ո՛չ հաց, ո՛չ էլ գոտու՛մ՝ պղնձադրամ: Այլ հողաթափ հագնեն: «Երկու հագուստ չհագնեք»,- ասաց» (Մարկ. 6.8-9):

Սակայն հետո, երբ Հիսուսը պատրաստում էր նրանց կատարելիք ծառայությունը Իր մեկնումից հետո, ասաց Իր աշակերտներին. «Բայց հիմա քսակ ունեցողը թող առնի նաև պարկը, իսկ չունեցողը թող իր հագուստը վաճառի և իր համար սուր առնի» (Ղուկ. 22.36):

Ի՞նչ են նշանակում այս խոսքերը: Հարցն այն է, որ պետք է Աստծուն վստահել մեր բոլոր կարիքների համար:

Երբ Հիսուսը ակնարկեց այդ առաջին ճամփորդությանը, Նա ասաց աշակերտներին. «Երբ ձեզ առանց քսակի, պարկի ու կոշիկների ուղարկեցի, մի՞թե որևէ բանի կարոտ եղաք»: Նրանք էլ ասացին. «Ոչնչի» (Հմ. 35): Աշակերտները ունեին ամեն ինչ Աստծո կոչին հնազանդելով ծառայելու համար: Իրենց գործը կատարելու համար Աստված ամեն անհրաժեշտ բան տվել էր նրանց:

Մենք վստահո՞ւմ ենք Աստծուն: Պատասխանատվությունը վերցնո՞ւմ ենք և ծրագրո՞ւմ ենք: Հավատանք, թե նա պիտի տա մեզ այն, ինչի կարիքն ունենք Իր գործը առաջ տանելու համար:

Աղոթք - Տեր, Դու բարի ես և ինչ որ անում ես, նույնպես բարի է: Օգնիր մեզ մեր ջանքի մեջ աղոթելու, ծրագրելու և Քեզ վստահելու:

Երբ Աստծո կամքը Իր ձևով կատարվի, երբեք կարիքները պիտի չպակասեն:

Կարդա՛ր Մարկոս 6.7-12

Աստված կարող է բոլոր շնորհներն ավելացնել ձեր մեջ, որպեսզի դուք ամեն բանում... ամեն բարի գործի համար առատանաք:

Բ Կորնթ. 9.8

Ոչ անտեղի

Ինձ ծանոթ տնտեսագետ մի խորհրդատու դրամարկուլոթյան իրողությունը նկարագրում է՝ ասելով. «Լավագույնի հույսն ունեցիր և պատրաստ եղիր վատագույնին»: Մեր կայացրած գրեթե բոլոր որոշումների ժամանակ միշտ արդյունքի առումով անորոշություն կա: Սակայն կա մի միջոց, որին կարող ենք հետևել, հակառակ նրան, որ ինչ էլ լինի, արդյունքում մեր ջանքերը պիտի իզուր չլինեն:

Պողոս առաքյալը Քրիստոսի հետևորդների հետ մի տարի անցկացրեց Կորնթոսում, քաղաք, որ հայնտի էր իր բարոյական անմաքրությունը: Իր հեռանալուց հետո նա թախանձեց նրանց իր հետևողական նամակով, որ չվհատվեն կամ մտածեն, թե իրենց վկայությունը անտեղի էր: Նա վստահեցրեց, որ կգա մի օր, երբ Տերը պիտի վերագառնա և նույնիսկ մահը պիտի ընկղմվի հաղթություն մեջ (Ա. Կորնթ. 15.53-54):

Տեր Հիսուսին հավատարիմ մնալը կարող է դժվար լինել, վհատեցնող և նույնիսկ վտանգավոր, սակայն երբեք անտեղի կամ վատնված չէ: Երբ Տիրոջ հետ քայլում ենք ու վկա լինում իր զորություն ու մեզ հետ իր ներկայություն, մեր կյանքերը անտեղի չպիտի լինեն: Կարող ենք վստահ լինել այդ իրողություն:

Աղոթք - Տեր, այս անորոշ օրերի մեջ մենք ամուր կառչում ենք Քո խոստումին՝ գիտակցելով, թե մեր աշխատանքը Քեզ համար Քո նպատակը պիտի իրագործի ու մե՞ծ արժեք ներկայացնի Քեզ համար:

Մեր կյանքն ու վկայությունը Քրիստոսի համար անտեղի չէ:

Կարդա՛ր Ա Կորնթ. 15.50-58

Ուրեմն, սիրելի՛ եղբայրներս, հաստատուն եղեք, անշարժ կացեք, Տիրոջ գործի մեջ ամեն ժամանակ ավելի՛ առաջացեք, իմացե՛ք, որ Տիրոջով ձեր աշխատանքը զուր չէ:

Ա Կորնթ. 15.58

Որոտում և կայծակ

Տարիներ առաջ բարեկամս ու ես ձկնորսություն էինք անում Տմի լճակի եզրին, երբ սկսեց անձրևել: Անձրևից փախչելու համար մոտակայքում օրորվող բարդիների տակ ուղեցինք պաշտպանվել, սակայն անձրևը շարունակում էր տեղալ: Ուստի որոշեցինք հավաքվել և դեպի մեքենան վազել: Հագրիվ էի մեքենայի դուռը բացել, երբ կայծակ խփեց բարդիներին ու ամբողջությամբ այրեց դրանք: Ապա լռություն տիրեց:

Մենք ցնցված էինք ու սարսափի մատնված:

Այդահոյի ձորում հաճախ է որոտ ու կայծակ լինում: Ես սիրում եմ որոտն ու կայծակը, հակառակ մեր այդ օրվա վախեցնող փորձությունը: Ես սիրում եմ այդ ուժը, էլեկտրականությունը, ցնցումը, հարվածը, բախումը և սոսկումը: Երկիրն ու իր մեջ եղած ամեն ինչ դողում են ու շարժվում: Ապա խաղաղություն է տիրում:

Ես սիրում եմ որոտն ու կայծակը, որովհետև նրանք Աստծու ձայնն են խորհրդանշում (Հոբ 37.4), որ Իր խոսքի միջոցով զարմանալի կերպով ու անդիմադրելի զորությամբ է արտահայտվում: Տիրոջ ձայնը կրակի բոցեր է ժայթքում: «Տերն իր ժողովրդին զորություն պիտի տա, իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն պարգևելով» (Սաղմ. 28.11): Նա զորություն է տալիս տոկարու, համբերելու, ազնիվ լինելու, լռությամբ նստելու, ոտքի կանգնելու ու քայլելու և երբեք ոչինչ չհանելու:

Թող Աստծո խաղաղությունը քեզ հետ լինի:

Աղոթք - Տեր, փոթորկի մեջ հոգիս խաղաղեցրո՛ւ: Տուր ինձ Քո խաղաղությունն ու ուժը այս օրվա մեջ քայլելու:

Հավատքը մեր տկարությունը Աստծո զորությանն է կապում:

Կարդա՛ր
Սաղմոս 28

Տիրոջ ձայնը
ճեղքում է կրակի
բոցը:

Սաղմ. 28.7

Շատ մարդկային

Անգլիացի վիպագիր Իվլին Վոյլի օգտագործած բառերը ներկայացնում էին իր նկարագրի թերությունները: Վերջում դիպվածով վիպագիրը ընդունեց Քրիստոնեությունը, սակայն շարունակեց ներքնապես պայքարել: Մի օր մի կին հարցրեց նրան. «Պոն. Վո, ինչպե՞ս կարող ես այսպես վարվել ու դեռ քեզ քրիստոնյա կոչել»: Նա պատասխանեց. «Տիկի՛ն, ես կարող եմ վատը լինել, ինչպես դու ես ասում, սակայն հավատա, որ եթե իմ կրոնը չլինի, ես հազիվ թե մարդկային լինեմ»:

Վոն ներքին պայքար էր մղում, ինչպես Պողոս առաքյալն է նկարագրում.

«Քանի որ իմ մեջ կամենալը կա, բայց բարին անելը չեմ գտնում» (Հռոմ. 7.18): Նա նաեւ ասում է. «Որովհետև գիտեմք, որ օրենքը հոգևոր է, բայց ես մարմնավոր եմ...» (Հմ. 14): Ապա շարունակում է. «Որովհետև ես Աստծու օրենքը հավանում եմ՝ ներքին մարդով: Բայց իմ անդամներում ուրիշ օրենք եմ տեսնում, որ պայքարում է իմ մտքի օրենքի դեմ և ինձ գերի է վերցնում այն մեղքի օրենքով, որ իմ անդամներում է: Ես ի՛նչ թշվառ մարդ եմ. այս մահվան մարմնից ո՞վ կազատի ինձ» (Հմ. 22-24): Եվ հետո փառաբանական պատասխան է տալիս. «Աստծուց շնորհակալ եմ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հմ. 25): Երբ հավատքով Տիրոջը դառնանք, ընդունելով մեր սխալներն ու մեր կարիքը Փրկչի հետ կապված, անմիջապես նոր արարած կդառնանք: Սակայն մեր հոգևոր կազմությունը մնում է մնայուն կյանքի ճամփորդություն:

Աղոթք - Հայր, Քեզ ենք բերում մեր մաքառումները, որովհետև Դու բոլորի մասին գիտես ու մեզ դեռ սիրում ես: Սովորեցրու մեզ Քո Սուրբ Հոգուն վստահել և մեզ ամեն օր Քո Որդուն ավելի նմանեցրու:

Քրիստոնյա լինել նշանակում է ներել անարդարին, որովհետև Աստված ներում է անարդարը քո մեջ: Ս. Ս. Լուիս:

Կարդա՛ր
Հռոմ. 7.14-25
...բայց ես մարմնավոր եմ՝ մեղքի տակ ծախված:
Հռոմ. 7.14

Անտեսանելի հերոսներ

Աստվածաշնչի մեջ արձանագրված պատմությունները մեզ զարմացնում ու մտածել են տալիս: Օրինակ, երբ Մովսեսը առաջնորդեց Աստծո ժողովրդին դեպի խոստացված երկիրը, և ամաղեկացիները նրանց վրա հարձակվեցին, ինչպե՞ս նա իմացավ, որ պետք էր բլուրը բարձրանալ և Աստծո գավազանը իր ձեռքով վեր բարձրացնել (Ել. 17.8-15): Մեզ ասված է, սակայն կարդում ենք, թե երբ Մովսեսը իր ձեռքերը վեր էր բարձրացնում, Իսրայելն էր հաղթում, իսկ երբ ձեռքերը իջեցնում էր ցած, Ամաղեկն էր հաղթում: Երբ նա հոգնեց, եղբայրը՝ Ահարոնը, և Ուր անունով մի մարդ իր ձեռքերը վեր բարձրացրին, որպեսզի իսրայելցիները հաղթեն: Մենք շատ բան չգիտենք Ուրի մասին, սակայն նա կարևոր դեր կատարեց Իսրայելի պատմության մեջ: Այս օրինակը մեզ հիշեցնում է, որ անտեսանելի հերոսները կարևոր են, որ աջակցողները և առաջնորդներին խրախուսող մարդիկ շատ էական ու կարևոր տեղ ունեն, բայց անտեսվում են: Բնականաբար առաջնորդները հիշվում են պատմության մեջ ու երևում են լրատվական հարթակում: Բայց այն հավատարիմ վկաները, որոնք լուրջամբ են ծառայություն մատուցում, Տիրոջ կողմից երբեք չեն անտեսվում: Տերը տեսնում է այն անձին, որ աղոթում է իր բարեկամների ու ընտանիքի համար: Նա տեսնում է այն հարևանին, որ խրախուսական խոսքով է մոտենում նեղության մեջ եղողին:

Աստված մեզ օգտագործում է, նույնիսկ եթե մեր պարտականությունը անկարևոր թվա: Նկատենք անտեսանելի հերոսներին և շնորհակալություն հայտնենք նրանց համար, ովքեր մեզ օգնում են:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ ինձ ստեղծելուդ ու Քո՛ ինձ տված հարմար պարգևներիդ համար: Օգնիր, որ հավատարմությամբ Քեզ և ուրիշներին ծառայեմ և գնահատեմ նրանց, ովքեր օգնում են ինձ:

Անտեսանելի հերոսները միշտ էլ տեսանելի են Աստծուն:

Կարդա՛ Ելք 17.8-15

...Ահարոնն ու Ուրը՝ մեկն այս կողմից, մյուսն այն կողմից նրա ձեռքերը բռնած բարձր էին պահում... մինչև արև մայր մտնելը բարձրացած մնացին:

Ելք 17.12

Միշտ սիրված և գնահատված

Մենք ծառայում ենք մի Աստծո, որ սիրում է մեզ մեր արած գործերից ավելի:

Ճիշտ է, որ Աստված ակնկալում է, որ մենք գործենք մեր ընտանիքների կարիքները հոգալու համար եւ պատասխանատվություն գրանք հոգ տանելու Իր ստեղծած երկրին: Նա նաև ակնկալում է, որ մենք ծառայենք տկարին, քաղցածին, մերկին, ծարավին ու մեր շուրջը գտնվող բոլոր նրանց, ովքեր տառապանքի ու ցավի մեջ են. նույնիսկ պատրաստ լինենք օգնելու նրանց, ովքեր դեռևս Սուրբ Հոգու բնակությունը չունեն իրենց մեջ:

Մենք երբեք չպիտի մոռանանք սա, որովհետև մի օր պիտի պակասի մեր կարողությունը «Աստու համար գործելու» առողջության կամ չնախատեսված հանգամանքների բերումով: Նման պահերին է, որ Աստված կամենում է, որ հիշենք, թե Ինքը մեզ սիրում է ոչ թե մեր արածների համար, այլ որ Իր զավակներն ենք: Երբ Քրիստոսի անունը կանչենք մեր փրկության համար, ոչ մի բան, ինչպես օրինակ, տառապանք, հալածանք, սով, մերկություն, վտանգ և սուր, չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ Հիսուս Քրիստոսի մեջ է (Հռոմ. 8.35, 39):

Երբ մեր ունեցածներն ու արածները մեզնից վերցվեն, այն ժամանակ Նրա ակնկալությունը մեզնից պիտի լինի մեր ինքնություն մեջ հաստատ մնալ:

Աղոթք - Հայր, օգնիր մեզ, որ երբեք չմոռանանք Քո ունեցած անվերապահ սերը մեր հանդեպ, և օգնիր, որ այդ հույսին կառչենք, երբ մեր աշխատանքն ու նրա տված պտուղները անհետանան:

Մեր գոյության պատճառը Աստծու հետ հաղորդակցության մեջ լինելն է:

Կարդա՛ր Հռոմ. 8.31-39

Արդ, Քրիստոսի սիրուց մեզ ո՞վ կբաժանի. տառապանքը, նեղությունը, հալածանքը, սո՞վը, մերկությունը, վտանգը, սո՞ւրը:

Հռոմ. 8.35

Հավիտենական փրկիչը

2015 թ. հունիսին 116 տարեկանում մահացավ աշխարհի ամենից երկարակյաց մարդը՝ Զերալին Թելին: 1995-ին երուսաղեմ քաղաքը տոնեց իր 3000-րդ տարեդարձը: 116 տարին շատ է և 3000 տարին էլ շատ է մի քաղաքի համար, սակայն կան ծառեր, որոնք ապրում են ավելի երկար: Կալիֆոռնիայի Սպիրտակ Լեռների վրա գտնվում է մի մայրի, որ 4800 տարուց ավելի է ապրում է:

Ըստ տվյալների՝ այդ ծառը գոյություն ունի Աբրահամից 800 տարի առաջ: Երբ հրեա կրոնական առաջնորդները մարտահրավեր ներկայացրին Տեր Հիսուսին իր ինքնություն չուրջ, Նա հստակ հայտարարեց, որ ինքը Աբրահամից առաջ էր՝ ասելով. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Աբրահամի ինեղուց առաջ եմ ես» (Հովհ. 8.58): Նրա

հանդուգն հայտարարությունը ցնցեց նրանց, ու քարեր վերցրին՝ նետելու Նրա վրա: Նրանք շատ լավ գիտեին, որ Նրա ակնարկը ժամանակագրական իմաստով չէր, այլ Նա պարզապես հայտարարում էր, թե ինքը հավիտենական էր Աստծո հին անունը վերցնելով ու ասելով. «Ես եմ» (Ելք 3.14): Սակայն որպես մեկ անդամը երրորդության՝ Նա կարող էր արդարորեն իր այդ հայտարարությունը օրինավոր համարել:

Հովհաննու 17.3-ի մեջ Հիսուսը աղոթում է՝ ասելով. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միակ ճշմարիտ Աստված և նրան, որին ուղարկել ես՝ Հիսուս Քրիստոսին»: Հավիտենական Փրկիչը մտնում է ժամանակի մեջ, որպեսի մենք ապրենք հավիտյանս: Նա ամբողջացրեց իր առաքելությունը՝ մեր փոխարեն մեռնելով ու հարություն առնելով: Նրա այս ծառայության համար մենք ակնկալում ենք ապագայ՝ անկախ ժամանակից, ուր հավիտյան պիտի ապրենք իր հետ: Նա հավիտենական փրկիչն է:

Աղոթք - Երկիրը շուտով պիտի հալի ծյան նման, արևը չպիտի շողա, սակայն Աստված որ ինձ կանչեց, հավիտենապես իմը պիտի լինի: *Ջոն Նյուտոն*

Քրիստոսն ամեն բանից առաջ էր, ու Նրա մեջ ամեն բան փոխկապակցված է:

Կարդա՛
Չովհ. 8.48-59

Հիսուսը նրանց ասաց.
«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Աբրահամի լինելուց առաջ եմ ես»: Չովհ. 8.58

Վերակառուցում

Երբ էդուարդ Քլեյնը երկար տարիների բացակայությունից հետո վերադարձավ Բեռլին, իր սիրած ու հիշած քաղաքը չկար: Այն ամբողջովին փոխվել էր, ինչպես ինքը: Հեմիսֆիր թերթում Քլեյնը գրում է. «Անցյալում սիրած մի քաղաք վերադառնալը հուսախաբուլթյան պես բան է»: Անցյալին վերադարձը ցավի ու կորստի զգացում է առաջացնում: Մենք անցյալի նույն անձը չենք, ինչպես նաև այն վայրը, որ հատկանշական էր մեր կյանքում, նույն վայրը չէ:

Նեեմիին Իսրայելից աքսորված էր երկար տարիներ, երբ իմացավ իր ժողովրդի հուսահատ վիճակն ու Երուսաղեմի ավերված լինելը: Նա թույլտվություն ստացավ պարսիկների Արտաշես թագավորից՝ վերադառնալու ու վերակառուցելու քաղաքի պարիսպները: Վիճակը քննելուց հետո, Նեեմիին պատվիրեց քաղաքի բնակիչներին. «Տեսե՛ք այն չարիքները, որոնց մեջ ենք այժմ, տեսե՛ք, ինչպե՛ս Երուսաղեմն անապատ է դարձել, և հրկիզվել են նրա դռները: Եկե՛ք շինենք Երուսաղեմի պարիսպները և այլևս նախատինքի մեջ չլինենք» (Նեեմի 2.17):

Նեեմիին չվերադարձավ միայն հիշեցնելու, այլ՝ վերակառուցելու: Սա կարևոր դաս է մեզ, երբ նկատի ունենանք նորագույն կարոտ մեր անցյալը: Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատքն ու Նրա զորությունն են, որ մեզ հնարավորություն են տալիս առաջ նայելու, առաջ գնալու և վերակառուցելու մեր կյանքը:

Աղոթք - Հայր, օգնիր մեզ, որ կարողանանք տեսնել հնարավորությունը վերակառուցելու և վերահաստատելու մեր կյանքը Հոգու տված զորությամբ:

Մենք չենք կարող փոխել անցյալը, սակայն Աստված մեզ փոխում է ապագայի համար:

Կարդա՛ր Նեեմիի 2.11-18

Եկե՛ք շինենք Երուսաղեմի պարիսպները և այլևս նախատինքի մեջ չլինենք:

Նեեմի 2.17

Խոսող ծառը

Անգլերեն գրականության մեջ հնագույն Քրիստոնեական բանաստեղծություններից մեկի խորագիրն է «Չողի երազը» (*The Dream of the Rood*): Չող (rood) բառը հին անգլերենում գործածվում էր ակնարկելու այն խաչը, որի վրա խաչվեց Քրիստոսը: Այս բանաստեղծության մեջ Քրիստոսի խաչելության պատմությունը ներկայացված է խաչի հեռանկարով: Երբ ծառն իմանում է, որ օգտագործվելու է Աստծու Որդու սպանության համար, մերժում է այդ գաղափարը: Սակայն Քրիստոսը դիտարկում է ծառի օգնությունը՝ փրկանք տալու բոլոր նրանց, ովքեր պիտի հավատան:

Կարդա՛ր
Կողոս. 1.15-20

Նա ինքը մեր մեղքերն իր մարմնի մեջ խաչափայտի վրա բարձրացրեց:
Ա.Պետր. 2.24

Եղեմի պարտեզում Ադամն ու Եվան արգելված ծառի պտուղից կերան, որը պատճառ դարձավ մարդկային ցեղի մեղքին: Ու երբ Աստծո Որդին իր արյունը թափեց որպես գերագույն զոհը բոլորի համար, Նա մեր փոխարեն խաչվեց ծառի վրա: Քրիստոսը «մեր մեղքերն իր մարմնի մեջ խաչափայտի վրա բարձրացրեց» (Ա. Պետր. 2.24):

Խաչը դարձավ դարձակետ բոլոր նրանց համար, ովքեր իրենց փրկությունը վստահում են Քրիստոսին: Եվ խաչելությունից հետո խաչը եղավ երևելի խորհրդանիշ, որ ներկայացնում է զոհաբեր մահը Աստծո Որդու մեր՝ մեղքից ու մահից ազատագրման համար: Քրիստոսի խաչը անբացատրելի ու սքանչելի փաստն է Աստծո՝ մեր հանդեպ ունեցած սիրո:

Աղոթք - Տե՛ր, թող իմ սիրտը Քեզ փառավորի, երբ տեսնեմ մի խաչ, որովհետև Դու Քո անձը սիրով ինձ տվիր:

Քրիստոսն իր կյանքը տվեց խաչի վրա մեր փրկության համար:

Միշտ նրա հոգածության տակ

Մեր փոքր դստեր Մյունխեն-Բարսելոնա թուիչքի ընթացքին հետևելու համար կայքէջը բացեցի ու թուիչքի թիվը դնելուց հետո էկրանի վրա տեսա, որ ինքնաթիռը անցել էր Ավստրիան ու սավառնում էր Իտալիայի հյուսիսային շրջանների վրայով: Այնտեղից պիտի թռչեր Միջերկրականի վրա, Ֆրանսիական Ռիվերայի հարավից դեպի Իսպանիա և վայրէջք կատարեր ժամանակին: Թուիչքի բոլոր տեղեկությունները ծանոթ էին ինձ՝ բացի ինքնաթիռի մեջ հրամցված սնունդից:

Ինչու՞ էի մտահոգվում աղջկաս տեղի ու հանգամանքների մասին: Պարզապես այն պատճառով, որ սիրում եմ նրան և ցանկանում իմանալ, թե ի՛նչ է անում, որտե՛ղ է և դեպի ո՛ւր է գնում:

31-րդ Սաղմոսում Դավիթ փառավորում է Աստծուն իր առաջնորդության, ներումի հրաշագործության և հետաքրքրության համար: Աստված մեր վիճակը լավ գիտի, ինչպես նաև մեր կյանքի բոլոր մանրամասները: Տիրոջ խոստումը մեզ այս է. «Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ քո ընթացած ճանապարհին և աչքերս վրադ կպահեմ» (Սաղմ. 31.8):

Ինչպիսին էլ լինեն մեր կյանքի հանգամանքները այսօր, մենք կարող ենք Աստծո ներկայությունը ապրել ու վայելել Նրա հոգածությունն ու պաշտպանությունը, որովհետև «...ովքեր իրենց հույսը դրել են Տիրոջ վրա, Տիրոջ ողորմությունը կպարտերի նրանց» (Հմ. 10):

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, շնորհակալ եմ, որ մեծ սիրովդ հսկում ես վրաս ու առաջնորդում ինձ Քո ճամփաների մեջ:

Մենք երբեք Աստծո տեսադաշտից ու սիրո հոգածությունից դուրս չպիտի լինենք:

Կարդա՛ր Սաղմոս 31.1-11

Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կդարձնեմ քո ընթացած ճանապարհին և աչքերս վրադ կպահեմ:

Սաղմ. 31.8

Ի՞նչն է առիթը

Երբ չորս տարեկան Աշերի զվարթ դեմքը դուրս ցցվեց իր շատ սիրելի սուր ատամներով կոկորդիլոսի գլխի պատկերով վեղարով վերնաշապիկից, մոր սիրտը թնդաց: Նրա ցանկութունն էր լավ տպավորություն թողնել իրենց այցելող ընտանիքի վրա, որին չէին տեսել երկար ժամանակ: «Օ՛, սիրելիս», - ասաց նա, - այդ մեկը հարմար չէ այս առիթի համար»: «Անշուշտ հարմար է», - բողոքեց Աշերը: «Հըմմ, և ինչ առիթ կարող է լինել դա՞», - հարցրեց մայրը: Աշերը պատասխանեց. «Դու գիտես: Կյանք»: Ու հազավ այդ վերնաշապիկը: Այդ զվարթ տղան հասկացել էր ճշմարտությունը ժողովողի 3.12-ի, որ ասում է. «Ես հասկացա, որ մարդկանց համար չկա ուրիշ լավ բան, քան ուրախ լինել և բարիք գործել իրենց կյանքում»: Իմաստուն այս խոսքերը վհատեցուցին են թվում և հաճախ սխալ հասկացվում, որովհետև դրանք մարդկանց համար են և ոչ թե Աստծո: Այս խոսքերի հեղինակը՝ Սողոմոն թագավորը, հարցրեց. «Արդ, ի՞նչ օգուտ կա մարդուն իր աշխատանքից, որի համար նա ջանք է թափում» (Հմ. 9): Հակառակ իր այս խոսքի՝ մենք հույսի նշույլներ ենք տեսնում: Սողոմոնը նաև գրում է. «Քանի որ ով որ ուտում, խմում և իր աշխատանքի բարիքն է վայելում, Աստծու պարգևն է դա» (Հմ. 13):

Մենք ծառայում ենք մի Աստծո, որ մեզ պարգևում է բարի բաներ, և այն, ինչ որ անում է, «պիտի մնա հավիտյան» (Հմ. 14): Մինչ երախտապարտ ենք լինում ու հետևում Իր պատվիրաններին, Նա մեր կյանքը լցնում է նպատակով, իմաստով և ուրախությամբ:

Աղոթք - Տե՛ր, թող Քեզ տեսնենք ամեն ինչում: Տուր մեզ մանկական ուրախություն, որ ճանաչում ու գնահատում է Քո տված բոլոր բարիքները:

Տե՛րը, որ քեզ ստեղծեց, ուզում է, որ իրեն քո կյանքի կենտրոնը դարձնես:

Կարդա՛ր ժողովող 3.9-17

Ես իմացա, որ այն ամենը, ինչ Աստված է արել, պիտի մնա հավիտյան...
ժող. 3.14

Տեսնում եմ քեզ

«Տեսնում եմ քեզ»,- ասաց մի բարեկամ համացանցային գրողների խմբին, ուր մարդիկ քաջալերում են իրար: Որպես մտահոգված և նեղուլթյան միջով անցնող մարդ՝ խաղաղուլթյան ու գոհունակուլթյան զգացողուլթյուն ունեցա իր խոսքից: Նա տեսավ իմ հույսերը, վախերը, պայքարներն ու երազները և սիրեց ինձ:

Երբ լսեցի բարեկամիս պարզ, սահալայն ազդու քաջալերանքը, մտածեցի Աբրահամի տան մեջ եղող սպասուհի Ագարի մասին: Տարիներ հետո որդի ունենալու փափագով, ընդունված սովորուլթյան համաձայն, Սառան Աբրահամին ասաց, որ մի զավակ ունենա Ագարից: Երբ Ագարը հղիացավ, անարգեց Սառային: Երբ Սառան վատ վերաբերմունք ցուցաբերեց, Ագարը անապատ փախավ:

Տերը տեսավ Ագարի ցավն ու շփոթը և օրհնեց նրան՝ խոստանալով նրա զարմը բազմացնել: Սրանից հետո Ագարը Տիրոջը կոչեց «Լահայր», որ նշանակում է «Դու ալն Աստվածն ես...», ով երևացել է ինձ» (Ծննդ. 16.13), որովհետև ինքը մենակ ու լքված էի:

Մենք էլ սիրված ենք, ինչպես Աստված տեսավ ու սիրեց Ագարին: Կարող է այնպես պատահել, որ մենք լքված ու անտեսված զգանք բարեկամներից ու հարազատներից, բայց գիտենք, որ Աստված տեսնում է մեզ ու մեր բոլոր վախերն ու զգացումները: Նրա խոսքերը մեզ կյանք են տալիս:

Աղոթք - Հայր Աստված, ինչպես որ տեսար Ագարին իր ցավի մեջ, այնպես էլ տեսնում ես նրանց, ովքեր նեղության ու վախի մեջ են: Խնդրում եմ օգնիր և քաջալերիր նրանց:

Կարդա՛ր Ծննդոց 16.1-13

Դու ալն Աստվածն ես... ով երևացել է ինձ:

Ծննդոց 16.13

Գիտենալը, որ Աստված մեզ տեսնում է, մեզ վստահություն ու հանգիստ է տալիս:

Յանկացած պարագայում

Մեր ապրած շրջանում հաճախ է էլեկտրական հոսանքը անջատվում, և դա տևում է քսանչորս ժամ՝ թողնելով ամբողջ տարածքը խավարի մեջ: Իսկ կենցաղային էլեկտրատեխնիկայի գործածությունն ապակասը անհարմարություններ է առաջացնում:

Մեր քրիստոնյա հարևանը հաճախ է հարցնում. «Սրա համար էլ շնորհակալություն պիտի հայտնենք Աստծուն»՝ ակնարկելով Ա. Թեա. 5.18-ին. «Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը՝ Քրիստոս Հիսուսով»: Մենք միշտ ասում ենք. «Այո՛, անշուշտ, շնորհակալություն ենք հայտնում Աստծուն ամեն բանի համար»: Սակայն մեր այս արտահայտությունը հակառակն է ապացուցում, երբ դժգոհում ենք ամեն անգամ, երբ հոսանքն անջատվում է: Մի օր, սակայն, Աստծուն «ցանկացած պարագայում» շնորհակալություն հայտնելու մեր այս հավատքը նոր իմաստ ստացավ: Երբ աշխատանքից տուն վերադարձա, տեսա մեր հարևանին սարսափած վիճակում: Նա ասաց. «Շնորհակալություն Տեր Հիսուսին, որ էլեկտրականությունը անջատված էր, այլապես տունս պիտի հրկիզվեր, և ես ու ընտանիքս պիտի մեռնեինք»: Ըստ երևույթին՝ աղբահավաք մեքենան, խփվելով էլեկտրասյունին, մեծ թվով հոսանքի թելեր էր գցել տների վրա: Եթե թելերի վրա հոսանք լիներ, վնասը մեծ կլիներ:

Մեր հաղթահարած դժվարությունների մեջ հեշտ չպիտի լինի ասել. «Շնորհակալ եմ, Տեր»: Մենք կարող ենք շնորհակալ լինել Աստծուն, որ ցանկացած պարագայում առիթ է տեսնում մեզ համար՝ մի քիչ ավելի իրեն վստահելու, մենք տեսնենք կամ ոչ Իր նպատակը:

Աղոթք - Հայր, որ պատվում ենք Քեզ մեր խոսքերով, սակայն շատ հաճախ մեր գործերը ցույց չեն տալիս, թե մենք Քեզ վստահում ենք, օգնիր մեզ տեսնել Քեզ, որ աշխատում ես բոլոր պարագաներում, որքան էլ դժվարին թվան մեզ դրանք:

Աստծո շնորհով մենք կարող ենք շնորհակալ լինել ամեն բանի համար:

Կարդա՛ր Ա ԹԵՍ. 5.16-18

Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը՝ Քրիստոսով:
Ա ԹԵՍ. 5.18

Սկսիր այնտեղից, որտեղ ես

Այսօր տեսա նոր աճող փոքր մանուշակագույն մի բողբոջ ծաղիկ, թոմս Գրեյ բանաստեղծի բառերով. «Կորցնելով իր անուշ բույրը անապատի մեջ»: Վստահ էի, որ ոչ ոք չէր տեսել այդ ծաղիկը նախապես ու նաև ոչ ոք չպիտի տեսնի: Ինքս ինձ մտածեցի. «Ինչո՞ւ է այս գեղեցկությունը այստեղ»:

Բնություն մեջ երբեք վատնում չի լինում: Դա ամեն օր ցույց է տալիս Արարչի ճշմարտությունը, բարությունն ու գեղեցկությունը: Ամեն օր բնությունը նոր հաստատում է կատարում Աստծո փառքի մասին: Տեսնո՞ւմ ենք նրան արարչագործ գեղեցկության մեջ, երբ նույնիսկ չգիտակցելով անտարբեր ենք մնում:

Ամբողջ բնությունը հայտարարում է Արարչի գեղեցկությունը: Ու այդ ճշմարտության դիմաց մեր պատասխանը կարող է լինել միմիայն պաշտամունք, փառաբանություն ու երախտագիտություն՝ տեսնելով արևածագի գեղեցկությունը, ծաղկի գեղեցկությունն ու որևէ ծառի համաչափություն: Հեղինակ Սի. էս. Լուիսը նկարագրում է մի տաք օր իր գրասանքը անտառում, իր ընկերոջը հարց տալուց հետո, թե ինչպես կարելի է մշակել շնորհակալ մի սիրտ Աստծու հանդեպ: Նրան ընկերակցող մի բարեկամ առվակիին մոտենալով իր երեսն է լվանում ու հարցնում. «Ինչո՞ւ չսկսել այստեղից»: Լուիսն ասում է, որ ճիշտ այդ պահին մի սկզբունք է սովորել. «Սկսիր այնտեղից, որտեղ ես»: Մի փոքր ջրվեժ, մի մեղմ գեփյուռ, մի փոքրիկ թռչուն եւ մի նոր բողբոջող ծաղիկ: Ինչո՞ւ չսկսել մեր շնորհակալությունը այսպիսի փոքր բաներով:

Աղոթք - Հայր, թող որ միշտ հիշենք, թե Դու գեղեցկությունը դրել ես այստեղ, որովհետև դա ցուցանում է Քո նկարագիրը: Փառք Քեզ միշտ:

Աստված է պատճառն ամեն գեղեցկության:

Սթիվ դը Ուիթ

Կարդա՛ր
Մաղմոս 135.1-9

Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը:

Մաղմ. 18.1

Փորձված ու սրբագործված

Մի հարցազրույցի ժամանակ երգչուհի և երգահան Մերեդիթ Անդերուզը խոսեց իր ճնշումների մասին, մինչ փորձում էր հավասարակշռել իր հոգևոր առաքելությունը, ստեղծագործական աշխատանքը, ընտանեկան հարցերն ու մայրական պարտականությունները. «Զգացի, որ Աստված զտումի միջով էր անցկացնում ինձ, գրեթե ճգմելու աստիճան»:

Հորն էլ նման ճնշումների տակ էր, երբ կորցրել էր իր ունեցածը, ընտանիքն ու առողջությունը: Իսկ ամենից ավելի, հակառակ այն բանի, որ ամեն օր Տիրոջն էր երկրպագում, զգաց, որ Աստված իրեն անտեսում էր: Այնպես էր թվում, թե Աստված իր կյանքից դուրս էր: Նա չէր տեսնում Աստծուն, երբ արևելք, արևմուտք, հյուսիս կամ հարավ էր դարձնում իր հայացքը:

Այս հուսահատությունն ու վհատությունն մեջ նա հայտնություն պահ ունեցավ: Իր հավատքը խավարի մեջ պլպլացող մոմի նման կյանքի նշույլ տվեց: Նա ասաց. «...ինքը գիտէ իմ վարքը. քննել-կշռել է, կարծես թե ոսկի» (Հոբ 23.10): Տիրոջը ապավինողները փորձարկվում են ու սրբագործվում, երբ Աստված գործածում է նեղությունը, կրակով այրվելու մեր ինքնավստահությունը, հպարտությունը և իմաստությունը: Շատ անգամ այնպես է թվում, որ Աստված լուռ է մնում այս նախաձեռնություն ընթացքում և չի պատասխանում մեր աղաղակներին. կարող է պատահել, որ Նա մեզ առիթ է տալիս գորանալու մեր հավատքի մեջ:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, օգնիր, որ հավատամ, թե Դու ինձ հետ ես, նույնիսկ երբ ես չեմ կարող տեսնել Քեզ, որ գործում ես կյանքիս մեջ: Քեզ եմ հանձնվում իմ բոլոր նեղությունների մեջ:

Հավատքի փորձության պահերը հավատքի զորության պահեր կարող են լինել:

Կարդա՛ր
Հոբ 23.1-12

Քանի որ ինքը
գիտե իմ վարքը,
քննել-կշռել է,
կարծես թե ոսկի:
Հոբ 23.10

Ուրախության նշույլ տալի՞ս է

Երկու միլիոն օրինակ է վաճառվել երիտասարդ ճապոնացի կնոջ՝ Մարի Կոնդոյի «Վերադասավորելու ու կազմակերպելու» մասին հրատարակած գրքից: Գրքի կենտրոնական միտքն է օգնել մարդկանց, որ կարողանան ձերբազատվել իրենց տանն ու պահարանում գտնվող անպետք իրերից: Նա ասում է. «Վերցրու ցանկացած առարկա և հարց տուր ինքդ քեզ, թե այն արդյոք քեզ ուրախության նշույլ տալի՞ս է»: Եթե պատասխանը դրական է, պահիր այն, եթե ոչ՝ նետիր: Պողոս առաքյալը թախանձում է Փիլիպպեի հավատացյալներին, որ ուրախություն փնտրեն Քրիստոսի հետ իրենց ունեցած հարաբերության մեջ: «Ամեն ժամանակ Տիրոջով ուրախ եղեք. դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք» (Փիլիպ. 4:4): Փոխանակ շփոթ ստեղծելու կյանքի մեջ, նա հորդորում է աղոթել ամեն բանի համար և թույլ տալ, որ Աստծո խաղաղությունը պահպանի իրենց սրտերն ու մտածումները (Հմ. 6-7):

Նայելով մեր ամենօրյա պարտավորություններին ու պարտականություններին՝ տեսնում ենք, որ ամեն բան ուրախալի չէ: Սակայն կարող ենք հարց տալ. «Ինչպես կարող է սա ուրախության նշույլ տալ Աստծո սրտին ու իմ սրտին»: Որևէ փոփոխություն մեր արարքներում կարող է բարեփոխում առաջացնել մեր ունեցած զգացումների մեջ դրա հանդեպ:

Պողոսի հրաժեշտի խոսքերը մտածման սնունդ են և ուրախության օրինակ:

Աղոթք - Տե՛ր, ցույց տուր ինձ, թե Դու ինչպես ես ցանկանում ուրախության նշույլ տալ իմ ամենօրյա պարտականություններին մեջ:

Տիրոջ վրա կենտրոնանալը ուրախության սկիզբն է:

Կարդա՛ր
Փիլիպ. 4.4-9

Այսուհետև, եղբայր-ներ, ինչ որ ճշմարիտ է, պարկեշտ... արդար, սիրուն, բարի անուն... առաքինություն է թե գովասանք է, ան մտածեցեք:

Փիլիպ. 4.8

Բարին, չարը և վատը

Միրելի բարեկամներիցս մեկը բՋՋային հեռախոսով հաղորդագրություն ուղարկեց. «Շատ ուրախ եմ, որ մենք կարող ենք իրար ասել բարին, չարն ու վատը»: Մենք տարիներով բարեկամներ ենք եղել և սովորել ենք մեր ուրախություններն ու ձախողությունները իրար հետ կիսել: Մենք գիտենք, որ կատարյալ չենք, ուստի մեր դժվարությունները բաժանում ենք, սակայն ուրախանում ենք իրար հաջողություններով:

Դավիթն ու Հովնաթանը ունեին հաստատ բարեկամություն՝ սկսած Դավիթի՝ Գողիաթի հանդեպ տարած հաղթանակի օրերից (Ա.Թագ. 18.1-4): Նրանք կիսեցին նաև իրենց վախերը Հովնաթանի հոր զայրույթի վատ օրերին (18.6-11, 20.1-2): Վերջապես նրանք միասին տառապեցին այն օրերին, երբ Սավուղը ծրագրեց Դավիթին սպանել (20.42):

Միրելի բարեկամները իրար չեն լքում, երբ հանգամանքները փոխվում են: Նրանք մեր կողքին մնում են բարի ու չար օրերին: Բարի բարեկամները մեր ուղղորդում են վատ օրերին, երբ փորձության ենք ենթարկվում՝ Աստծուց հեռանալով:

Ճշմարիտ բարեկամները բարի, չար ու վատ օրերին հավատարիմ Աստծո տված պարգևներ ենք, որովհետև նրանք են ցույց տալիս, թե որն է կատարյալ բարեկամը: Աստված մեզ հիշեցնում է. «Քեզ չեմ թողնի ու երեսից չեմ զցի» (Եբր. 13.5):

Աղոթք - Միրելի՛ Տեր, շնորհակալ եմ իմ կյանքում Քո դրած բարի բարեկամների համար, սակայն սրանից ավելի շնորհակալ եմ Քո բարեկամության համար:

Կարդա՛ր
Ա Թագ, 20. 35-42

Քեզ չեմ թողնի ու
երեսից չեմ զցի:
Եբր. 13.5

Բարեկամը առաջին անձն է, որ ներս է գալիս, երբ ամբողջ աշխարհը դուրս է ելնում:

Փաստաբանը

Տլորիդայի բանտի խցիկից Կլարենս Իրլ Գիդեոնը մի նոթ գրեց 1962-ի հունիսին՝ խնդրելով Միացյալ Նահանգների Գերագույն ատյանից վերաքննության ենթարկել իր դատապարտվածությունը մի ոճրի համար, որ ինքը չէր կատարել: Նա ավելացրեց նաև, թե ինքը հնարավորություն չունեի փաստաբան վարձելու:

Մի տարի անց Ատյանը հաստատեց, որ նրանք, ովքեր չեն կարող պաշտպանի ծախսերը հոգալ, պետք է ունենան հասարակական պաշտպան՝ փաստաբան: Այս որոշումով և դատարանի կողմից նշանակված փաստաբանի օգնությամբ Կլարենս Իդեոնը ազատ արձակվեց: Սակայն ի՞նչ պիտի լինի, եթե մենք անմեղ չենք: Ըստ Պողոս առաքյալի՝ մենք հանցավոր ենք: Սակայն Երկնային դատարանը փաստաբան է տրամադրում, որ Աստծո նյութական օժանդակությամբ առաջարկում է պաշտպանել ու հոգալ մեր հոգու մասին (Ա Հովհ. 2.2): Հոր կողմից Հիսուսը գալիս է ազատության խոստումով, որ նույնիսկ բանտարկյալները նկարագրել են այն որպես ավելի լավ, քան այն, ինչ փորձառություն են ունեցել բանտից դուրս: Դա սրտի ու մտքի ազատություն է: Հակառակ այն բանի, որ կարող ենք չարչարվել մեր գործած և մեր դեմ գործված մեղքերով, Տեր Հիսուսը լինում է մեր բարեխոսն ու պաշտպանը Աստծո ատյանի առջև: Հիսուսը՝ մեր դատապաշտպանը, հեղաշրջում է մեր կեցվածքը կորցրած հույսի, վախի կամ զղջումի հանդեպ:

Կարդա՛
Ա Յովհ. 1.8 - 2.2

Եթե մեկը մեղանչի, բարեխոս ունենք Հոր մոտ: Հիսուս քրիստոս արդարին:

Ա Յովհ. 2.1

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, խնդրում ենք օգնիր մեզ գիտենալու, թե ինչ է նշանակում սիրո ազատությունը ունենալ: Թող այս ազատության փորձառությունը ունենանք նույնիսկ այն տեղերում, ուր մենք տեսնում ենք բանտարգելություն:

Նա, որ մահացավ մեր փոխարեն, հիմա ապրում է որպես մեր պաշտպան:

Յիսուսի վրա հենվել

Երբ գիշերը գլուխս դնում եմ բարձիս վրա և աղոթում, երևակայում եմ, թե հենվում եմ Հիսուսին: Երբ սա անում եմ, հիշում եմ Հովհաննեսի մասին ասվածը Աստծո Խոսքի մեջ: Հովհաննեսն ինքն իր մասին գրում է, թե ինչպես էր նստել Հիսուսի կողքին Վերջին Ընթրիքի ժամանակ. «Եվ նրա աշակերտներից մեկը, ում որ Հիսուսը սիրում էր, Հիսուսի կողքին էր նստած» (Հովհ. 13.23):

Հովհաննեսը գործածեց «աշակերտներից մեկը, ում որ Հիսուսը սիրում էր» բառերը՝ ակնարկելով իր անձին՝ առանց հիշելու իր անունը: Նա նաև նկարագրում է հատկանշական առաջին դարում Իսրայելի մեջ ինքնատիպ խնջույքի մի պատկեր, ուր սեղանը

Կարդա՛
Յովհ. 13.12-26

Եվ նրա աշակերտներից մեկը, ում որ Յիսուսը սիրում էր, Յիսուսի կողքին էր նստած:

Յովհ. 13.23

չատ ավելի ցածր էր մեր օրերի սեղաններից: Այդ օրերի սովորությունը կողքի թեքվելն էր սեղանի մոտ առանց աթոռի, բարձի կամ փսիաթի: Հովհաննեսը Հիսուսին շատ մոտ էր նստած, երբ շրջվեց և «Հիսուսի լանջովն ընկած» (Հմ. 25)՝ հարց տվեց:

Հովհաննեսի այս մոտիկությունը այդ պահին մեզ տալիս է լավ օրինակ մեր՝ իր հետ ունենալիք կյանքի մասին: Մենք չենք կարող Հիսուսին դիպչել ֆիզիկապես, սակայն կարող ենք մեր կյանքի դժվարին պայմաններում Իրեն վստահել: Հիսուսն ասաց. «Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ւր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28): Որքան օրհնյալ ենք, որ ունենք հավատարիմ Փրկիչ, որին կարող ենք վստահել մեր կյանքի ցանկացած պահին: Նրան հենվո՞ւմ ես այսօր դու:

Աղոթք - Սիրելի՛ Յիսուս Փրկիչ, օգնի ինձ, որ կարողանամ Քո վրա հենվել այսօր և վստահեմ Քեզ որպես իմ հույսի ու գործության աղբյուրի: Իմ բոլոր հոգսերը Քեզ վրա եմ դնում ու Քեզ եմ պաշտում, որովհետև հավատարիմ Տերը Դու ես:

Միայն Յիսուսը կարող է տալ մեզ անհրաժեշտ հանգիստը:

Ամեն բան գիտեմ

Մեր տղան ու հարսը անակնկալ անհանգստություն ունեցան: Մեր թոռնիկ Գամրոնը թոքաբորբ և փողակացավ ունեցավ, և անհրաժեշտություն եղավ հիվանդանոց տեղափոխել: Նրանք խնդրեցին մեզնից, որ հինգ տարեկան Նաթանին դպրոցից վերցնենք ու տուն տանենք: Կինս և ես ուրախ էինք այս ծառայությունը մատուցելու համար: Երբ Նաթանը մեքենան նստեց, կինս հարցրեց. «Անակնկալ էր քեզ համար, երբ այսօր մենք քո ետևից եկանք»: Նա պատասխանեց. «Ո՛չ»: Իսկ երբ հարցրինք՝ ինչո՞ւ, ասաց. «Որովհետև ես ամեն բան գիտեմ»:

Հինգ տարեկան մանուկը հավակնում է ասել, որ ինքն ամեն ինչ գիտի: Մենք, որ տարիքով ավելի մեծ ենք, մտածում ենք, թե ավելին գիտենք: Սակայն մենք ավելի շատ հարցեր ունենք, քան պատասխաններ: Մենք մտածում ենք կյանքի ինչուների, երբերի և ինչպեսների մասին՝ հաճախ մոռանալով, որ ամեն բան չգիտենք, սակայն ճանաչում ենք այն Աստծուն, որ ամեն ինչ գիտի: Սաղմոս 138.1-ը և 3-ը պատմում են մեր ամենազետ և ամենողորմ Աստծու մասին, որ մեզ լավ է հասկանում: Դավիթն ասում է. «Տե՛ր, ինձ փորձեցիր ու ճանաչեցիր ինձ... Իմ շավիղներն ու վիճակը դու քննեցիր, և բոլոր ճանապարհներս նախապես տեսար»: Որքան մխիթարական է իմանալ, որ Աստված մեզ կատարելապես սիրում է ու գիտի, թե ինչեր ենք դիմազրավում մեր առօրյայում: Նա գիտի ինչպես օգնել մեզ կյանքի բոլոր հանգամանքներում:

Մեր իմացությունը միշտ էլ սահմանափակ պիտի լինի, սակայն Աստծուն ճանաչելը ամենից կարևորն է: Մենք կարող ենք նրան վստահել:

**Կարդա՛ր
Սաղմ. 138.1-18**

Իմ շավիղներն ու վիճակը դու քննեցիր, և բոլոր ճանապարհներս նախապես տեսար:

Սաղմ. 138.3

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ Դու ամեն բան գիտես իմ մասին, ու գիտես նաև, թե ինչի կարիքն ունեմ:

Աստծուն ճանաչելը ամենից կարևորն է:

Տե՛ս, թե Զիսուսն ինչ է արել

Փորբիկ տղան ութ տարեկան էր, երբ իր ծնողների բարեկամ Վալիին հայտարարեց. «Ես սիրում եմ Տեբ Հիսուսին և ուզում եմ մի օր Աստծուն ծառայել օտար երկրի մեջ»: Հաջորդ տասը տարիներին Վալին աղոթեց այդ փորբիկի համար՝ տեսնելով նրա մեծանալը: Տարիներ հետո, երբ այդ երիտասարդը Մալի գնալու համար դիմեց միսիոներական մի կազմակերպության, Վալին նրան ասաց. «Հիմա ժամանակն է: Երբ լսեցի, թե ինչ ես ուզում անել, որոշակի գումար մի կողմ դրեցի՝ սպասելով այս բարի լուրին»: Վալին ջերմ սիրտ ուներ նրանց հանդեպ, ովքեր աշխատում են Աստծո բարի լուրը հասցնել մարդկանց:

Կարդա՛ր
Ղուկաս 8.1-8

...այդ շնորհում էլ
ավելանաք:
Բ Կորնթ. 8.7

Հիսուսը և իր աշակերտները կարիք ունեին նյութական օժանդակության, երբ շրջում էին քաղաքից քաղաք ու գյուղեգյուղ՝ տարածելով Թագավորության ավետիսը (Ղուկ. 8.1-3): Մի խումբ կանայք, ովքեր բուժվել էին չար հոգիներից ու հիվանդություններից, օգնություն հասցրին «իրենց ունեցվածքներով»: Մարիամ Մագդաղենացին նրանցից մեկն էր, ումից յոթ դեներ էին դուրս եկել: Մյուսը Հովհաննան էր՝ Հերովդեսի տան վերակացուներից մեկի կինը: Ոչինչ չգիտենք Շուշանի և «չատ ուրիշների» մասին (Հմ. 3), սակայն գիտենք, որ Հիսուսը նրանց հոգևոր կարիքները հոգացել էր: Այժմ նրանք իրեն ու իր աշակերտներին օգնում էին իրենց ունեցածից տալով:

Երբ նկատի ունենանք, թե Հիսուսը ինչ է արել, Աստվածային սիրով ուրիշների համար լեցուն նրա սիրտը մերը կլինի: Խնդրենք Աստծուց, որ մեզ օգտագործի ինչպես ուզում է:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ՝ իմանալու, թե ինչպես կարող եմ Բարի Լուրը տարածել և պատմել, թե Զիսուսն ինչ է արել մեզ համար, և մի ծառայություն բերել միսիոներության համար:

Զիսուսն իր ամբողջ էությունը տվեց: Ուստի արժանի է ամեն ինչի:

Կասկածի մահը

Ճանաչում ենք նրան որպես «կասկածող թովմաս» (տե՛ս՝ Հովհ. 20.24-29), սակայն այս բնորոշումը արդար չէ: Մեզնից ո՞վ պիտի հավատար, որ մեր խաչված ու սպանված առաջնորդը հարուժյուն էր առել: Կարող ենք նրան կոչել «քաջ թովմաս»: Ի վերջո, թովմասը ցույց տվեց տպավորիչ քաջութիւն:

Ղազարոսի մահից հետո Հիսուսը ասել էր. «Եկեք նորից Հրեաստան գնանք» (Հովհ. 11.7)՝ բողոք առաջացնելով աշակերտ-ների մոտ, որոնք ասացին. «Ռա՛բբի, հրեաներն ուզում էին քեզ քարկոծել, ու դարձյալ այնտե՞ղ ես գնում» (Հմ. 8): Թովմասն էր, որն ասաց. «Մենք էլ գնանք նրա հետ մեռնենք» (Հմ. 6): Թովմասի միտումները ավելի ազնիվ էին, քան իր արարքները:

Հիսուսի ձերբակալութիւնից հետո թովմասը մյուս աշակերտ-ների հետ թողեց ու փախավ (Մատթ. 26.56)՝ թողնելով Պետրոսին ու Հովհաննեսին Քրիստոսի հետ քահանայապետի դավթում: Միայն Հովհաննեսը հետևեց Հիսուսին մինչև խաչ:

Հակառակ նրան, որ թովմասը ականատես եղավ Ղազարոսի հարուժյանը (Հովհ. 11.38-44), չհավատաց, որ խաչված Քրիստոսը մահին հաղթել էր: Կասկածող թովմասը մինչև չտեսավ հարուժյուն առած Տիրոջը, չկարողացավ ասել. «Տե՛ր իմ ու Աստվա՛ծ իմ» (Հովհ. 20.28): Հիսուսի պատասխանը կասկածողին վստահութիւն տվեց ու մեզ էլ անսահման մխիթարութիւն. «Քանի որ տեսար ինձ՝ հավատացիր. երանի՛ նրանց, ովքեր չեն տեսել, բայց հավատում են» (Հմ. 29):

Աղոթք - Յայր, սովորեցրու մեզ գործնականի վերածել Քո ու Քո բարության մասին մեր իմացածը և հավատքով Քեզ վստահել մեր չիմացած բաների մեջ:

Կարդա՛ր Յովհ. 11.1-16

Եթե նրա ձեռքերին մեխերի նշանը, և իմ մատը մեխերի տեղը չխրեմ, և իմ ձեռքը նրա կողը չխրեմ, չեմ հավատա:

Յովհ. 20.25

Ճշմարիտ կասկածը լույս է փնտրում.

անհավատությունը ընկղմված է մնում խավարի մեջ:

Բացահայտված սեր

Երբ խորհրդավոր կերպով մի շարք «ես քեզ սիրում եմ» վարդազույն գրություններ երևացին Օնտարիոյի Ուիլինդ գյուղաքաղաքում, տեղացի լրագրող Մարի-Էնն Ֆորդը որոշեց քննել: Նրա հետախուզությունը ոչ մի արդյունք չտվեց: Շաբաթներ անց նոր ցուցատախտակներ երևացին՝ տալով մի զբոսայգու անուն ու ժամանակ: Գյուղաքաղաքի մի խումբ հետաքրքրված բնակիչների ուղեկցությամբ Ֆորդը ճիշտ ժամանակին գնաց այգի: Այնտեղ նա հանդիպեց մի մարդու, ով լավ ծածկել էր դեմքը: Պատկերացրեք նրա զարմանքը, երբ տեսավ, որ խորհրդավոր անձը իր ընկերն էր՝ Ռայան Սենթ Դենիսը, որ ամուսնուկություն առաջարկեց՝ հանձնելով մի գեղեցիկ ծաղկեփունջ: Ֆորդը ուրախությամբ ընդունեց առաջարկը:

Կարդա՛ր Ա Յովհ. 4.9-16

Աստու սերը մեր մեջ նրանով երևաց, որ Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կյանք ունենանք:

Ա Յովհ. 4.9

Սենթ Դենիսի սիրո արտահայտությունը իր սիրելիին թվում է մի քիչ շռայլ, սակայն Աստծո սիրո զբաղումը մեր հանդեպ պակաս շռայլություն չէ: «Աստծու սերը մեր մեջ նրանով երևաց, որ Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կյանք ունենանք» (Ա. Հովհ. 4.9):

Հիսուսի սերը նշան չէ՝ վարդի նման փոխանցված մեկ անձից մյուսին: Նա երկնային էակն է, որ Իր կյանքը տվեց, որպեսզի ամեն ոք, որ հավատա, փրկություն ու հավիտենական կապի ուխտ ունենա Աստծո հետ: Ոչինչ չի կարող բաժանել Քրիստոսյային «Աստծու սիրուց, որ մեր Տեր Հիսուսի Քրիստոսի մեջ է» (Հռոմ. 8.39):

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ ամեն հնարավոր միջոցով ցույց ես տալիս, որ ինձ Դու սիրում ես: Օգնի՛ր, որ կարողանամ իմ սերը ցույց տալ քեզ:

Գիտենք, թե Աստված ինչքան է մեզ սիրում, որովհետև Իր Որդուն ուղարկեց մեզ փրկելու համար:

Փոքր ստեր և կատվիկներ

Մայրը նկատեց, որ չորս տարեկան էլիասը շտապելով հեռացավ նորածին կատուններից: «Կատվիկներին դիպա՞ր», - հարցրեց մայրը, որովհետև նրան արգելել էր նրանց դիպչել: «Ո՛չ», - ասաց էլիասը: Մայրը հարցրեց. «Փափո՞ւկ էին»: «Այո՛, - ասաց նա, - և սև կատվիկը մլավեց»:

Մանուկների պարագայում մենք ժպտում ենք նման պատասխանների վրա: Սակայն այս երեխայի անհնազանդությունը հաստատում է մեր մարդկային նկարագիրը: Ոչ ոք չի սովորեցնում չորս տարեկան երեխային ստել: Դավիթը գրում է. «Բարությունից ավելի չարություն սիրեց և արդար խոսքից ավելի՝ անօրենություն» (Սաղմ. 51.5): Պողոս առաքյալն ասաց. «Սրա համար, ինչպես որ մեկ մարդու միջոցով մեղքն աշխարհ մտավ, այդ մեղքով էլ՝ մահը, և այդպես էլ մահը բոլոր մարդկանց վրա տարածվեց, որովհետև բոլորը մեղանչեցին» (Հռոմ. 5.12): Այս անհաճո լուրը վերաբերում է թագավորներին, չորս տարեկաններին, քեզ և ինձ:

Սակայն շատ հույս կա. «Սակայն օրենքի մեջտեղ գալով հանցանքը շատացավ. բայց որտեղ որ մեղքն ավելի եղավ, այնտեղ շնորհն ավելիս ևս շատացավ» (Հռոմ. 5.20):

Աստված չի սպասում, որ մենք մեղք գործենք, ու ինքը պատժի մեզ: Նա շնորհ տվող, ներող և նորոգող Աստվածն է: Մենք միայն կարիք ունենք տեսնելու մեր մեղքերը ու ապաշխարության հոգով իրեն մոտենալու:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհ արա ինձ մեղավորիս:

Դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար, որոնք մարմնավոր կերպով չեն վարվում...: Հռոմ.8.1

Կարդա՛ր Հռոմ. 5.12-21

Որպեսզի ինչպես որ մեղքը մահվան միջոցով թագավորեց, այնպես էլ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով շնորհը արդարությամբ թագավորի հավիտենական կյանքի համար: Հռոմ. 5.21

Ջնոտիքի բակի հանճարը

Նո Պուլրիֆոյը իր գործունեությունն սկսեց իբրև «Հավաքորդ» արվեստագետ Լոս Անջելեսի Ուոթս շրջանի 1965-ի խռովություններից հետո երեք տոննա փլատակներով: Կոտրած հեծանիվի ակերից, ջարդված հեռուստացույցից եւ անպետք դարձած իրերից նա ու բարեկամը պատրաստեցին կոթողներ, որոնք ուժեղ պատգամ փոխանցեցին մարդկանց մասին, ովքեր լքված էին համարվում ժամանակակից հասարակության կողմից: Մի լրագրող Պուլրիֆոյին անվանեց «Ջնոտիքի բակի հանճար»:

Հիսուսի ժամանակ շատերը մեղավոր ու Աստծուց պատժված էին համարում նրանց, ովքեր հիվանդություններ ու ֆիզիկական դժվարություններ ունեին՝ նրանց անտեսելով ու լքելով: Սակայն երբ Հիսուսը և իր աշակերտները հանդիպեցին ի ծնե կույր մի մարդու, Տերն ասաց, թե նրա վիճակը մեղքի հետևանք է՛ք, այլ առիթ՝ ցույց տալու Աստծո զորությունը: «Քանի դեռ աշխարհում եմ, ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. 9.5): Երբ կույր մարդը հետևեց Հիսուսի հանձնարարություններին, նրա աչքերը բացվեցին: Երբ կրոնական առաջնորդները հարցաքննեցին մարդուն, նա պարզապես պատասխանեց. «... մի բան գիտեմ, որ կույր էի և հիմա տեսնում եմ» (Հովհ. 9.25):

Դեռևս Հիսուսը մեծագույն «Ջնոտիքի բակի հանճարն» է մեր աշխարհում: Մենք բոլորս էլ մեղքի պատճառով ենք տուժում, սակայն Նա մեր կոտրած կյանքերը առնում ու ձևավորում է իր պատկերով:

Աղոթք - Տե՛ր, այսօր շնորհակալություն եմ հայտնում Քո հիանալի շնորհի համար:

Հիսուսը կյանքի վերահաստատողն ու նորոգողն է:

Կարդա՛ր
Յովհ. 9.1-11

...մի բան գիտեմ,
որ կույր էի և հիմա
տեսնում եմ:
Յովհ. 9.25

Վաղվա տեսողությունը

Ինձ համար հաճույք է դիտել պայծառ ու կապույտ երկինքը: Երկնականամարը գեղեցիկ մասն է մեր մեծ Ստեղծիչ Աստծու գլուխգործոցի, որ մեզ տրված է ըմբոշխնելու համար: Երևակայեք, թե օդաչուները որքան պիտի սիրեն տեսարանը: Նրանք զանազան օդաչուական բառեր են գործածում նկարագրելու երկինքը՝ թռչելու համար: Սակայն իմ ամենից սիրածը «Դու կարող ես վաղը տեսնել» արտահայտությունն է:

«Վաղվա տեսողությունը» մեր տեսողությունից այն կողմ է: Շատ անգամ մենք նույնիսկ պայքարում ենք տեսնելու ու հասկանալու, թե կյանքը ինչ է ցույց տալիս մեզ այսօր: Աստվածաշունչն ասում է մեզ. «Դուք, որ վաղվա օրը չգիտեք: Ի՞նչ բան է ձեր կյանքը. մի գոլորշի է, որ մի քիչ ժամանակ երևում է ու հետո աներևութանում» (Հակ. 4.14):

Սակայն մեր սահմանափակ տեսողությունը պատճառ չէ վհատության: Ընդհակառակը, մենք վստահում ենք Աստծուն, որ պարզ տեսնում է մեր պարագան և գիտի, թե ինչի կարիք ունենք, մինչ դիմագրավում ենք մեր առջև գտնվող բոլոր մարտահրավերները: Պողոս առաքյալը գիտեր սա. դրա համար էլ մեզ քաջալերում է հուսադրող խոսքերով. «Որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե երևույթով» (Բ. Կորնթ. 5.7): Երբ Աստծուն վստահենք մեր օրը և անտեսանելի վաղվա օրը, կյանքի՝ մեր առջև դրած ոչ մի բանի համար չպետք է մտահոգվենք: Ոմանք Նրա հետ են քայլում, և Նա գիտի ինչ կա առջևը. Նա գորեղ ու իմաստուն է ամեն ինչ Իր ձեռքը վերցնելու համար:

Աղոթք - Տե՛ր, գիտեմ, որ պիտի վստահեմ Քեզ այսօրվա և վաղվա համար, որովհետև Դու բարի, սիրող, իմաստուն ու հզոր Աստված ես: Սովորեցրու ինձ չմտահոգվել:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 5.1-9

Որովհետև
հավատով ենք
ընթանում և ոչ թե
երևույթով:
Բ Կորնթ. 5.7

Աստված տեսնում է սկիզբն ու վերջը:

Փարոսը

Ռուանդայում «Փարոս» անունով ծառայություն կենտրոնը խորհրդանշում է փրկություն: Այն գտնվում է մի հողի վրա, ուր 1994-ի ցեղասպանություն ժամանակ երկրի նախագահը ուներ մի հսկա տուն: Սակայն նոր կառույցը բարձրացվել է Գրիստոնյանների կողմից՝ իբրև լուսի ու հույսի խորհրդանիշ: Կան առաջնորդներ պատրաստելու նոր Սուրբ Գրոց դպրոց, ինչպես նաև հյուրանոց, ճաշարան և այլ կենտրոններ գաղութի համար: Մոխիրներից նոր կյանք է առաջացել: Նրանք, որ կառուցեցին «Փարոսը», նայում են Հիսուսին՝ որպես հույսի ու փրկության աղբյուրի:

Կարդա՛ր
Եսայի 61.1-6

...մոխրի փոխարեն
ուրախության օծման
յուղի պիտի
արժանանան:
Եսայի 61.3

Երբ Հիսուսը շաբաթ օրը Նազարեթի ժողովարանը մտավ, կանգնելով կարգաց Եսայի մարգարեի գրքից ու հայտարարեց, թե Ինքն է խոստացված Օծյալը, և այդ գրվածը իրագործվեց (Ղուկ. 4.14-24): Նա Նա էր, որ եկել էր օգնելու սրտով կոտրվածներին, փրկություն ու ներում տալու: Տեր Հիսուսի մեջ տեսնում ենք մոխրից դուրս եկող գեղեցկությունը (Ես. 61.3):

Մենք տեսնում ենք գազանությունը Ռուանդայի ցեղասպանության, երբ նկատի ենք ունենում կես միլիոնից ավելի զոհերին, ու չենք իմանում ինչ ասել այս ահավորության դիմաց: Սակայն գիտենք, թե Աստված կարող է բարիին գործակից անել այս մեծ չարությունը այստեղ՝ աշխարհի վրա, կամ երկնքում: Նա, որ բերկրանքի հոտավետ յուղ է տալիս սուգի փոխարեն, կարող է մեզ էլ հույս տալ նույնիսկ խավարագույն հանգամանքներում:

Աղոթք - Տեր Զիսուս Քրիստոս, մեր սրտերը ցավում են, երբ լսում ենք մարդկանց կրած նեղությունների ու տառապանքների մասին: Ողորմի՛ր մեզ, խնդրում ենք:

Զիսուսը եկավ մեզ հույս տալու մեր կյանքի խավարագույն հանգամանքների մեջ:

Պինատայից ավելի լավ

Մեքսիկական հավաքույթ չի լինում առանց պինատայի: Պինատան կավե կամ խավաքարտե աման է՝ լցված շարաքով ու անուշեղենով: Փոքրիկները փորձում են գավազանի հարվածով կոտրել ամանը ու վայելել պարունակությունը:

Վանականները գործածել են պինատաները 16-րդ դարում՝ դաս սովորեցնելու Մեքսիկայի տեղացիներին: Պինատաները յոթ գլուխներով աստղեր էին, որոնք ներկայացնում են յոթ մահացու մեղքերը: Պինատաներին հարվածելը ցույց էր տալիս պայքարը չարի դեմ, ու երբ պարունակությունը գետին ընկներ, մարդիկ կարող էին վերցնել ու տուն տանել որպես մրցանակ իրենց ունեցած հավատի համար:

Սակայն մենք չենք կարող չարի դեմ պայքարել միայնակ: Աստված մեր ջանքերին չի սպասում, որպեսզի իր ողորմությունը ցույց տա: Եփեսացիներին ուղղված նամակը մեզ սովորեցնում է, որ «չնորհով եք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է» (Եփ. 2.8): Մենք չենք հաղթում մեղքին. Բրիստոսն արել է այդ: Փոքրիկները կռվում են պինատայի անուշեղենի համար, սակայն Աստծո պարգևը մեզ բոլորիս գալիս է, երբ հավատում ենք Հիսուսին: Աստված «մեզ Բրիստոսով օրհնեց ամեն հոգևոր օրհնություններով» (Եփ. 1.3): Մենք մեղքերի թողություն ունենք, փրկություն, որդեգրություն, նոր կյանք, ուրախություն, սեր և շատ ուրիշ բաներ: Մենք այս բոլոր օրհնությունները չենք ստանում, որովհետև հավատքը պահել ենք ու զորավոր ենք, այլ որովհետև հավատում ենք Հիսուսին: Հոգևոր օրհնությունները միայն տրվում են շնորհով, որին արժանի ենք:

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, շնորհի համար, որ մե՛ծ է ու ձո՛ր:

Մենք շնորհով ենք փրկվել: Դիմա վայելում ենք ամեն օրհնություն, որ շնորհով է տրվում:

Կարդա՛ր
Եփես. 2.1-10

Շնորհով եք դուք
փրկված:
Եփես. 2.5

Խոսող ծառը

Այս ծառը նախանձելի ծառ է: Աճելով գետի եզերքին՝ մտահոգվելու կարիք չունի եղանակի, ջերմաստիճանի և անորոշ ապագայի հարցերով: Իր արմատները դեպի ջրի հոսանքը երկարացնելով՝ այն սնունդ է առնում. իր ճյուղերը դեպի արևը ուղղած՝ շուք է տալիս նրանց, ովքեր ցանկանում են կիզիչ արևից պաշտպանվել:

Հակադրելով՝ Երեմիա մարգարեն մատնանշում է մի ցախ (Երեմ. 17.6): Երբ անձրևը դադարում է, և ամառվա արևը գետնի հողը փոշիի է վերածում, ցախը թառամում է՝ առանց շուք կամ պտուղ տալու:

Ինչո՞ւ է մարգարեն համեմատում ծաղկող ծառը չորացող ցախի հետ: Նա ուզում է, որ իր ժողովուրդը հիշի, թե ինչե՞ր պատահեցին Եգիպտոսի՝ իրենց գերությունից հրաշափառ ազատությունից հետո: Նրանք քառասուն տարի անապատում ապրեցին՝ գետեզերքին տնկված ծառի պես (2.4-6): Սակայն խոստացված երկրում իրենց ունեցած բարգավաճումով մոռացան իրենց պատմությունը. ապավինեցին իրենք իրենց և իրենց հորինած աստվածներին (Հմ. 7-8), նույնիսկ մինչև այն աստիճան, որ ուզեցին ետ՝ Եգիպտոս վերադառնալ (42.14):

Հետևաբար Աստված Երեմիայի միջոցով սիրով թախանձեց Իսրայելի զավակներին, ինչպես այսօր մեզ է թախանձում, հուսալու և վստահելու իրեն՝ նմանվելով գետի ծառին և ոչ թե ցախին:

Աղոթք - Հայր, շատ ձևերով ես մեզ սովորեցրել, որ միայն Քեզ կարելի է վստահել, նույնիսկ երբ անկարելի է Քեզ տեսնել: Խնդրում եմք օգնիր մեզ հիշելու, ինչ որ արդեն մեզ ցույց ես տվել:

Եկե՛ք հիշենք լավ օրերին, թե ինչ ենք սովորել նեղ օրերին:

Կարդա՛ր
Երեմիա 17.5-10

Նա կլինի ինչպես
հոսող ջրերի մոտ
աճած ծառ...:

Եր. 17.8

Համացանցային Ավետարանը

Բոստոնի Northeastern համալսարանի «Համացանցային նախադրումների» ծրագիրը սովորեցնում է, թե ինչպես էին 1800-ական թթ. լուրերը տարածվում օրաթերթերի միջոցով, որն այդ օրերի միակ լրագրական միջոցն էր: Եթե որևէ հոդված 50 և ավելի անգամ վերատպվեր, «Համացանցային» էր համարվում: Smithsonian թերթում Բրեդ Փեթերսոնը նշում է, որ 19-րդ դարի լրատվական մի հոդված, որ նկարագրում է Հիսուսի հետևորդների նահատակումը իրենց հավատքի համար, լույս է տեսնում 110 տարբեր հրատարակություններում:

Երբ Պողոս առաքյալը գրեց Թեսաղոնիկեի հավատացյալներին, խրախուսեց նրանց իրենց քաջության և ուրախ վկայության համար. «Տիրոջ խոսքը ձեր կողմից հռչակվեց ոչ միայն Մակեդոնիայում և Աքայիայում, այլև ամեն տեղ դուրս եկավ ձեր հավատն առ Աստված...» (Ա թես. 1.8): Ավետարանի պատգամը համացանցային կերպով տարածվեց նրանց միջոցով, որոնց կյանքերը հեղաշրջվել էին Հիսուս Քրիստոսով: Հակառակ նեղություններին ու հալածանքին նրանք չէին կարող լուռ մնալ:

Մենք հաղորդում ենք ներումի ու Քրիստոսով հավիտենական կյանքի պատմությունը ազնիվ սրտերով, օգնող ձեռքերով և անկեղծ խոսքերով: Ավետարանը բարեփոխում է ու հեղաշրջում մեզ ու նրանց կյանքը, որոնց հանդիպում ենք:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, օգնիր մեզ, որ քաջաբար վկայենք ուրիշներին Քո մասին:

Կարդա՛ր Ա թես. 1.1-10

...ոչ միայն Մակեդոնիայում և Աքայիայում, այլև ամեն տեղ դուրս եկավ ձեր հավատն առ Աստված...:

Ա թես. 1.8

Ավետարանից ավելի լավ լուր չկա. տարածիր խոսքը:

Կատարյալ շնորհ

Հիսուսի սովորեցրած բացարձակ իդեալը և բացարձակ շնորհը հակասական է թվում:

Հիսուսը երբեք չէր չնվազեցրեց Աստծու կատարյալ իդեալը: Լեռան Քարոզի մեջ Նա ասաց. «Արդ դուք կատարյալ եղեք, ինչպես որ կատարյալ է ձեր Հայրը, որ երկնքում է» (Մատթ. 5.48): Երբ մի օրենսդեմ հարցրեց, թե ո՞ր պատվիրանն է մեծ Օրենքի մեջ, Նա ասաց. «Միրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությունամբ, քո ամբողջ մտքով» (22.37):

Նույն Հիսուսը սիրով առաջարկեց բացարձակ շնորհ: Նա ներեց պոռնիկ կնոջը, խաչի վրա գամված ոճրագործին, աշակերտին, որ իրեն ուրացավ, և Սողոս անունով մի մարդու, որ նպատակ էր դրել Քրիստոնյաներին հալածել: Շնորհը բացարձակ է և ամենքի համար, նույնիսկ նրանց, ովքեր Հիսուսին խաչեցին. «Հայր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում» (Ղուկ. 23.34), իր վերջին խոսքերից մեկն էր:

Շատ տարիներ ես ինքս ինձ անարժան համարեցի, երբ նկատի ունեցա Հիսուսի բացարձակ իդեալները, և իր շնորհի որևէ գաղափար կորցրի: Երբ իմացա այս կրկնակի պատգամը, ետ գնացի ու հասկացա, որ շնորհի պատգամը հորդում է Հիսուսի կյանքի և սովորեցրածի մեջ:

Շնորհը անհույսի, կարոտյալի ու կոտրածի համար է, ովքեր չեն կարող միայնակ ինչ-որ բան անել: Շնորհը մեր բոլորի համար է:

Աղոթք - Հայր, Քո անսահման շնորհը մեզ է հասնում ու հիացնում է մեզ: Թող որ այսօր ապրենք որպես մարդիկ, ովքեր վայելում են Քո ամբողջական ներումը և Քեզ հետ վերանորոգված հարաբերությունը:

Հիսուսը կատարեց օրենքի կատարյալ պահանջները, որպեսզի մենք ունենանք իր շնորհի խաղաղությունը:

Կարդա՛ Մատթ.
5.43-48, Հովհ. 8.9-11

Հիսուսն էլ նրան ասաց. «Ես էլ չեմ դատապարտում քեզ...»:

Հովհ. 8.11

Վարդանի հավատքով դեպի մրցանակ

Հեռուստացույցի «Հիանալի մրցում» հայտագիրը ներկայացնում է մի ծրագիր, որին մասնակցում են տասը զույգ, որոնք օտար երկիր են ուղարկվում, ուր մրցում են՝ օգտագործելով զանազան փոխադրամիջոցներ, ինչպես ինքնաթիռ, շոգեկառք, մեքենա և հեծանիվ, մի տեղից մյուսը զնալով տեղեկություն ստանալու հաջորդ առաջադրանքի մասին: Նպատակը՝ զույգերից մեկի վերջնակետին հասնելն է մյուսներից առաջ ու մրցանակ շահելը: Պողոս առաքյալը բաղդատեց Քրիստոնեական կյանքը մրցումի հետ՝ ընդունելով, թե ինքը դեռևս չի հասել նպատակակետին: Նա ասաց. «Եղբայրներ, ես ինձ չեմ համարում, որ հասել եմ, բայց մի բան կա. հետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում եղողներն եմ ձգտում: Հետևում եմ դեպի նպատակը...»

**Վարդա՛ր՝
Փիլիպ. 3.12-21**

...հետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում եղողներն եմ ձգտում:
Դետևում եմ դեպի նպատակը...
Փիլիպ. 3.13-14

(Փիլիպ. 3.13-14): Պողոսը ետ չնայեց և չթողեց, որ իր անցյալի ձախողությունները իրեն կասեցնեն, ոչ էլ թույլ տվեց, որ ներկայի հաջողությունները իրեն ոգևորեն: Նա հետապնդեց նպատակակետը՝ օրեօր ավելի նմանվելով Հիսուսին:

Մենք էլ այսօր դեպի մրցանակն ենք վազում: Հակառակ մեր հաջողություններին կամ ձախողություններին՝ եկեք մեր նպատակակետին ավելի ձգտենք՝ տեր Հիսուսին նմանվելու համար: Մենք չենք մրցում երկրային մրցանակի համար, այլ վերին հավիտենական կյանքի: Վարդանը և իր ընկերները հավատքով իրենց բնագավառի առաքելությունը կատարեցին՝ հավատարմությամբ ու խիզախությամբ: Հետևաբար նրանք արժանացան փառաց պսակին: Նրանք հավատքը պահեցին, իրենց գործը կատարեցին և պատրաստ եղան իրենց կյանքը զոհելու «Վասն Քրիստոսի և վասն Հայրենյաց»:

Աղոթք - Երկնավոր Դայր, օգնիր մեզ Վարդանի հավատքով վերին մրցանակին վազելու:

Երբեք մի՛ հրաժարվիր հավատքի ու նահատակության մրցանակի մարտահրավերից:

«Ի՞նչ է»-ի աշխարհը

Մեր տասնյոթ տարեկան աղջկան՝ Մելիսային ավտովթարից 2002-ին կորցնելուց հետո ես ինձ գտնում եմ «Ի՞նչ էլիք»-ի աշխարհում: Մեր ցավի մեջ հեշտ է մտաբերել ողբալի հունիսի այն երեկոն և մտածել այն հանգամանքների մասին, որոնք եթե կարելի լիներ վերադասավորել, պիտի օգներ մեր աղջկա ապահով տուն վերադարձին:

Իրականում «Ի՞նչ էլիք»-ի աշխարհը լավ տեղ չէ մեզնից որևէ մեկի համար: Դա տեղ է գղջումի, վերագուշակելու և անհուսություն: Մինչ ողբն ու ցավը իրական են, և տխրությունը մնայուն, Աստծուն պատիվ արած կլինենք, եթե բնակվենք «Ի՞նչ է»-ի աշխարհում:

Մենք հույս, մխիթարություն ու քաջալերանք կարող ենք գտնել այս աշխարհում: Մենք ունենք հաստատ հույս (Ա. Թեա. 4.13) և վստահություն, թե որովհետև Մելիսան սիրեց Հիսուսին, հիմա նա «ավելի լավ» տեղում է (Փիլիպ. 1.23): Մենք մեզ հետ ունենք ամեն խաղաղության Աստծո օգնող ներկայությունը (Բ. Կորնթ. 1.3): Մենք ունենք «մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ»՝ Աստված (Սաղմ. 45.2):

Մենք բոլորս էլ ուզում ենք զգուշ լինել կյանքի ողբերգություններից: Սակայն երբ դժվարություններ ենք դիմագրավում, մեր մեծագույն օգնությունը գալիս է վստահելի Աստծուց «Ի՞նչ է» -ի աշխարհում:

Աղոթք - Հայր Աստված, Դու գիտես իմ կտրած սիրտը: Դու գիտես կորստի ցավը, որովհետև Դու էլ տառապեցիր Որդուդ մահով: Հարատևող ցավիս մեջ օգնիր ինձ, որ կարողանամ Քրտված հույսի և քաջալերանքի մխիթարության մեջ մնալ:

Մեր մեծագույն հույսը գալիս է Աստծուն վստահելուց:

Կարդա՛ր Սաղմոս 45.1-7

Չենք կամենում, եղբայրներ, որ ննջեցյալների նկատմամբ տգետ լինեք ու չտրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն:

Ա Թես. 4.13

Անկեղծ

Քաղերն «անկեղծ» անձ էր: Նա և Հեսուն Հետախուզող տասներկու լրտեսների խմբից էին, որոնք մտան Քանանի երկիրը գննելու, թե ինչպիսին է, և տեղեկություն բերեցին Մովսեսին ու ժողովրդին: Քաղերն ասաց. «...առաջ պետք է շարժվենք ու տիրենք այդ երկրին, որովհետև կարո՞ղ ենք նրանց հաղթել» (Թվ. 13.31): Սակայն լրտեսների խմբից տասը անդամներ ասացին, որ չեն կարող այդ ժողովրդի դեմ ելնել: Հակառակ Աստծուն տված խոստումների՝ նրանք միայն տեսան արգելքները (Հմ. 31-33): Տասը մարդ պատճառ եղավ ժողովրդի սիրտը վախով լցնելու ու գանգատվելու Աստծու դեմ, ինչպես նաև քառասուն տարի անապատում թափառումի համար: Սակայն Քաղերը երբեք չհրաժարվեց: Տերն ասաց. «Բայց ուրիշ հոգի ունեցող և ինձ հետևած իմ ծառա Քաղերին ես կտանեմ այն երկիրը, ուր նա մտավ Հետախուզելու, իսկ նրա հետնորդները ժառանգում են այն» (Թվեր 14.24): Քառասունհինգ տարի հետո Աստված իր խոստումը հարգեց. երբ Քաղերն ու թաունհինգ տարեկան էր, ժառանգեց Քեբրոն քաղաքը, «...որովհետև նա հետևեց Իսրայելի Տեր Աստծու պատվիրանին» (Հեսու 14.14): Դարեր հետո օրենքի մի մասնագետ հարցրեց Հիսուսին. «Ո՞ր պատվիրանն է օրենքում մեծ»: Հիսուսը պատասխանեց. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությունով, քո ամբողջ մտքով: Սա է առաջին ու մեծ պատվիրանը: Երկրորդն էլ սրա նման. «Քո ընկերոջը քո անձի պե՛ս սիրիր» (Մատթ. 22.35-38): Այսօր դեռևս Քաղերը մեզ ներշնչում է Աստծո հանդեպ իր ունեցած վստահությամբ, Աստված, որ արժանի է մեր անկեղծությունը, սիրուն, վստահությամբ և նվիրումին:

Աղոթք - Տե՛ր, թող որ Քեզ սիրենք անկեղծությամբ և հետևենք Քեզ ամեն օր մեր այս երկրային ճամփորդության մեջ:

Կարդա՛
13.26-32, 14.20-24

Բայց ուրիշ հոգի ունեցող և ինձ հետևած իմ ծառա Քաղերին ես կտանեմ այն երկիրը... իսկ նրա հետնորդները կժառանգեն այն: Թվեր 14.24

Քրիստոսի նվիրումը ամենօրյա կոչում է:

Ամբողջական մոտեցում

Մի քանի տարի առաջ մի բարեկամ ինձ հրավիրեց իրեն մի-
անալ գուֆի մի մրցաշար դիտելու: Առաջին անգամն էր,
և չգիտեի ինչ ակնկալել: Երբ հասանք, զարմացա նվերներ, տե-
ղեկություններ և գուֆի դաշտի քարտեզներ ստանալու համար:
Սակայն այս բոլորից բացի՝ մենք թույլտվություն ստացանք
հյուրերի համար հատկացված վրանում
լինելու, ուր նստելու տեղ կար և առատ
ճաշ: Ես պիտի այդ առավելությունները
չունենայի, եթե չլինեք բարեկամս: Նա
եղավ բանալին այս բոլորի, և միայն նրա
միջոցով ես կարողացա ունենալ այս
հնարավորությունը:

Աստծուց բաժանվելով՝ մենք ան-
հույս կլինենք: Սակայն Հիսուսը, որ մեր
պատիժը կրեց, հնարավորություն է տա-

լիս մեզ Աստծուն մոտենալու: Պողոս առաքյալը գրում է. «Որ-
պեսզի հիմա եկեղեցու միջոցով երկնային իշխանությունների
և պետություններին հայտնվի Աստծու բազմատեսակ իմաս-
տությունը» (Եփ. 3.10): Այս իմաստությունը կողք կողքի բե-
րեց հրեային ու հեթոանոսին Քրիստոսով, ինչը նաև ճամփա
բացեց մեզ համար՝ Հայր Աստծուն մոտենալու: «Որով համար-
ձակություն և վստահությամբ մոտենալու արտոնությունը ու-
նենք՝ հավատալով նրան» (Եփ. 3.12):

Երբ վստահենք Հիսուսին, Աստծուն մոտենալու մեծագույն
հնարավորությունը կստանանք, այն Տիրոջը, որ մեզ սիրում ու
ցանկանում է մեզ հետ հաղորդակցություն ունենալ:

Աղոթք-Հայր, պարզապես Քեզ հայր կոչելը աներևակա-
յելի պարզ է: Շնորհակալ ենք Քո որդու՝ Հիսուսի համար, որ
հնարավոր դարձրեց ինձ Քո ներկայությամբ գալու և Քեզ
անձնապես ճանաչելու և կոչելու Հայր:

**Քրիստոսի խաչի պատճառով մենք կարող ենք Աստծու
բարեկամները լինել:**

Կարդա՛ Եփես. 3.7-13

Որով համարձա-
կություն և վստա-
հությամբ մոտենա-
լու արտոնությունը
ունենք՝ հավատա-
լով նրան:

Եփես. 3.12

ԱՆԵՐԼՈՒՅԹ դառնալու մատանին

Հուլյն փիլիսոփա Պլատոնը (Ն.Ք. 427-348) անիրական փայլուն մի լույս գտավ մարդկային սրտի մուլթ կողմում: Նա պատմեց մի հովվի պատմություն, որը գտավ մի ոսկի մատանի՝ պահված գետնի տակ: Մի օր մի մեծ երկրաշարժ բացեց լեռան կողին գտնվող մի հին գերեզման ու հայտնաբերեց մատանին հովվին: Դիպվածող նա նաև գտավ, որ մատանին ուներ կախարդական կարողություն, որ անտեսանելի էր դարձնում նրան, ով կրում էր: Մտածելով աներևույթ լինելու մասին՝ Պլատոնը հարցրեց. «Եթե մարդիկ անհրաժեշտություն չունենան մտահոգվելու բռնվելու ու պատժվելու մասին, սխալ գործելուն դե՞մ պիտի լինեն»:

Կարդա՛ր
Յովհ. 3.16-21

Որովհետև ամեն չար գործող ատում է լույսը...
Յովհ. 3.20

Հովհաննու Ավետարանում Հիսուսն մեկնում է այս գաղափարը տարբեր ձևով: Այն տեղը, ուր Հիսուսը ծանոթ է իբրև Բարի Հովիվ, խոսում է սրտերի մասին, որոնք խավարի ծածկոցի տակ են պահում իրենց սխալ գործերը (Հովհ. 3.19-20): Նա նկատի չունի մեր փակելու ցանկություն համար մեզ դատապարտելը, այլ փրկություն է առաջադրում իր միջոցով (Հմ. 17): Որպես մեր սրտերի Հովիվ՝ Նա ամենից վատ վիճակն է լույսին բերում՝ ցույց տալու, թե Աստված ինչքան է մեզ սիրում (Հմ. 16):

Աստված իր ողորմությամբ մեզ խավարից դուրս է կանչում և հրավիրում լույսի մեջ իրեն հետևելու:

Աղոթք - Սիրելի երկնավոր Յայր, շնորհակալ եմ իմ կյանքում Քո ներկայության լույսի համար: Թող որ այսօր հնազանդությամբ քայլեմ Քո ճշմարտության լույսի մեջ:

Մեղքի խավարը ետ է նահանջում, երբ Քրիստոսի լույսն է հայտնվում:

Խավարի մեջ ուրախություն

Washington Post թերթում հրատարակված մի հոդվածի համաձայն՝ մի խումբ գիտնականներ, բիլիոններ ծախսելով մի ծրագրի վրա, աշխատում են անսահման երկարացնել մարդկային կյանքը:

Նրանք մի քիչ ուշացել են, որովհետև մահը արդեն պարտված է: Հիսուսն ասաց. «Ես եմ հարույն թյունն ու կյանքը. ինձ հավատացողը թեկուզ մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ոք, ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի...» (Հովհ. 11.25-26): Հիսուսը մեզ վատահեղնում է, թե նրանք, ովքեր իրեն հավատում են, երբեք չպիտի մեռնեն:

Հատկացնենք: Մեր մարմինները պիտի մեռնեն, և հնարավոր չէ որևէ բան անել դա փոխելու համար: Սակայն մտածելը, տրամաբանելը, հիշելը, սիրելը և «ես»-ը երբեք չպիտի մեռնեն:

Եվ այստեղ է լավագույն մասը. սա պարզ է: Միակ բանը, որ պետք է անել, ընդունելն է Հիսուսի առաջարկած փրկությունը: Մի. էս. Լուիսը նկարագրում է սա որպես պարզ բան, իր բառերով՝ «խավարի մեջ ուրախություն»:

Ոմանք ասում են՝ «Շատ պարզ է»: Եթե Աստված սիրեց քեզ քո ծնվելուց առաջ և ուզում է, որ հավիտյան ապրես, ինչո՞ւ պիտի դժվարություն հարուցի:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, հավատում եմ, որ դու մեռար իմ մեղքերի համար և հարություն առար մեռելներից: Ուզում եմ ընդունել Քեզ որպես իմ Տեր ու Փրկիչ և հետևել Քեզ: Խնդրում եմ, ներիր իմ հանցանքները և օգնիր այս պահից սկսած ապրել կյանքով, որ հաճելի է Քեզ:

Քրիստոսը մահվան խավարի դուռը փոխարինել է փայլող կյանքի դռնով:

Կարդա՛
Յովհ. 11.17-27

Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա:

Յովհ. 3.16

Ամեն բանս

Երբ երիտասարդ Իսահակ Ուոթսը նկատում է, թե եկեղեցու երաժշտությունը պակաս բան ունի, իր հայրը նրան տալիս է ավելի լավն անելու մարտահրավերը: Ու Իսահակն անում է: Իր հորինած «Երբ այն խաչին եմ ես նայում» հոգևոր երգը համարվում է լավագույնը և թարգմանված է տարբեր լեզուներով:

Ուոթսի՝ պաշտամունքի հոգով զբառ այս երգի երրորդ մասը մեզ ուղղորդում ու տանում է դեպի Քրիստոսի խաչելություն:

«Տե՛ս, իր գլխից, ձեռքից, ոտքից սեր, տրտմություն են միասին վազում:

Ե՞րբ միացան դրանք այսպես, ինչպե՞ս արին փշերը պսակ»: Ուոթսի նկարագրած խաչելության պատկերը ներկայացնում է պատմության ամենից ահավոր պահը: Երբ լուսթյամբ կանգնենք նրանց հետ խաչի մոտ, կտեսնենք Աստծո Որդու տառապանքը խաչի վրա

գամված: Այդ ծանր տառապանքի ժամերից հետո գերբնական խավար է պատում, ու վերջապես Նա իր հոգին ավանդում է Աստծո ձեռքերի մեջ: Երկիրը շարժվում է, տաճարի վարագույրը երկուսի է բաժանվում, գերեզմանները բացվում են, ու մի շարք սուրբ ննջեցյալների մարմիններ հարություն են առնում (Մատթ. 27.51-53): Այս բոլորը վախ է պատճառում հարյուրապետին, որ ասում է. «Ճշմարիտ որ սա Աստծո Որդի էր» (Հմ. 54):

Տե՛ր Հիսուսի խաչը արժեքները փոխում է ու ոչնչացնում ունայնությունը: Այս սքանչելի երգը ավարտվում է հետևյալ խոսքերով. «Այսպիսի Տիրոջ սիրո համար արժե իմ ամբողջ կյանքը տալ»:

Աղոթք - Չեմ պարծենում ուրիշ բանով, այլ միայն Փրկչիս մահով. բոլոր մեծ ու չնչին ցանկություններս ես զոհում եմ Իր արյունին:

Մեր առանձնաշնորհն է տալ մեր ունեցած ամեն ինչ նրան, ով մեզ տվեց ամեն բան խաչի վրա:

Կարդա՛ր Մատթեոս 27.45-54

Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրներ, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի զոհ՝ սուրբ և Աստծուն հաճելի, որ ձեր բանական ծառայությունն է:
Յոհն. 12.1

Մեզնից մեկը

Հանրաձանոթ նկարիչ Չարլզ Շուլցի (1922-2000) հիշատակի նպատակով պաշտամունքին բարեկամ և գործընկեր ծաղրանկարիչ Քեթի Գայսուելթը խոսեց նրա գլխարկով և մարդասիրության մասին՝ ասելով. «Նա ամենքին տվեց տիպարներ՝ շատ լավ գիտենալով, թե ինչպես ենք մենք զգում, ու տվեց այն զգացողությունը, որ մենք մենակ չենք: Նա քաջալերեց մեզ: Մեզ հետ բաժանեց ցավը և տվեց մեզ այն զգացումը, թե ինքն էլ մեզ նման է»:

Երբ մտածում ենք, որ ոչ ոք մեզ չի հասկանում կամ չի կարող օգնել, պետք է հիշենք, որ Տեր Հիսուսը Իր անձը տվեց և շատ լավ գիտի, թե մենք ո՞վ ենք ու ինչ ենք գիմագրավում այսօր:

Եբրայեցիների 2.9-18-ը ներկայացնում է այն զարմանալի ու հիանալի ճշմարտությունը, թե Հիսուսը կատարելապես բաժանեց մեր մարդկայնությունը Իր մարդեղության ընթացքում (Հմ. 14): Մահը ճաշակեց բոլորի համար (Հմ. 9), ոչնչացրեց Սատանայի գորությունը (Հմ. 14) և ազատեց նրանց, ովքեր մահվան վախից ենթակա էին ստրկության իրենց ամբողջ կյանքի ընթացքում (Հմ. 15): Հիսուսը մեզ նման եղավ՝ կատարելապես մարդ, որպեսզի լինի ողորմած ու հավատարիմ քահանայապետ Աստծո մոտ (Հմ. 17):

Դու ի՞նչ վախեր ու մտահոգություններ ունես: Ի՞նչ պիտի անես այդ վախերի համար (Ա. Պետ. 5.6-7): Տերը ի՞նչ է խոստանում անել քեզ համար (Եբ. 13.5):

Աղոթք - Շնորհակալ եմ, Տեր, որ բաժանում ես մեր մարդկությունը, որպեսզի մենք տեսնենք Քո ցուցաբերած կարեկցությունը մեզ այսօր ու Քո ներկայությամբ ապրենք հավիտյան:

Ոչ ոք չի կարող հասկանալ Հիսուսի նման:

Կարդա՛ր Եբրայեցիներ 2.9-18

Որոցիտու եմք, որ չարչարվեց ու փորձվեց, կարող է փորձվողներին էլ օգնել:
Եբր. 2.18

Երկու նկար

Հ պարտ մի տատիկ, երկու շրջանակով նկար ամուր բռնած, եկեղեցու գավթում ցույց էր տալիս ծանոթներին: Առաջինը աղջկա նկարն էր իր հայրենիքից՝ Բրոնտեից: Երկրորդը իր տղա թուռանն էր՝ աղջկա նորածինը: Սակայն աղջիկը չէր գրկել իր նորածինին, որովհետև ծննդաբերության ժամանակ մահացել էր:

Մի ծանոթ մոտենալով նայեց նկարներին: Շոյելով տատիկի երեսը՝ իր ձեռքերի մեջ առավ ու արցունքոտ աչքերով միայն կարողացավ ասել. «Գիտեմ, գիտեմ»: Նա գիտեր, որովհետև երկու ամիս առաջ որդուն էր հողին հանձնել: Նշանակալից մի երևույթ կա այն մարդկանց մխիթարության մեջ, որոնք մեր ցավերի նման ցավեր են ունեցել: Հիսուսը ձերբակալությունից անմիջապես առաջ զգուշացրեց իր աշակերտներին՝ ասելով. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք լաց կլինեք ու կողբաք, իսկ աշխարհը կուրախանա...»: Սակայն քիչ հետո մխիթարեց նրանց՝ ասելով.

«Դուք կտրտմեք, բայց ձեր տրտմությունն ուրախության կվերածվի» (Հովհ. 16.20): Շուտով աշակերտները պիտի հուսահատվեին՝ տեսնելով Հիսուսի ձերբակալությունն ու խաչելությունը: Սակայն նրանց վրա ճշող ցավը շուտով աներևակայելի ուրախություն պիտի դառնար՝ տեսնելով Նրան հարություն առած: Եսային մարգարեացավ Մեսիայի մասին՝ ասելով. «Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում...» (Ես. 53.4): Մենք մի Փրկիչ ունենք, որը ոչ միայն մեր ցավերը գիտի, այլև Ինքը դրանք ապրեց:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Դու մեզ համար խաչի վրա բարձրացար: Մենք լավ գիտենք աշխարհի վրա գոյություն ունեցող նեղությունները, սակայն Դու հաղթեցիր այդ բոլորին ու Քո վրա վերցրիր մեր մեղքերն ու ցավերը:

Երբ մեր հոգսերը Նրա ձեռքերի մեջ ենք դնում, Նա իր խաղաղությունը մեր սրտերի մեջ է դնում:

Կարդա՛ր Յովհաննես 16.19-24

Դուք էլ հիմա տրտմություն ունեք, բայց նորից կտեսնեմ ձեզ, ու ձեր սիրտը կուրախանա, և ձեր ուրախությունը ոչ ոք ձեզնից չի խլի:

Յովհ. 16.22

Սեր և հին կոշիկներ

Հաճախ կինս ու ես ամբողջացնում ենք իրար ասելիք խոսքերը: Երեսուն տարվա ամուսնական կյանք ապրելուց հետո շատ լավ գիտենք, թե դիմացինը ի՛նչ է մտածում և ի՛նչ է ասում: Կարիք չունենք սկսած նախադասությունը շարունակելու. պարզապես մի բառը կամ ակնարկը բավական է որևէ բան արտահայտելու:

Հին կոշիկ հագնելու նման հանգստություն կա մեր հարաբերություն մեջ: Նույնիսկ շատ հաճախ փաղաքշանքով իրար ասում ենք. «Իմ հին կոշիկ», գովասանք, որ կարող է դժվար հասկացվել, եթե մեզ լավ չճանաչեն: Տարիների ընթացքում մեր հարաբերությունը զարգացրել է մի հատուկ լեզու՝ լեցուն արտահայտություններով, որոնք արդյունք են տասնյակ տարիների սիրո ու վստահության:

Մխիթարական է իմանալ, որ Աստված մեզ սիրում է անսահման սիրով: Դավիթը գրում է. «Իմացար, որ լեզվիս տակ նենգություն չկա» (Սաղմ. 138.4): Երևակայիր մի մտերմիկ խոսակցություն Հիսուսի հետ, ուր դու սիրտդ բացելով պատմում ես ամեն ինչ: Երբ պայքարում ես անհրաժեշտ բառերը գտնելու, Նա Իր ժպիտով վստահեցնում է, թե քեզ լավ գիտի, և ասում է այն, ինչ որ դու չես կարող ասել: Որքա՛ն լավ է իմանալ, որ կարիք չունենք բառերը ուղիղ ասելու Աստծու հետ խոսելու ժամանակ: Նա մեզ շատ լավ գիտի, սիրում և հասկանում է:

Աղոթք - Տե՛ր, Դու ինձ լավ գիտես ու սիրում ես: Շնորհակալ եմ, որ ինձ լավ ես հասկանում: Խնդրում եմ օգնիր ինձ Քեզ սիրելու ու հետևելու այսօր:

Աստված մեր բառերից այն կողմ՝ մեր սրտերին է նայում:

Կարդա՛ր
Սաղմոս 138.1-12

Իմացար, որ լեզվիս տակ նենգություն չկա:

Սաղմ 138.4

Բարի գալուստի պարզևը

Մբանչելի հիշողություններ ունենք այն ընթրիքից, երբ հյուրընկալեցինք հինգ ընտանիք հինգ տարբեր ազգերից: Բոլոր ներկաները մասնակից դարձան խոսակցությունը՝ Լոնդոն քաղաքի կյանքի մասին տարբեր տեսակետներ հայտնելով ու առանց կողմնակի երկխոսություններ ծավալելու: Երեկոյի ավարտին ամուսինս և ես զգացինք, որ մենք շատ ավելին ստացանք, քան տվեցինք՝ ներառյալ նոր բարեկամություններ հաստատելը և տարբեր մշակույթների մասին ջերմ զգացողությունների փորձառությունը:

Երբայեցիների գրքի հեղինակը, խորհուրդները եզրափակելով, հասարակական կյանքի մասին հորդորներ է կարդում իր ընթերցողներին և օտարականներին ընդունելու կոչ անում՝ ասելով՝ «ոմանք առանց գիտենալու հրեշտակներ ընդունեցին» (13.2): Հավանաբար այս խոսքով նա ակնարկում էր Աբրահամին ու Սառային, որոնք երեք օտարական ընդունեցին՝ ցույց տալով ջերմ հյուրասիրություն, ինչպես այդ օրերի սովորությունն էր (Ծննդ. 18.1-12): Նրանք չգիտեին, թե հյուրընկալում էին հրեշտակների, որոնք օրհնության պատգամ էին բերել իրենց:

Մենք չենք հրավիրում մարդկանց մեր տները նրանցից որևէ բան ստանալու հույսով, սակայն շատ հաճախ ստանում ենք մեր տվածից շատ ավելին: Թող Տերը իր սերը տարածի մեր հյուրընկալության միջոցով:

Աղոթք - Տեր Աստված, Դու ես աղբյուրը մեր ամբողջ ունեցածի: Թող որ մեր ստացածը բաժանենք ուրիշների հետ, որպեսզի Դու փառավորվես:

Երբ հյուրասիրություն ենք անում, բաժանում ենք Աստծո բարությունն ու պարգևները:

Կարդա՛ Երբայեցիներ 13.1-2

Հյուրասիրությունը մի մոռացեք, որով ոմանք առանց գիտենալու հրեշտակներ ընդունեցին:

Եբր. 13.2

Կատարյալ սեր

Կինը երբ խոսեց իր աղջկա հետ ունեցած խնդիրների մասին, ձայնը դողդողաց: Մտահոգ իր պատանի աղջկա կասկածելի ընկերների մասին՝ նա վերցրեց աղջկա բջջային հեռախոսը և հետևեց նրան ամենուր: Սրանից հետո նրանց հարաբերությունը ավելի վատթարացավ: Երբ խոսեցի աղջկա հետ, գտա, որ ջերմորեն սիրում էր մորը, սակայն միաժամանակ խեղդվում էր նրա հեղձուցիչ սիրուց ու երազում ազատ լինել:

Որպես անկատար արարածներ՝ մենք պայքարում ենք մեր հարաբերությունների մեջ: Լինենք ծնող թե զավակ, ամուսնացած կամ ազատ, ցանկանում ենք շիտակ սեր արտահայտել: Մենք մեր սիրո մեջ առաջադիմում ենք ժամանակի ընթացքում: Ա Կորնթ. 13-ի մեջ Պողոս առաքյալը ներկայացնում է կատարյալ սիրո մի պատկեր: Նրա տված չափանիշը սքանչելի է, սակայն միաժամանակ այդ սերը գործնականի վերածելը ամբողջովին վհատեցուցիչ է: Բարեբախտաբար մենք ունենք Տեր Հիսուսին որպես օրինակ: Զանազան կարիքներ ունեցող մարդկանց հետ շփման մեջ մտնելով՝ Նա մեզ ցույց տվեց, թե գործնականում ինչի է նման կատարյալ սերը: Մինչ քայլում ենք Նրա հետ մեր անձերը Նրա սիրո մեջ պահելով ու մեր միտքը Նրա խոսքի վրա դնելով, մենք պիտի կարողանանք ավելի ու ավելի իր պատկերը արտացոլել: Բնականաբար պիտի սխալներ անենք, սակայն Աստված կարող է շտկել ու ամեն չար բանից բարի բան առաջացնել իր սիրո համար, որ «ամեն բանի համբերում է» և «երբեք չի վերջանա» (Հմ. 7-8):

Աղոթք - Տեր, մեր նպատակները բարի են, սակայն շատ ձևերով իրար նեղացնում ենք: Շնորհակալ եմք, որ տիպար օրինակ ես ծառայում ապրելու ու սիրելու:

Իր սերը ցույց տալու համար Զիսուսը մեզ համար մահացավ: Մեր սերը ցույց տալու համար մենք իր համար ենք ապրում:

Կարդա՛ր Ա Կորնթ. 13.4-8

Սերը... ամեն բան հանդուրժում է, ամեն բանի հավատում, ամեն բանի համար հույս ունի, ամեն բանի համբերում է: Սերը երբեք չի վերջանա:

Ա Կորնթ. 13.7-8

Ալիքների իշխանը

11-րդ դարում աշխարհի վրա ամենից զորեղ մարդկանցից էր Կնուզը թագավորը: Հռչակավոր մի առասպելում ասվում է, թե նա հրամայեց, որ մակրնթացության ժամանակ իր աթոռը դրվի ծովափին: Նա ծովին ասում է. «Դու իմ հպատակն ես: Հետևաբար հրամայում եմ քեզ չբարձրանալ, չթրջել քո տիրոջ գզեստները կամ ոտքերը»: Սակայն ջուրը շարունակեց բարձրանալ ու թրջել թագավորի ոտքերը:

Այս պատմությունը պատմվում է ուշադրություն դարձնելու Կնուզի հպարտությունը: Սակայն իրականում սա խոնարհություն մասին է: Որովհետև հետո ասում է. «Թող ամբողջ աշխարհն իմանա, որ թագավորների զորությունը ունայն է, սակայն իմացիր, որ երկիրքը, երկիրն ու ծովը հնազանդվում են Նրան»:

Հորը նույն բանը տեսավ: Համեմատվելով Նրա հետ, որ երկրի հիմերն է դնում (Հոր 38.4-7) պատվիրում է արևին ծագել և մայր մտնել (Հմ. 12-13), լցնում է ձյան շտեմարանները և աստղերը կառավարում (Հմ. 22, 31-33): Մենք փոքր ենք, և միայն մեկ իշխան կա ալիքների վրա, ու մենք չենք դա (Հմ. 11, Մատթ. 8.23-27):

Կնուզի պատմությունը շատ լավ դաս է մեզ համար, երբ սկսենք մտածել, թե շատ իմաստուն և հպարտ ենք: Եթե ուզում ես, գնա ծովեզերք և փորձիր հրամայել ջրերին, որ ետ մնան, կամ փորձիր հրամայել արևին, որ մի կողմ քաշվի: Շուտով պիտի հիշենք, թե ով է գերակա ու շնորհակալություն հայտնենք Նրան, որ իշխանություն ունի մեր կյանքերի վրա:

Աղոթք - Զգո՛ր Տեր, Դու մե՞ծ ես ու բոլորից գերիվեր: Խոնարհվում եմ Քո առջև որպես իմ կյանքի իշխան:

Աստված մե՞ծ է , ու մենք փոքր. ու դա լավ է:

Կարդա՛ր
Յոթ 38.1-18

«Կգաս մինչև այդ վայրն ու այլևս առաջ չես անցնի». այդտեղ, քո մեջ կխորտակվեն ալիքները քո:

Յոթ 38.11

Դիմանկար ստեղծել

Լոնդոնի դիմանկարների ազգային պատկերասրահը ունի գծանկարների մեծաթիվ մի հավաքածու՝ ներառյալ Ուիլյամ Չեքսթերի 166, Ուիլյամ Շեքսպիրի 94 և Ջորջ Վաշինգտոնի 20 նկարները: Հին գծանկարների առիթով հարցնում ենք, թե արդյոք այդ անձնավորությունները նման են նկարներին:

Օրինակ՝ այնտեղ կա շոտլանդացի հայրենասեր Ուիլյամ Ուոլլեսի (1270-1305) ութ դիմանկար, սակայն ձեռքի տակ չունենք լուսանկարներ համեմատելու համար: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե գծանկարիչները իսկապես ներկայացնում են Ուոլլեսին: Նման բան կարող է պատահել նաև Հիսուսի նմանությունն առումով: Նրանք, որ հավատում են Նրան, ուրիշների վրա Նրա մասին տպավորություն են թողնում ոչ վրձիններով ու յուղաներկով, այլ պահվածքով, գործերով և հարաբերություններով:

Արդյոք ստեղծո՞ւմ ենք մի դիմանկար, որ ներկայացնում է նմանություն Նրա սրտի հետ: Սա է Պողոս առաքյալի մտահոգությունը: «Ձեզանից յուրաքանչյուրը թող այն մտածմունքն ունենա, որ Քրիստոս Հիսուսի մեջ էր» (Փիլիպ. 2.5): Տիրոջը ներկայացնելու ցանկությունը առաքյալը խորհուրդ է տալիս իր հետևորդներին ցույց տալ Նրա խոնարհությունը, զոհողությունն ու մեծ սերը:

Ասվում է, թե «Մենք միակ Հիսուսն ենք, որին մարդիկ պիտի տեսնեն»: Ինչպես որ «խոնարհությամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի» (Հմ. 3), մենք ցույց պիտի տանք աշխարհին Հիսուսի սիրտն ու կեցվածքը:

Աղոթք - Սիրո Աստված, խնդրում եմ կառուցիք Քրիստոսի սիրտն ու միտքը իմ սրտի ու մտքի մեջ, որպեսզի շուրջս եղողները Նրան տեսնեն հստակ ու նաև ցանկանան Նրան ճանաչել:

Քրիստոսի անձի զոհողությունը մեզ համար մղում է ուրիշների համար զոհել մեր անձերը:

Կարդա՛ Փիլիպ. 2.1-11

Ձեզանից յուրաքանչյուրը թող այն մտածմունքն ունենա, որ Քրիստոս Յիսուսի մեջ էր:

Փիլիպ. 2.5

Սխալներ են եղել

«Սխալներ են եղել», - ասաց գործադիր տնօրենը, երբ խոսում էր իր ընկերության ապօրինի գործելակերպի մասին: Նա ցավով անդրադարձավ պատահածին, սակայն հանցանքն ուրիշների վրա դրացեց և չկարողացավ ընդունել, թե ինքն անձամբ է սխալներ գործել:

Մի շարք «սխալներ» պարզապես սխալներ են. օրինակ՝ սխալ ուղղությամբ վարել մեքենան, ժամացույցը մոռանալ լարել, ընթրիքն այրել, հաշիվների մեջ սխալ արձանագրություններ կատարել: Սակայն կա գիտակցաբար սխալներ գործելու հանգամանքը, ու Աստված դրանք մեղք է կոչում: Երբ Աստված հարցրեց Ադամին ու Եվային իրենց անհնազանդության մասին, նրանք անմիջապես փորձեցին հանցանքն ուրիշի վրա դրացել (Ծննդ. 3.8-13): Ահարոնը որևէ պատասխանատվություն չուզեց վերցնել, երբ մարդիկ անապատում ոսկե հորթ պատրաստեցին պաշտելու համար: Նա բացատրեց Մովսեսին. «(Մարդիկ) ինձ տվեցին ոսկին, ես այն նետեցի կրակը, և ահա ստացվեց այս հորթը» (Ելք 32.24):

Երբեմն հեշտ է թվում ուրիշին այպանել՝ փոխանակ ընդունելու մեր սխալները: Նույնքան վտանգավոր է փորձել փոքրացնել մեր մեղքերը՝ կոչելով դրանք «պարզապես սխալներ»՝ փոխանակ ընդունելու, որ դրանք ճիշտ են: Սակայն երբ պատասխանատվությունը մենք ենք վերցնում՝ ընդունելով մեր մեղքը և խոստովանելով այն, «Նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների մեզ և մաքրի մեզ ամեն անիրավությունից» (Ա. Հովհ.1.9): Մեր Աստվածը իր զավակներին չնորհում է ներում ու վերանորոգություն:

Աղոթք - Սիրելի՛ Զայր, օգնիր ինձ տեսնել իմ թերություններն ու հանցանքները: Քաջություն տուր խոստովանելու ու թողություն խնդրելու:

Աստծո ներումը ստանալու առաջին քայլը ընդունելն է, որ մենք դրա կարիքն ունենք:

Կարդա՛ր
Ելք 32.1-5, 19-26
...Ոսկին...բերեք: Նրանք ինձ տվեցին ոսկին, ես այն նետեցի կրակը, և ահա ստացվեց այս հորթը: Ելք 32.24

Խոսող ծառը

Մտիվներ երիտասարդ աֆրիկացի գաղթական է՝ առանց երկրի: Նա կարծում է, որ ծնվել է Մոզամբիկում կամ Զիմբաբվեում: Նա չի ճանաչում հորը և կորցրել է մորը: Մայրը, փախչելով քաղաքացիական պատերազմից, երկրեերկիր գնալով փերեզակ է դարձել: Առանց ինքնության և ծննդյան վկայականի՝ Մտիվներ մտավ անգլիական մի ոստիկանատուն՝ խնդրելով իրեն ձերբակալել: Բանտն ավելի լավ էր թվում Մտիվների համար, քան առանց քաղաքացու արտոնուլթյունների փողոցում մնալը:

Առանց հպատակության ապրելու դժվարությունը Պողոսի մտքում էր, երբ գրեց իր նամակը Եփեսացիներին: Նրա ոչ հրեա ընթերցողները գիտեին՝ ինչ էր նշանակում օտարականի և դրսեցու նման ապրելը (2.12): Միայն Հիսուսով կյանք ու հույս գտնելուց հետո էր (1.13), որ նրանք իմացան, թե ինչ է նշանակում Երկնքի թագավորությանը պատկանելը (Մատթ. 5.3): Հիսուսով նրանք սովորեցին, թե ինչ է նշանակում ճանաչվել և Հոր հոգատարությունը վայելել (Մատթ. 6.31-33):

Պողոսը տեսավ, թե մինչ անցյալն անցնում է, մեր կարճ հիշողությամբ մոռանում ենք, որ հույսը նոր հանգամանք է:

Թող Աստված օգնի մեզ, որ ապահովության մեջ ապրենք՝ յուրաքանչյուր օր իմանալով, թե մենք իր ընտանիքի անդամներն ենք Հիսուս Քրիստոսի վրա ունեցած մեր հավատքով, ու հասկանալու իր մեջ մեր տունն ունենալու իրավունքներն ու արտոնուլթյունները:

Աղոթք - Տեր, մինչ հիշում ենք, թե որքան անհույս էինք Քեզ ճանաչելուց առաջ, խնդրում ենք օգնիր մեզ չմոռանալ նրանց, ովքեր դեռևս փողոցում են:

Հույսը ամենից ավելի պետք է նրանց, ովքեր ապրել են առանց դրա:

Կարդա՛ Եփեսացիներ 2.11-22

Ուրեմն այսուհետև այլևս օտար ու պանդուխտ չեք, այլ սրբերի հետ քաղաքացիներ և Աստծու ընտանիքի անդամներ:

Եփես. 2.19

Մեյդեյ

Միջազգային ծանոթ տազնապի ազդանշան «Մեյդեյը» միշտ կրկնվում է երեք անգամ՝ «Մեյդեյ, մեյդեյ, մեյդեյ», հասկացնելու համար, որ շտապ օգնություն կարիք կա: Այս բառը ստեղծվել է 1923-ին Ֆրեդերիկ Ստենլի Մաքֆարդի կողմից, որը Լոնդոնի Քրոյդըն օդանավակայանի մեծ ձայնասփյուռուի պաշտոնյան էր: Այժմ փակված այդ վայրը ժամանակին բազմաթիվ թռիչքներ ու վայրէջքներ ուներ Փարիզի Բուրգե օդանավակայանում: Ըստ Ազգային ծովային թանգարանի՝ Մաքֆարդը վերցրել է այն ֆրանսերեն *m'aidez* բառից, որ նշանակում է «օգնիր ինձ»: Դավիթ թագավորն իր կյանքում հաճախ դժվար հանգամանքների մեջ գտնվեց և իր կյանքին սպառնացող վիճակների դեմ-հանդիման եկավ, որտեղից հնարավոր չէր փախուստ տալ: Սակայն 85-րդ Սաղմոսում կարդում ենք, թե իր ամենից մութ ժամերին Դավիթի վստահությունը Աստծու վրա էր: «Ականջ դիր, Տե՛ր, իմ աղոթքներին և ո՛ւշ դարձրու խնդրանքիս ձայնին: Իմ նեղություն օրը ես կանչեցի քեզ, և դու լսեցիր ինձ» (Սաղմ. 85.6-7):

Դավիթը նաև տեսավ անմիջական վտանգից այն կողմ ու խնդրեց Աստծուց, որ իր քայլերն ուղղորդի: «Առաջնորդի՛ր ինձ քո ճանապարհով, որ ընթանամ քո ճշմարտությունը...» (Հմ. 11): Ու երբ տազնապաները անցան, նա ուղեց շարունակել Աստծո հետ քայլել:

Ամենից դժվար պարագաները, որ մենք դիմագրավում ենք մեր կյանքում, կարող են լինել լավագույն միջոցները ավելի խոր հարաբերություն մշակելու մեր Տիրոջ հետ:

Աղոթք - Տե՛ր, օգնության աղերս եմ բարձրացնում քեզ այսօր: Խնդրում եմ օգնիր ինձ քայլելու քեզ հետ նույնիսկ երբ տազնապաները անցնեն:

Աստված լսում է մեր աղաղակները՝ օգնելու և առաջնորդելու մեզ իր ճանապարհների մեջ:

Կարդա՛ր
Սաղմոս 85.1-13

Իմ նեղության օրը ես կանչեցի քեզ, և դու լսեցիր ինձ:
Սաղմ. 85.7

Այդ ես չեմ

Երբ որոշեցի Հանգստյան օրերին ածելիին դադար տալ ու թողնել, որ մորուքս երկարի, բարեկամներիցս ու գործընկերներիցս մի շարք ակնարկներ լսեցի: Մեծամասնությամբ դրանք դրական էին: Սակայն մի օր նայեցի մորուքիս ու որոշեցի, որ «դա ես չեմ»: Մտածում էի, թե մենք ո՞վ ենք, և ինչո՞ւ այս կամ այն բանը մեզ չի սազում: Նախ, ասեմք, որ Աստված մեզնից յուրաքանչյուրին տվել է տարբեր անհատականություն և նախասիրություններ: Ընդունելի է, որ մենք բոլորս նույն զբաղմունքները չենք սիրում. չենք ուտում նույն ճաշերը, ոչ էլ պաշտում ենք նույն ժողովրդի հետ: Մենք բոլորս էլ հատուկ և սքանչելի կերպով ենք ստեղծվել (Սաղմ. 138.14): Պետրոսը մատնանշում է, թե մենք յուրաքանչյուրս ու-

Կարդա՛ր
Ա Պետրոս 4.7-11

Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք, որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ: Ա Պետ. 4.10

նենք հատուկ պարգևներ, որպեսզի իրար ծառայենք (Ա. Պետ. 4.10-11): Տեր Հիսուսի աշակերտները իրենց վիճակը չքննեցին աշխարհ մտնելուց առաջ: Պետրոսը այնքան հանդուգն էր, որ մի ծառայի ականջ կտրեց հենց այն գիշերը, երբ Տեր Հիսուսը ձերբակալվում էր: Թովմասն էլ պնդեց, որ մի փաստ ունենա, որպեսզի հավատա, որ Տերը հարություն է առել: Տերը չմերժեց այդ տկար աշակերտներին պարզապես նրա համար, որ նրանք մեծանալու անհրաժեշտություն ունեին: Նա կաղապարեց ու ձևավորեց նրանց՝ Իրեն ծառայելու համար: Երբ որոշում ենք, թե ինչպես կարելի է լավ ձևով Տիրոջը ծառայել, խելամիտ պիտի լինի նկատի ունենալ մեր տաղանդներն ու նկարագրի գծերը ու երբեմն էլ ասել. «Այդ ես չեմ»:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք մեր մեջ ստեղծած մեծ անհատականության համար: Շնորհակալ եմ իմ անձնավորության և կարողություններիս համար: Ուղղորդիր ինձ՝ դրանք գործածելու Քեզ համար:

Սովորական մարդիկ չկան. մենք ստեղծված ենք հատուկ:

Անակնկալ հարցազրույց

Լոնդոնի խճողված տրանսպորտում առավոտ կանուխ մի ուղևոր հրեց ու վիրավորեց մի ուրիշի՝ իր տեղն ապահովելու համար: Անցանկալի ու անմիտ մի արարք, որ ընդհանրապես անլուծելի է մնում: Սակայն նույն օրը մի անակնկալ պատահեց: Առևտրական մի տնօրեն շտապ մի հաղորդագրություն ուղարկեց համացանցի ընկերներին. «Իմացե՛ք, հենց հիմա ո՞վ եկավ երկխոսություն»։ Երբ դրան տրված բացատրությունը երևաց համացանցում, մարդիկ աշխարհի բոլոր կողմերում տեղի տվեցին ու ժպտացին: Երևակայիր, որ մտնում ես երկխոսություն մեջ ու տեսնում, որ քեզ ողջունող անձը նա է, ում անպատվեցիր ու հրեցիր նույն օրը առավոտյան:

Կարդա՛
Գործք. Առ. 26.9-15
Թագավորն էլ նրանց կպատասխանի ու կասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. քանի որ այս իմ եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք»: Մատթ. 25.40

Սողոսն էլ հանդիպեց մեկին, ում երբեք չէր սպասում տեսնել: Մինչ նա գնում էր ճանապարհին հետևողներին կապած Երուսաղեմ բերելու (Գործք Առ. 9.1-2), ճանապարհի վրա կուրացնող մի լույս փայլատակեց իր առջև, ու մի ձայն ասաց. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում» (Հմ. 4): Սողոսն էլ հարցրեց. «Դու ո՞վ ես, Տե՛ր»։ Նրա հետ խոսողը պատասխանեց և ասաց. «Ես Հիսուսն եմ, որին դու հալածում ես» (Հմ. 26.15):

Տարիներ առաջ Հիսուսն ասել էր, թե ինչ որ անում ենք քաղցածին, ծարավին, օտարականին և բանտարկյալին, պիտի ազդի մեր՝ Նրա հետ ունեցած հարաբերության վրա (Մատթ. 25.35-36): Ո՞վ կարող է երևակայել, թե երբ մեկը մեզ անարգում է, կամ մեկին օգնում կամ ցավ ենք պատճառում, Նա, որ մեզ սիրում է, համարում է, որ այդ ամենն Իրեն ենք անում:

Աղոթք - Հայր, ներիր մեզ, երբ վարվում ենք այնպես, թե Դու ներկա չես կարեկցության, ցավի, բարկության կամ հոգածության պահին:

Երբ օգնում կամ ցավ ենք պատճառում, Հիսուսը համարում է, որ Իրեն ենք անում:

Բաց քազուկներ

Այն օրը, երբ ես ու ամուսինս՝ Դանը, սկսեցինք հոգատարութեան ճամփորդութիւնը մեր տարեց ծնողների հետ, մեր բազուկները իրար միացրինք ու զգացինք, թե ընկնում էինք մի բարձր տեղից: Չգիտեինք, որ հոգատարութեան ընթացքում ամենից դժվար պարտականութիւնը, որին մենք պիտի դիմագրավեինք, պիտի լիներ թույլ տալ մեր սրտերը քննութեան ենթարկել, կազապարել ու թողնել, որ Աստված օգտագործի առիթը մեզ իրեն նման անելու՝ նոր ձևերով:

Այն օրերին, երբ ունենում էի մի բարձր տեղից ընկնելու զգացողութիւնը, Աստված ինձ ցույց էր տալիս իմ ծրագրերը, վերապահութիւնները, վախերը, հպարտութիւնն ու անձնասիրութիւնը: Նա օգտագործեց իմ կոտրած մասերը՝ ցույց տալու իր սերն ու ներումը իմ հանդեպ:

Իմ հովիվն ասել է. «Լավագույն օրը այն օրն է, երբ տեսնում ես քեզ այն, ինչ ես, անհույս առանց Քրիստոսի: Հետո դու քեզ տես, ինչպես ինքն է տեսնում՝ իրենով կատարյալ»: Այս էր հոգատարութեան օրհնութիւնը իմ կյանքում: Երբ տեսա, թե Աստված ով լինելու համար է ստեղծել ինձ, դարձա ու լալով իր բազուկների մեջ ընկա: Սաղմոսերգուի հետ աղերսեցի. «Փորձի՛ր ինձ, Աստված, ու ճանաչիր իմ սիրտը...» (Սաղմ. 138.23):

Այս է իմ աղոթքը քեզ համար, որ մինչ քեզ տեսնում ես քո բոլոր արարքների մեջ, պիտի դառնաս ու վազես դեպի Աստծու բաց, սիրող ու ներող բազուկները:

Աղոթք - Շնորհալի Աստված, այսօր տեսնում եմ իմ կարիքը քո սիրո, իմաստութեան և շնորհի: Քննիր ինձ և ճանաչիր ինձ: Տուր ինձ Քո շնորհը ու ողորմութիւնը իմ կյանքի մեջ՝ բժշկութիւն տալու իմ սրտին:

Երբ մտահոգութիւնը ներս գա, ուժը կփախչի: Սակայն ուժը վերադառնում է, երբ մոտենում եմ Աստծուն:

Կարդա՛
Սաղմոս 138.17-24

Փորձիր ինձ, Աստված, ու ճանաչիր իմ սիրտը, քննիր ինձ ու ճանաչիր իմ շավիղները:

Սաղմ. 138.23

Լավ ժառանգություն

Տատու ու պապս շատ փող չունեին, սակայն կարողացան Տամեն տարի Ս. Ծնունդը հիշարժան դարձնել զարմիկներիս ու ինձ համար: Միշտ ճոխ ուտելիք, զվարճություն ու սեր կար: Եվ մեր մանկությունից ի վեր սովորել էինք, որ Քրիստոսն էր հնարավոր դարձնում այս տոնակատարությունը:

Մենք ուզում ենք նույն սովորությունները թողնել մեր զավակներին: Երբ անցյալ տարի կողք կողքի եկանք Ս. Ծննդի առթիվ, նկատեցինք, որ այս սքանչելի սովորությունները սկսվել էր պապիկից ու տատիկից: Նրանք չէին կարող մեզ նյութական ժառանգություն թողնել, սակայն ուշադիր էին սիրո, հարգանքի և հավատքի հունդը ցանկու մեջ, որպեսզի իրենց զավակները զավակները հետևեն իրենց օրինակին:

Աստվածաշնչի մեջ կարդում ենք տատ Լոիդայի և մայր Եվնիկեի մասին, որոնք փոխանցեցին Տիմոթեոսի իսկական հավատքը (Բ. Տիմ. 1.5): Նրանց ունեցած ազդեցությունը պատրաստեց այն մարդուն Բարի Լուրը տարածելու բոլորին: Մենք կարող ենք հոգևոր ժառանգություն պատրաստել նրանց համար, ում կյանքի վրա կարող ենք ազդել Աստծո հետ մոտ հարաբերություն ունենալով: Գործնական ձևերով Նրա սերը իրականության ենք վերածում, երբ նրանց հատուկ ուշադրություն ենք դարձնում, ցույց տալիս հետաքրքրություն ու մեր կյանքը կիսում նրանց հետ: Երբ մեր կյանքերը արտացոլում են Աստծո սքանչելի սիրո իրողությունը, մենք մնայուն ժառանգություն ենք թողնում ուրիշներին:

Աղոթք - Չա՛յր, ես լավ ժառանգություն եմ թողնում իմ ընտանիքին, ինչպես որ Դու ես օգտագործում ինձ՝ ցույց տալու Քո հավիտենական սերը:

Եթե մեկը աստվածային ժառանգություն է թողնում, օգտագործիր այն ուրիշների հետ:

Կարդա՛ր Բ Տիմ. 1.1-5

Միտքս բերելով այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ նախ քո Լոիդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ բնակվեց, համոզված եմ, որ այն քեզանում էլ է:
Բ Տիմ. 1.5

Մատների արանքից փախցնել

Երբ սխալմամբ ջրի գավաթը ձեռքիցս բաց թողեցի ճաշարանի սեղանին, թափած զովացուցիչ ըմպելիքը սկսեց վար հոսել սեղանի վրայից: Ամաչելով փորձեցի թափվող հեղուկը ափերիս մեջ հավաքել, սակայն ափսո՛ս, այն մատներիս միջից անցավ ու դուրս վազեց: Վերջում մի քանի գդալի չափ մնաց ափիս մեջ, մինչ ոտքերս մնացին թափած ըմպելիքի ջրակույտի մեջ:

Կյանքս սրա նման է թվում հաճախ, երբ ինքս ինձ գտնում եմ խնդիրներ լուծելու, մանրամասներ զննելու և հանգամանքների վրա հսկելու իրավիճակում:

Որքան էլ ջանամ փորձել, իմ տկար ձեռքերը չեն կարող ամեն բան տնօրինել: Շատ բաներ մատներիս միջից սահում ու հավաքվում են ոտքերիս տակ՝ թողնելով ինձ անկարող դրուժյան մեջ: Զեռքերս ու մատներս ինչքան էլ սեղմեմ, չեմ կարող արդյունքի հասնել:

Սակայն Աստված կարող է:

Եսային ասում է մեզ, թե Աստված կարող է իր ափով օվկիանոսների, գետերի ու անձրևի ջրերը չափել (40.12): Միայն Իր ձեռքերը բավարար են բռնելու այդ ամենը: Մենք փորձել անգամ չենք կարող բռնել այն մի քանի գդալ ջրից ավելի, որ Նա է ստեղծել: Երբ ճնշված ենք, կարող ենք մեր բոլոր հոգսերն ու հարցերը վստահել Նրա կարող ձեռքերին:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ ամեն բան իմ ձեռքերի մեջ բռնելու փորձությունից ետ կանգնել, սակայն դրա փոխարեն իմ կարիքներն ու մտահոգությունները Քո կատարյալ հոգածությանը վստահել:

Կարող՝
Եսայի 40.9-17

Ո՞վ կարողացավ իր
ափով չափել ջրերը:
Եսայի 40.12

Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված կարող է մեր ճնշվածությունը վերացնել:

Սեզանից հետո

Մի շարք մշակույթներում երիտասարդից ակնկալվում է, որ իրենից առաջ սենյակ թողնի մեծերին: Այլ մշակույթներում ամենից կարևոր կամ աստիճանով բարձր անձն է առաջ մտնում: Կարևոր չէ, թե ինչպիսին է մեր մշակույթը, կան պահեր, երբ դժվարանում ենք թողնել մեկ ուրիշին, որ նախ ինքն ընտրի կարևոր մի բան, հատկապես երբ այդ արտոնությունը մեր իրավունքի սահմաններում է:

Աբրամը (հետագայում՝ Աբրահամ) և իր եղբորորդին՝ Ղովտը, շատ ոչխարներ, արջառներ ու վրաններ ունեին, ու հողը չէր բավարարում նրանց, որ միասին ապրեին: Բախում չունենալու համար Աբրամը առաջարկեց, որ բաժանվեն, և ազնվաբար հողի ընտրությունը Ղովտին տվեց, ու Ղովտը ընտրեց Հորդանանի բերբեր դաշտը՝ թողնելով Աբրամին անցանկալի մասը:

Այս դեպքում Աբրամը չպարտադրեց իր իրավունքը՝ որպես ավագ եղբայր, բայց իր բաժինը Աստծուն վստահեց: Նա Ղովտին ասաց. «Թող կռիվ չլինի իմ ու քո և իմ հովիվների ու քո հովիվների միջև, որովհետև մենք եղբայրներ ենք: Մի՞թե ողջ երկիրն առաջդ չի փռված. հեռացի՛ր ինձնից: Եթե դու ձախ գնաս, ես աջ կգնամ, իսկ եթե դու աջ գնաս, ես ձախ կգնամ» (Ծննդ. 13.8-9): Ղովտի ընտրությունը ի վերջո իրեն և ընտանիքին տարավ վատ հետևանքների (Ծննդ. 19):

Երբ տարատեսակ ընտրությունների առջև ենք կանգնում, վստահենք Աստծուն մեզ առաջնորդելու իր ճանապարհով:

Աղոթք - Տեր, Քո հավատարմությունն ու վստահելի սերը առաջնորդում է մեզ ամեն տեսակ ընտրության մեջ: Թող մեր կյանքերը լավ վկայություն լինեն Քեզ համար ու պատիվ բերեն:

**Կարդա՛ր
Ծննդոց 13.1-8**

Մի՞թե ողջ երկիրն առաջդ չի փռված. հեռացի՛ր ինձնից: Եթե դու ձախ գնաս, ես աջ կգնամ, իսկ եթե դու աջ գնաս, ես ձախ կգնամ:

Ծննդ. 13.9

Աստված միշտ իր լավագույնն է տալիս նրանց, ովքեր ընտրությունն իրեն են թողնում: Ջիմ Էլիոթ

Ինչ-որ բան սխալ է

Մեր որդու՝ Ալենի ծնվելուց մի օր հետո բժիշկը նստեց անկողնիս մոտ զրված աթոռին ու ասաց. «Ինչ-որ բան սխալ է»: Մեր որդին, արտաքենապես կատարյալ լինելով, մի վտանգավոր թերություն ուներ, և կարիք կար անմիջապես վիրահատելու 700 մզոն հեռու գտնվող մի հիվանդանոցում:

Երբ բժիշկն ասում է ինչ-որ բան այն չէ երեխայիդ հետ, կյանքդ փոխվում է: Վախը, թե ինչ կարող է պատահել գալիք օրերում, հոգիդ ընկճում է, ու դու ծանր վիճակի մեջ Աստծո կարիքն ես զգում, որ քեզ ուժ տա, որպեսզի կարողանաս լավագույնն անել երեխայիդ համար:

Դու մտածում ես. «Սիրող Աստվածն ինչպե՞ս է թույլ տալիս, որ նման բան պատահի: Հոգ տանո՞ւմ է զավակիս համար: Ո՞ր է Նա»: Այս ու այլ մտածումներ ցնցեցին հավատքս այս առավոտ:

Հետո ամուսինս՝ Հիրամը հասավ ու լսեց լուրը: Բժշկի զնալուց հետո Հիրամն ասաց. «Ձոյին, արի՛ աղոթենք»: «Այո՞», - ասացի: Հիրամը ձեռքս բռնեց ու աղոթեց՝ ասելով. «Շնորհակալ ենք, Աստված, որ Ալենին մեզ տվեցիր: Նա Քեզ է պատկանում, ոչ թե մեզ: Դու սիրեցիր իրեն մեր իմանալուց առաջ, ու նա Քեզ է պատկանում: Իր հետ եղիր, երբ մենք չենք կարողանում: Ամեն»: Հիրամը քշախոս մեկն է: Նա դժվարանում է իր մտքերն արտահայտել, ու շատ հաճախ չի էլ փորձում իմանալով, որ ես բավարար բառեր ունեմ լուրթյունը լցնելու համար: Սական այդ օրը, երբ սիրտս կոտրած էր, հոգիս տրտմած ու հավատքս պակասած, Աստված Հիրամին տվեց զորություն՝ ասելու բառեր, որոնք ես չէի կարող արտասանել:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, երբ չեմ գտնում բառեր՝ ասելու համար դժվար ու նեղ կացության մեջ: Հիշեցրու, որ Դու կողքիս ես ամեն պահի:

Լավագույն բարեկամը աղոթող բարեկամն է:

Կարդա՛ր
Սաղմոս 33.12-19

Տերը նրանց կողքին է, ովքեր սրտամաշ են եղել, և նա փրկում է հոգով խոնարհներին:
Սաղմ. 33.19

Վերաշինություն

Մեզատեմբերի մի կիրակի երեկո, երբ շատերը քնել էին, մի փոքրիկ կրակ սկսվեց Թոմաս Ֆարրինների հացատանը: Շուտով կրակի բոցերը տարածվեցին տնետուն, եւ 1666-ի Լոնդոնի Մեծ հրդեհը ամբողջ քաղաքը լափեց: 70.000-ից ավելի մարդ մնաց անտուն, ու քաղաքի 80 տոկոսն այրվեց: Մեծ վնաս «մի փոքր կրակով»

Աստվածաշունչը մեզ զգուշացնում է փոքր, սակայն ավերող կրակից: Հակաբոս առաքյալը մտահոգ էր կյանքերով ու հարաբերություններով ու ոչ թե շենքերով, երբ գրում էր. «Այդպես էլ լեզուն. մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: Տե՛ս, մի փոքր կրակը որքա՛ն բան է վառում» (Հակ. 3.5):

Սակայն մեր խոսքերը կարող են նաև կառուցող լինել: Առաևինների 16.24-ը մեզ հիշեցնում է. «Բարի խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է նրա քաղցրությունը»: Պողոս առաքյալն ասում է. «Զեր խոսքն ամեն ժամանակ թող շնորհով համեմված լինի, որպեսզի գիտենաք, թե ինչպե՛ս արժան է ձեզ ամեն մեկին պատասխան տալ» (Կող. 4.6): Ինչպես որ աղն է մեր կերակուրին համ տալիս, շնորհն էլ մեր խոսքերին է համ տալիս՝ ուրիշների նորոգության համար:

Սուրբ Հոգու օգնությամբ մեր բառերը կարող են քաջալերել մարդկանց, ովքեր ցավի մեջ են և ցանկանում են իրենց հավատքի մեջ առաջադիմել, կամ ովքեր կարիք ունեն Տիրոջը մոտենալու: Մեր խոսքերը կարող են կրակներ մարել՝ փոխանակ բռնկելու:

Աղոթք - Տե՛ր, միշտ օգնության կարիք ունեմ, երբ խոսում եմ: Այսօր ինձ օգնիր, որ կարողանամ հույսի ու քաջալերանքի խոսքեր ասել մարդկանց նորոգության համար:

Ինչի՞ պիտի նման լինեն մեր բառերն այսօր:

Կարդա՛ր Հակոբոս 3.3-12

Լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: Տե՛ս մի փոքր կրակը որքա՛ն բան է վառում:
Հակ. 3.5

Վազել և հանգստանալ

«Վազողների համար հանգստի օրը կարևոր է» խորագիրը ուշադրությունն ա գրավեց: Միացյալ Նահանգների լեռների վրա վազող խմբի նախկին անդամներից Թոմմի Մանինգը իր հոգևածուծում շեշտեց մի սկզբունք, որ շատ հաճախ մարզիկներն անտեսում են: «Մարմինը վերանորոգելու համար հանգստի կարիք ունի»: Մանինգը գրեց. «Բնականորեն մարզանքի պատճառով կատարվելիք փոփոխությունները պատահում են հանգստի ժամանակ: Հետևաբար սա նշանակում է, որ հանգիստը կարևոր է մարզվելու չափ»:

Նույնն է պարագան մեր հավատքի ու ծառայություն մեջ: Հանգստի հերթական ժամերը կենսական են մեզ աշխույժ ու քաջալիրված պահելու համար: Հիսուսը միշտ ցանկացավ հոգևոր հավասարակշռություն իր կյանքի մեջ, նույնիսկ մեծ պահանջների ժամանակ: Երբ աշակերտները վերադարձան ուսուցանելու ու բժշկելու աշխույժ ծառայությունից հետո, Նա ասաց նրանց. «Դուք առանձին անապատ տեղ գնացեք ու մի քիչ հանգստացեք...» (Մարկոս 6.31) :

Սակայն մեծ խուճուրդը նրանց ետևից գնաց, ու Հիսուսը նրանց սովորեցրեց ու կերակրեց հինգ հացով ու երկու ձկով (Հմ. 32-34): Երբ բոլորը հեռացել էին, Հիսուսը լեռը բարձրացավ աղոթելու (Հմ. 46): Եթե մեր կյանքերը սահմանված են գործով, հետո ինչ որ անում ենք ավելի ու ավելի քիչ ազդեցություն է ունենում: Տեր Հիսուսը հրավիրում է մեզ կանոնավորապես իրեն միանալու լուռ մի տեղ աղոթելու և մի քիչ հանգստանալու համար:

Աղոթք - Տեր Հիսուս, շնորհակալ եմ միայնակ Հորը աղոթելու Քո օրինակի համար: Տուր մեզ իմաստությունն ու հաստատակամությունը՝ հանգիստը նախընտրելի համարելու, երբ Քեզ եմք հետևում:

Մեր հավատքի ու ծառայության մեջ հանգիստը գործի չափ կարևոր է:

Կարդա՛ր Մարկոս 6.30-46

Հիսուսը ասաց նրանց.
«Դուք առանձին անապատ տեղ գնացեք ու մի քիչ հանգստացեք»:
Մարկոս 6.31

Թարմացնող գարնան անձրևներ

Ընդամիջման կարիք ունենալով՝ մոտակա այգի գնացի զբոսնելու: Երբ քայլում էի, ցեխի միջից բուսած կանաչ բույսերը ուշադրությունս գրավեցին, ինչը նոր կյանքի նշան էր: Շուտով դրանք պիտի դառնային գեղեցիկ նարգիզներ՝ ավետելով գարունը և գալիք ջերմ օրերը, բացահայտելով, թե մի ճմեռու ևս ետևում ենք թողել:

Երբ կարդում ենք Օսեեի գիրքը, թվում է՝ չմեղմացող ճմեռ է: Տերը այս մարգարեին տվեց դժվար մի պարտականություն՝ ամուսնանալ անբարո մի կնոջ հետ, իբրև կենդանի պատկեր իր իսրայելցի ժողովրդի՝ Արարչի հանդեպ ունեցած սիրո (1.2-3): Օսեեի կինը՝ Գոմերը, դրժեց իրենց ամուսնական ուխտը, սակայն Օսեեն դարձյալ ետ ընդունեց նրան՝ թախանձելով, որ կինը նվիրումով սիրի իրեն (3.1-3): Տերը նաև փափագում է, որ մենք սիրենք իրեն՝ զորությունով և կատարյալ նվիրումով, որ չի շոգիանում առավտովա մշուշի պես:

Ինչպիսի՞ն է մեր հարաբերությունը Աստծո հետ: Արդյոք իրեն փնտրում ենք միայն դժվարությունն պահին, երբ ուզում ենք պատասխաններ ունենալ մեր նեղությունների մեջ, սակայն մոռանում նրան ուրախության ժամանակ: Իսրայելցիների նման ենք՝ դյուրությունմբ հմայվող մեր ժամանակների կուռքերով, ինչպես զբաղված լինելու, հաջողության և ազդեցության:

Այսօր կրկին մեր անձերը նվիրենք Տիրոջը, որ սիրում է մեզ ու տալիս թարմացնող գարնան անձրևներ՝ ոռոգելու և աճեցնելու մեզ բացվող գարնան ծաղիկները:

Աղոթք - Տեր Յիսուս, դու քո անձը տվիր, որպեսզի մենք ազատ լինենք: Օգնիր մեզ ամբողջ սրտով Քեզ սիրելու:

**Թեև կարող ենք հավատարիմ չլինել Աստծուն, սակայն
Նա երբեք մեզ չի թողնում:**

Կարդա՛ր Օսեե 6.1-4

...նա կգա դեպի մեզ՝ ինչպես վաղ և ուշացած անձրևը՝ դեպի հողը:

Օսեե 6.3

Ինչո՞վ ես հայտնի

Հիշատակի մի կոթող է գտնվում հատուկ գրությունով, սկզբնապես ճապոնական բանտի հողամասի վրա՝ Չինաստանում, որպես Հիշատակություն մի մարդու, որ մահացել էր 1945-ին: Հիշատակի քարի գրությունն այսպես է արձանագրում. «Էրիկ Լեդզելը ծնվել էր Տիանցզինում, 1902-ին, շոտլանդացի ծնողներից: Իր համբավը գագաթնակետին հասավ, երբ իր ոսկի մեդալը շահեց 1924-ի 400 մետր վազքի մրցումին: Նա վերադարձավ Չինաստան՝ աշխատելու համար Տիանցզինում իբրև ուսուցիչ: Նա իր ամբողջ կյանքն անցկացրեց քաջալերելով երիտասարդներին՝ իրենց լավագույն մասնակցությունը բերելու մարզկուլթյան բարօրության համար»:

Շատերի տեսանկյունից Էրիկի մեծագույն հաջողությունը սպորտում է: Սակայն նա նաև հիշվում է Տիանցզինի համար արած դրական գործով, այն երկիրը, ուր ինքը ծնվել ու սիրում էր: Նա ապրեց ու գործեց հավատքով: Մենք ինչի՞ համար պիտի հիշվենք: Մեր կրթական հաջողությունների՞, թե՞ աշխատանքի ասպարեզում մեր ունեցած դիրքի: Կամ էլ նյութական հաջողություններն են պատճառ դառնում, որ մարդիկ մեզ ճանաչեն: Սակայն լուծթյամբ մարդկանց կյանքերի համար մեր արած գործն է, որ երկար ժամանակ պիտի մնա մեզնից հետո:

Մովսեսը հիշվում է Աստվածաշնչի հավատքի գլխի եբրայեցիներ 11-ի մեջ՝ որպես մեկը, որ ընտրում է իրեն՝ դնելու Աստծո ժողովրդի հետ, փոխանակ զվարճանալու Եգիպտոսի դանձերով (Հմ. 26): Նա առաջնորդեց ու ծառայեց Աստծո ժողովրդին հավատքով:

Աղոթք - Յայր, խնդրում եմ սովորեցրու ինձ, թե ինչպես կարելի է ուրիշների կյանքի մեջ փոփոխություն անել, որի համար արժե հիշվել:

Աստծուն հավատարմությունը իսկական հաջողություն է:

Կարդա՛
Եբր. 11.23-28

(Մովսեսը) Քրիստոսի նախատիմքը Եգիպտոսի հարուստ գանձերից ատելի մեծ հարստություն համարեց, որովհետև աչք դրած վարձի հատուցմանն էր նայում: Եբր. 11.26

Յանգիստ պահին օրորվիր

Բարեկամս թույլ տվեց, որ գրկեմ իր չորս օրական նորածինն: Շատ չանցած՝ մանուկը սկսեց անհանգիստ զգալ իմ բազուկների մեջ: Նրան ավելի ամուր գրկեցի, այտս դնելով գլխին՝ սկսեցի օրորել ու փաղաքջանքով մեղմ երգել: Հակառակ բոլոր ջանքերիս ու 15 տարվա ծնողական փորձառությանս՝ չկարողացա նրան հանդարտեցնել: Նա ավելի անհանգիստ դարձավ, ու ստիպված եղա մոր գիրկը վերադարձնել: Վայրկենական խաղաղություն պատեց նրան. լացն ու աղաղակը դադարեց ու հանդարտվեց մոր վստահելի ու ապահով ձեռքերի մեջ: Բարեկամս շատ լավ գիտեր ինչպես բռնել ու թփթփացնել իր մանկանը ու մեղմացնել նրա անհանգստությունը:

Կարդա՛
Եսայի 66.12-16

Ինչպես որ մայրն է գգվում իր մանկանը, այնպես էլ ես պիտի գգվեմ ձեզ...

Ես. 66.13

Ճիշտ մոր նման հոգածու, վստահելի և փութաջան Աստված հանգստացնում է իր զավակներին: Երբ հոգնած ու անտրամադիր ենք, Նա գուրգուրանքով վերցնում է մեզ իր ձեռքերի մեջ: Իբրև մեր Հայր ու Արարիչ՝ Նա մեզ մոտիկից է ճանաչում ու իր կատարյալ խաղաղությունն է պարգևում բոլոր նրանց, ովքեր իրեն են վստահում (Ես. 26.3):

Երբ այս երկրի նեղություններն ու տագնապները ծանր են նստում մեր սրտերի վրա, մենք կարող ենք հանգիստ լինել այն մտածման մեջ, որ Նա, որպես սիրող ծնող, պահպանում է մեզ ու պայքարում մեզ համար:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ հայացքս Քեզ հառելու իմ հանգստության համար ծանր հանգամանքներում:

Աստծո հանգստությունը մեզ կատարելապես հանգստություն է պարգևում:

Նրա սքանչելի դեմքը

Իմ չորս տարեկան որդին լեցուն է հարցերով և շատախոսում է անդադար: Սիրում եմ նրա հետ զրուցել, սակայն դժբախտաբար նա իր մեջքը ինձ դարձնելով խոսելու սովորություն է ձեռք բերել: Շատ հաճախ ասում եմ նրան. «Ձեռ լսում քեզ, ինձ նայիր, երբ խոսում ես»:

Երբեմն մտածում եմ, թե Աստված ուզում է ասել նույն բանը մեզ այսօր. ոչ թե նրա համար, որ մեզ չի լսում, այլ որովհետև մենք խոսում ենք Իր հետ իրականում առանց Իրեն նայելու: Մենք աղոթում ենք, սակայն մնում ենք կլանված մեր հարցերի մեջ ու միայն մեզ վրա կենտրոնացած, մոռանալով Աստծո սերն ու ողորմությունը, որին բարձրացնում ենք մեր աղոթքները: Իմ տղայի նման մենք հարցեր ենք տալիս՝ առանց ուշադրություն դարձնելու Նրան, ում աղոթում ենք:

Մեր մտահոգություններից շատերը փարատվում են, երբ մենք մեզ հիշեցնում ենք, թե ով է Աստված ու ինչ է արել: Պարզապես մեր ուշադրությունը Նրան դարձնելով՝ մենք հանգիստ ենք գտնում Նրա սիրո, ներումի, գերիշխանությունից և շնորհի մեջ:

Սաղմոսերգուն հավատաց, որ մենք պետք է խնդրենք Նրա դեմքը (Սաղմ. 105.4): Երբ Դավիթը առաջնորդներ նշանակեց պաշտամունքի ու աղոթքի համար, նա քաջալերեց ժողովրդին, որ Աստծուն պաշտեն ու պատմեն Նրա անցյալի հավատարմության մասին (Ա. Մնաց. 16.8-27): Երբ մեր աչքերը դարձնենք Աստծո գեղեցիկ դեմքին, մենք կարող ենք զորություն և հանգիստ գտնել, որ մեզ կարող է պահել նույնիսկ չպատասխանված հարցերի մեջ:

Աղոթք - Տե՛ր, թող Քո դեմքի լույսը շողա մեզ վրա:

Աստծո դեմքը խնդրելը կարող է մեր հավատքը գորացնել:

Կարդա՛ր
Ա. Մնաց. 16.8-27

Տիրոջը փնտրեցեք ու հզոր կլինեք, միշտ նրա ներկայությունը փնտրեցեք:

Ա. Մնաց. 16.11

Ոչ նա

Դավիթը գծել էր տաճարի հատակագիծը, ուրվագծել կահույքը և հավաքել նյութերը: Բոլոր հանձնարարականները տվել էր (Ա. Մնաց. 17.11-19): Սակայն առաջին տաճարը, որ կառուցվել է Երուսաղեմում, ծանոթ է որպես Սողոմոնի տաճար, ոչ Դավիթի: Որովհետև Աստված ասել էր. «Դու ինձ համար բնակվելու տուն չպիտի շինես» (Ա. Մնաց. 17.4): Աստված ընտրել էր Դավիթի որդուն՝ Սողոմոնին, տաճարը կառուցելու համար: Դավիթի պատասխանը այս մերժումին օրինակելի է: Դավիթը կենտրոնացավ այն բանի վրա, որ Աստված պիտի անի, ոչ թե նրա, որ ինքը չէր կարող անել (Ա. Մնաց. 17.16-25): Նա պահեց շնորհակալ և երախտապարտ հոգի: Նա արեց ամեն բան, որ կարող էր, ու հավաքեց մարգրիկ, որոնք կարող էին օգնել Սողոմոնի տաճարի շինությունը (Ա. Մնաց. 22):

Աստվածաշնչի մեկնաբան Զ. ՄըքՔոնոլլը գրում է. «Շատ հաճախ մենք պետք է ընդունենք, թե այն գործը, որ մենք ցանկանում ենք անել Քրիստոնեական ծառայություն իմաստով, այն չէ, ինչի համար լավ զինված ենք, և այն չէ, ինչի համար Աստված մեզ կանչել է: Կարող է դա Դավիթի պարագայի նման լինել՝ նախապատրաստական աշխատանք, որ առաջնորդում ու պատրաստում է մեծ բանի»: Դավիթը փնտրեց Աստծո փառքը, ոչ թե իր: Նա հավատարմորեն արեց ամեն ինչ, որ կարող էր անել Աստծո տաճարի համար. նա դրեց հաստատուն հիմքը նրա համար, որ պիտի գար իրենից հետո գործն ավարտին հասցնելու: Մենք էլ նույն կերպ ընդունենք այն պարտականությունները, որոնք Աստված ընտրել է մեզ համար: Կատարենք և ծառայենք Նրան շնորհակալ սրտով:

Աղոթք - Հայր, մենք ուզում ենք մեր հույսը, երազներն ու սիրտը Քո կամքի համաձայն լինեն: Սովորեցրու մեզ փառավորել Քեզ, երբ փորձության ենք ենթարկվում կասկածել Քո բարությանը:

Աստված կարող է ծածկել իր ճամփաների նպատակը, սակայն Նրա ճամփաները աննպատակ չեն:

Կարդա՛ Ա. Մնաց.
17.1-4, 16-25

...այն խոսքը, որ ասացիր... թող հաստատ լինի հավիտյան:

Ա. Մնաց. 14.23

Արևելքը Արևմուտքին է հանդիպում

Երբ Հարավ-Արևելյան Ասիայից աշակերտները Հանդիպեցին Հյուսիսային Ամերիկայից եկած մի ուսուցչի, այցելու դաստիարակից մի դաս սովորեցին: Իր դասարանի աշակերտներին «ճիշտ պատասխանը ընտրելու» առաջին քննությունն հարցարանը երբ տվեց, զարմացավ՝ տեսնելով, որ բազմաթիվ հարցեր մնացել էին անպատասխան: Մինչ ետ էր վերադարձնում ստուգված թղթերը, նա հանձնարարեց, որ հաջորդ անգամ, փոխանակ հարցերն անպատասխան թողնելու, կռահեին այն: Զարմացած աշակերտներից մեկը, ձեռք բարձրացնելով, հարցրեց. «Ի՞նչ կլինի, եթե դիպվածով պատասխանները ճիշտ լինեն: Ես պիտի մտածեի, որ պատասխան ունեմ, բայց իրականում չգիտեմ»: Աշակերտն ու ուսուցիչը տարբեր կարծիքներ և տարբեր ընկալումներ ունեին:

Կարդա՛
Յոն. 14.1-12

Ղու ո՞վ ես, որ ուրիշի
ծառային դատում ես:
Յոն. 14.4

Նոր Կտարակարանի օրերին հրեա և հեթանոս դարձի եկողները Քրիստոսին էին մոտենում տարբեր տեսանկյուններից, տարբեր՝ Արևելքի ու Արևմուտքի պես: Նրանք համամիտ էին որոշ հարցերի շուրջ, ինչպես պաշտամունքի օրերի և Քրիստոսի հետևորդների՝ ի՞նչ ուտելու և չուտելու հետ կապված: Պողոս առաքյալը խնդրում է նրանց՝ հիշելու կարևոր մի հարց, թե ոչ ոք ուրիշի սիրտը կարգալու և դատելու իրավունք չունի:

Համերաշխության համար հավատակից բարեկամների հետ, Աստված թախանձում է մեզ՝ անդրադառնալու, որ մենք բոլորս հաշվետու ենք մեր Տիրոջն ու իր խոսքին ու մեր խղճի համեմատ պիտի վարվենք: Սակայն միայն նա մեր սրտերը քննելու և դատելու իրավունք ունի (Հռոմ. 14.4-7):

Աղոթք - Երկնքում ապրող Հայր, խնդրում եմք ողորմիր մեզ, երբ դատում եմք նրանց, ովքեր մեզնից տարբեր են մտածում ու գործում:

Դանդաղ եղիր ուրիշներին դատելու մեջ, բայց արագ՝ դու քեզ դատելու:

Նկարի տնօրինում

Մեծ շուքով տոնելու համար Ուինսթոն Չերչիլի ութսուներորդ տարեդարձը՝ Բրիտանիայի խորհրդարանը արվեստագետ Գրահամ Սադլերլանդին հանձնարարեց կառավարչի դիմանկարը յուղանկարել: Չերչիլը հարցրեց արվեստագետին. «Ինչպե՞ս պիտի գծագրես ինձ. որպես քերովբե թե՞ գամիո»: Չերչիլը սիրում էր իրեն տրված այս երկու հռչակավոր բնորոշումները: Սակայն Սադլերլանդը ասաց, թե պիտի գծագրի այն, ինչ որ պիտի տեսնի: Չերչիլն ուրախ չէր արդյունքով: Սադլերլանդի յուղանկարը ցույց էր տալիս Չերչիլին՝ իր աթոռի մեջ ընկղմված ու խոժոռ դեմքով. իրական պատկեր, բայց ոչ հաճելի: Պաշտոնական բացումից հետո Չերչիլը պահեց այդ յուղանկարը իր գինիների մառանի մեջ: Տարիներ հետո նկարը գաղտնի ոչնչացվեց:

Կարդա՛
Եսայի 43.1-9
Ուստի թանկ եղար ինձ համար... ու ես սիրեցի քեզ:
Եսայի 43.4

Չերչիլի նման շատերս նկար ունենք մեր անձին նման, որ ուզում ենք ուրիշները տեսնեն, լինի դա հաջողություն, գեղեցիկություն կամ ուժի: Մենք կարող ենք պետք եղածն անել՝ մեր տգեղ մասերը ծածկելու համար: Շատ հնարավոր է, որ խորքի մեջ վախենում ենք, որ չպիտի սիրվենք, եթե մարդիկ իմանան մեր իրական անձը:

Երբ իսրայելցիները գերի տարվեցին Բաբելոն, նրանք երևացին իրենց ամենատգեղ վիճակի մեջ: Իրենց մեղքի պատճառով Աստված թույլ տվեց, որ նրանց թշնամիները պարտություն մատեն նրանց: Սակայն Նա ասաց նրանց, որ վախ չունենան: Նա նրանց ճանաչում էր անուններով, ու նրանց հետ էր ամենից նվաստացուցիչ փորձությունների ժամանակ (Ես. 43.1-2): Նրանք ապահով էին իր ձեռքերի մեջ (Հմ. 13) և արժեքավոր իր համար (Հմ. 4): Հակառակ իրենց տգեղություն՝ Աստված սիրեց նրանց:

Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ ինձ սիրում ես ու ներում իմ մեղքերը Քրիստոսի միջոցով և դարձնում ինձ Քո զավակը: Սրա համար ուրիշների առջև կատարյալ երևալու խորհրդից հրաժարվում եմ:

Աստծո խորը սիրո համար մենք կարող ենք անաչառ լինել ուրիշների հետ:

Բարի պտուղ տալ

Գրավիչ էր տեսարանը ինքնաթիռի պատուհանից. նեղ ու երկար հաստևանացած ցորենի արտեր և կանաչ այգիներ՝ երկու անբերրի բլուրների միջև: Զորի մեջ կար վազող մի գետ, կյանք տվող ջուր, առանց որի բերք չպիտի լիներ:

Ինչպես որ առատ բերքը կախված է գուլալ ջրի աղբյուրից, իմ կյանքում էլ «բերքի» տեսակը - խոսքերս, արարքներս և կեցվածքս - կախված են իմ հոգևոր սնունդից: Սաղմոսերգուն սա նկարագրում է Սաղմոս 1-ի մեջ. «Այն մարդը, որ հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից, ...նա նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամանակին կտա...» (Հմ. 1-3): Եվ Պողոսը գրում է Գաղատացիների 5-րդ գլխում, թե նրանք, ովքեր Հոգու համեմատ են քայլում, կոչված են բերք տալու և ունենալու մի կյանք՝ լեցուն «սիրով, ուրախությունով, խաղաղությունով, համբերատարությամբ, քաղցրությունով, բարությամբ, հավատարմությամբ, հեզությամբ, ժուժկալությամբ» (Հմ. 22-23):

Երբեմն իմ կարծիքը հանգամանքների առումով դառն է լինում, կամ խոսքերս ու արարքներս մշտապես լինում են անազնիվ: Բարի պտուղ չկա, և ես նկատում եմ, թե լուությամբ Աստծո ներկայությամբ կանգնելով ժամանակ չեմ անցկացրել Նրա հետ: Սակայն երբ իմ ամենօրյա կյանքը արմատավորված լինի Աստծուն ապավինելով, այն ժամանակ բարի պտուղ կտամ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք քո՝ թանկագին կյանք տվող խոսքիդ համար: Օգնիր մեզ, որ հաստատ կերպով արմատացած լինենք նրա մեջ, և նա թող լինի մեր ամենօրյա գորության ու քաջալերանքի աղբյուրը:

Աստծո Հոգին ապրում է իր ժողովրդի մեջ, որպեսզի Նրա միջոցով գործենք:

**Կարդա՛ր
Սաղմոս 1.1-3**

Նա նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամանակին կտա...
Սաղմոս 1.3

Կրակով փորձված

Անցյալ ճմեռ, երբ այցելեցի բնության պատմության թանգարան Կոլորադոյում, սովորեցի մի շարք զարմանալի իրողություններ բարդիների մասին: Ամբողջ մի պուրակ վտիտ ու ճերմակ բներով բարդիներ կարող են աճել մի հատիկից և ունենալ նույն արմատների ցանցը: Այս արմատների ցանցը կարող է գոյատևել հազարավոր տարիներ՝ ծառ տա կամ ոչ: Նրանք քնում են գետնի տակ՝ սպասելով հրդեհի կամ հեղեղի՝ տեղ բացելու համար իրենց անտառի մեջ: Բնական մի աղետ հողը մաքրում է, և բարդու արմատները զգում են արևը, ու այս արմատները նորատունկ ծառեր են տալիս, որոնք հետո հսկա ծառերի են վերածվում:

Բարդիների համար նոր աճը հնարավոր է դառնում քանդիչ բնական աղետների միջոցով: Հակոբոսը գրում է, թե մեր առաջընթացը հավատքի մեջ հնարավոր է լինում նաև դժվարություններով: «Լիովին ուրախություն համարե՛ք, եղբայրնե՛ր, երբ պես-պես փորձանքների մեջ ընկնեք՝ իմանալով, որ ձեր հավատի փորձելը համբերություն է առաջացնում: Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որպեսզի կատարյալ ու ամբողջ լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հակ. 1.2-4): Դժվար է ուրախ լինել փորձությունների ժամանակ, սակայն կարող ենք հույս ունենալ այն իրողությունից, թե Աստված այդ դժվար պարագաները պիտի գործածի մեզ հասունության հասցնելու: Բարդու ծառերի նման հավատքը կարող է աճել ժամանակի ընթացքում, երբ դժվարությունը հնարավորություն է բացում մեր սրտի մեջ, որ Աստծո լույսը մեզ հասնի:

Աղոթք - Շնորհակալ եմք, Աստված, փորձությունների ժամանակ մեզ հետ լինելուդ և դժվար իրադրություններում Քո օգնությանն ապավինելու համար:

Կարդա՛ Յակոբոս 1.1-12

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև եթե փորձվելով ընտիր գտնվի, կյանքի պսակը կստանա:

Յակ. 1-12

Փորձություններն ու քնությունները մեզ կարող են քրիստոսին ավելի մոտեցնել:

Կյանք և մահ

Երբեք չպիտի մոռանամ բարեկամիս եղբոր մահվան սնարի մոտ սովորական տեսարանը՝ արտասովորի հետ միախառնված: Երեքս խոսում էինք ցածրաձայն, երբ նկատեցինք, որ Ռիչարդի շնչառությունը ավելի դժվար էր դառնում: Նրա շուրջը հավաքվեցինք՝ նայելով, սպասելով և աղոթելով: Երբ վերջին շունչն առավ, զգացինք մեր ունեցած այդ սուրբ պահը: Աստծո ներկայությունն զգացինք մեր արցունքների միջից մի հիանալի մարդու համար, որ մեռնում էր քառասուն տարեկանում:

Մեր հավատքի հերոսներից շատերը Աստծուն հավատարմության փորձառությունն ունեցան, երբ մահացան: Օրինակ՝ Հակոբը հայտարարեց, թե ինքը շուտով «գնում է իր նախնիների գերկը» (Ծննդ. 49:29-32): Հակոբի որդին՝ Հովսեփը նույնպես հայտարարեց իր մոտալուտ մահը, մինչ իր եղբայրներին ցուցումներ էր տալիս հաստատ մնալ իրենց հավատքի մեջ՝ ասելով. «Ահա ես մեռնում եմ»: Նա թվում է, թե խաղաղության մեջ է, միաժամանակ ցանկություն է լեցուն, որ իր եղբայրները վստահեն Տիրոջը (հմ. 50.24):

Մեզնից ոչ ոք չգիտի, թե երբ և ինչպես է առնելու իր վերջին շունչը, սակայն մենք կարող ենք Աստծուց խնդրել, որ մեզ օգնի վստահ լինել, թե Նա մեզ հետ պիտի լինի: Կարող ենք հավատալ այն խոստումին, որ Քրիստոսը պիտի տեղ պատրաստի մեզ համար Իր Հոր տան մեջ (Հովհ. 14.2-3):

Աղոթք - Տե՛ր Աստված, Քո բնակության տեղը Քո ժողովրդի հետ պիտի լինի, և Դու պետք է լինես մեր Աստվածը ու պիտի սրբես մեր աչքերից արցունքները:

Տերը երբեք մեզ չպիտի լքի, հատկապես մեր մահվան պահին:

Կարդա՛
Ծննդոց 5.22-26

Ահա ես մեռնում եմ:
Աստված թող այցելի
ձեզ:

Ծննդ. 50.24

Մեծագույն հրավերը

Անցյալ շաբաթվա ընթացքում ստացա զանազան հրավերներ Կփոստի միջոցով: Հրավերներ՝ թոշակի գնալու, գույքի և կյանքի ապահովագրության «ձրի» արագացված դասընթացների, որոնք անտեսեցի: Սակայն մի հին բարեկամ պատվելու հավաքույթի հրավերին արագ պատասխանեցի՝ ասելով. «Այո՛: Ընդունում եմ հրավերը»: Հրավերին գումարած Ցանկություն հավասար է Ընդունելու:

Եսայի 55.1-ը Աստվածաշնչի մեջ տրված մեծագույն հրավերներից մեկն է: Տերը ասաց Իր ժողովրդին, որ դժվար իրավիճակի մեջ էր. «Ո՛վ դուք, որ ծառաված եք, գնացե՛ք ջրի, և դուք, որ բուլորովին արծաթ չունեք, գնացեք գնեցե՛ք և կերե՛ք...»: Սա Աստծո զարմանալի առաջարկն է ներքին սնուցումի,

խորը հոգևոր գոհացումի և հավիտենական կյանքի (Հմ. 2-3):

Հիսուսի հրավերը կրկնվում է Աստվածաշնչի վերջին գլխում «Եվ Հոգին ու հարսն ասում են. «Ե՛կ»: Եվ լսողն էլ կասի. «Ե՛կ: Նա, ով ծարավ է, թող գա, և նա, ով կամենում է, թող կյանքի ջուրը ձրի առնի» (Հայտ. 22.17):

Մենք հաճախ ենք մտածում, թե հավիտենական կյանքը սկսվում է, երբ մենք մեռնում ենք: Իրականում դա սկսվում է, երբ ընդունում ենք Հիսուս Քրիստոսին որպես մեր Տեր և Փրկիչ:

Աստծո հրավերը հավիտենական կյանք գտնելու համար Նրա մեծագույն հրավերն է բոլոր այլ հրավերներից: Հրավերին գումարած Ցանկություն հավասար է Ընդունելու:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ ողորմության, ներումի և հավիտենական կյանքի Քո տված խոստումի համար: Գիտակցում եմ իմ ձախողությունները և ընդունում Հիսուսին որպես իմ Փրկիչն այսօր:

Երբ ընդունում եմք Հիսուսի հրավերը Իրեն հետևելու, մեր ամբողջ կյանքն իր ուղղությունը փոխում է:

Կարդա՛ Եսայի 55.1-7

Ո՛վ դուք, որ ծառաված եք, գնացե՛ք ջրի, և դուք, որ բուլորովին արծաթ չունեք, գնացե՛ք գնեցե՛ք ու կերե՛ք առանց արծաթի:

Ես. 55.1

Նյութերի ցանկ

Աղոթք	Հուն. 7,12,27, մարտի 24
Անճնասպանություն	Հուն. 17
Աշակերտություն	Հուն. 15
Աստված, վարդապետություն ..	Հուն.վ.20, փետր.19,22, մարտի 7
Աստծու գորությունը	Հուն. 25
Աստծու հետ հարաբերություն	Մարտի 10
Աստծու հոգածությունը	Հուն. 12,13,22,25, փետ. 1, մարտի 3,16,17
Աստծու սերը	Հուն. 28, փետ. 3,8,10,14, մարտի 4,6,14,21,23,27
Աստծուն սպասել	Հուն. 3, մարտի 25
Աստծու վստահությունը	Հուն. 8,16,20,21,23 փետր.6,10,11,17,20,24,25, մարտի 11,22
Ավետարանչություն	Հուն. 19, փետ. 21
Բարեկամություն	Փետ. 8, մարտի 18
Դրախտ	Հուն. 9
Ընկնել	Հուն. 31
Ինքնապատկեր	Մարտի 27
Ծառայել ուրիշներին	Հուն. 15,18,27, փետ. 12, մարտի 12
Ծնունդ	Հուն.վ. 5,6
Կասկած	Փետ. 13
Կարեկցություն	Հուն. 10
Կսկիծ	Փետ. 24, մարտի 3
Հանգիստ	Հուն. 8, մարտի 20
Հավատք	Հուն. 14, Մարտի 22
Հավատքի պատմություններ	Մարտի 15
Հավիտենական կյանք	Հուն. 29, մարտի 31
Հեզություն	Մարտի 17
Հյուրասիրություն	Մարտի 5

Հոգեկան նվերներ.....	Հուն. 21, մարտի 12
Հոգեկան բարեփոխություն.....	Հուն. 11, 26,30
Հոգևոր աճ.....	Փետր. 11, մարտի 29
Հոգու պտուղը.....	Մարտի 28
Հույս.....	Հուն. 3,17,30, փետ. 18,20,24
Մահ.....	Մարտի 30
Մարդկային բնավորություն.....	Հուն. 26
Մեղք.....	Հուն. 26,31, մարտի 9
Մեղքերի թողություն.....	Փետ. 9,15,22,27, մարտի 9
Միություն.....	Մարտի 26
Մտահոգություն.....	Հուն. 3, փետր. 17
Նպատակ.....	Հուն. 24
Շնորհակալություն.....	Հուն. 1, փետր. 4
Ուրիշներին դատել.....	Մարտի 26
Պաշտամունք.....	Փետր. 5, Մարտի 1
Սեր Աստծու հանդեպ.....	Հուն. 2, մարտի 21
Սեր մարդկանց հանդեպ.....	Հուն. 4, փետ. 12, մարտի 6
Սուրբ Հոգի.....	Մարտի 19
Վախ.....	Հուն. 16
Վարդանանց.....	Փետր. 23
Տալ.....	Փետր. 12
Տանջանք.....	Հուն. 3,11,13,14,15,16, փետր. 4,6,18
Փրկություն.....	Հուն. 31, փետր. 19,22,26,17,28, մարտի 10,31
Քրիստոս Փրկիչ.....	Հուն. 17,22, փետր. 9,18,26, մարտի 3
Քրիստոսի Աստվածությունը.....	Հուն. 29, մարտի 2
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 2,22, փետր. 2,25
Քրիստոսի մահը.....	Հուն. 22, մարտի 1,3
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 10, մարտի 8,13,19

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ, եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով՝

*Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am*

*Արցախի Հանրապետություն
ք. Ստեփանակերտ
Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (374) 94 52 75; 95 02 95*

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ԲԱՄԱՐ

Հարգելի՛ բարեկամ

Սույն գրքույկում Աստվածաշնչի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի Աստվա-ծաշնչային ընկերության հրատարակած արևելահայերեն թարգմանությունից (2007 թ.), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավե-տարանական եկեղեցիների միության և Հայաս-տանի Աստվածաշնչային ընկերության հրատարա-կած Նոր Կտակարանից (2003 թ.):

Շապիկի առաջին էջին՝ Գոշավանք. Գոշավանքը միջնա-դարյան վանական համալիր է. XII–XIII դարերում եղել է հոգևոր ու մշակութային խոշոր կենտրոն: Գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղում՝ Գետիկ գետի աջ ափին:

Գոշավանք (Նոր Գետիկ վանք) անունը ստացել է 1213 թվականին՝ Մխիթար Գոշի պատվին, ով 1188-ին իշխան Իվանե Ջաքարյանի աջակցությամբ հիմնադրել է վանքը: Այն ունեցել է վարժարան, համալսարան ու ճեմարան, վանքում նաև ընդօ-րինակվել, գրվել և պահվել են բազմաթիվ ձեռագրեր:

Ըստ որոշ աղբյուրների Մխիթարն ու իր հետևորդները սկսել են վանքի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու շինարարությունը, հետո՝ 1191-ին, Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը: Գոշավանքի տարածքում կան գերեզմաններ, խաչքարեր մատուռներ: Վանական համալիրը հայ ճարտարապետական մտքի և շինարա-րական արվեստի նշանավոր օրինակներից մեկն է: Մեզ են հասել շինարարական վարպետներից երեքի անուն-ները՝ ճարտարապետ Մխիթար Հյուսնի, նրա աշակերտ Հովհաննեսի և անզուգական քարագործ վարպետ Պողոսի, որի ձեռագործ աշխատանքներից է Գոշավանքի նշանավոր խաչքարը: 1937-1978 թթ. Վանահամալիրի տարածքում կատարվել են մի շարք արեկարգություններ: (encyclopedia.am եւ armenianheritage.org)

Լուսնկարը՝ Արրահամ Բալաբանյանի
երևան



Գրքույկը ստանալու համար դիմել
Ամերիկայի Հայ Ավետարանչական
ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Էլկայք՝ www.amaa.am